3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021 ՈՒՐԲԱԹ 45(5685)

# Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Օմիկրոնն արդեն Եվրոպայում, ԱՄՆ-ում է

**Չորեքշաբթի հայտնի դարձավ , որ կորոնավիրուսի Օմիկրոն տեսակը Հարավային Աֆրիկայից թափանցել է նաեւ Կալիֆորնիա, ինչը պատճառ է դարձել, որ ԱՄՆ-ը բոլոր քաղաքացիների համար խստացնի մուտքի համար պարտադիր թեստի պայմանները: Մեկուսացված վարակակիրը նոյեմբերի 22-ին է Հարավային Աֆրիկայից ժամանել ԱՄՆ, պատվաստված է եղել եւ հիվանդությունը թեթեւ է տանում, հաղորդում է n-tv՝ հղում անելով երկրի առողջապահության գերատեսչության տեղեկությանը: Անցյալ հինգշաբթի Հարավային Աֆրիկան իրազեկել էր իր երկրում հայտնաբերված Օմիկրոն նոր տեսակի մասին, աշխարհն էլ սահմանափակել էր այդ երկիր մուտքն ու ելքը, բայց՝ մասնագետները համոզված էին, որ վարակի նոր տեսակը ժամանակի ընթացքում կհասնի տարբեր անկյուններ: Երեկ հայտնի դարձավ, որ վարակակիր կա նաեւ Բեռլինում, Եվրոպայի մի շարք քաղաքներում: Մեծ Բրիտանիայի աշխատանքի նախարարն այդ առիթով հայտարարեց՝ «մի՛ համբուրվեք նրանց հետ, ում չեք ճանաչում»: Նախարարի հորդորը դարձավ մեդիայի քննարկման նյութ: Վարակաբանները հաստատում են, որ կորոնավիրուսի հիշյալ տեսակը նախորդների համեմատ առավել արագ է փոխանցվում: Իսկ թե Օմիկրոնն առավե՞լ վտանգավոր տեսակ է, դեռ ուսումնասիրում են:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## «Վերջը ի՞նչ ա լինելու»

Սովորական, շարքային քաղաքացու ամենօրյա, ամենժամյա հարցը՝ «վերջը ի՞նչ ա լինելու», տալիս են բոլոր՝ քիչ թե շատ հայտնի, երեւելի մարդկանց, երբեմն իսկապես պատասխան ստանալու ակնկալությամբ, երբեմն՝ հենց այնպես, առանց որեւէ ակնկալության, երբեմն էլ՝ պարզապես իրավիճակի մտահոգիչ լինելը հաստատելու մղումով: Ոչ ոք չի ակնկալում համոզիչ, էլ ո՜ւր մնաց սպառիչ պատասխան: Պարզապես չկա այն. ուրիշներն են որոշում մեր երկրի ճակատագիրը, եւ այդ ուրիշները հաճախ լավ բան չեն որոշել մեզ համար, նույնիսկ եթե այդ ուրիշներից մեկը Ռուսաստանն է: Վկա՝ պատմությունը: Մեր երկիրը միշտ էլ կանգնել է, ֆրանսերեն դիվանագիտական արտահայտությամբ՝ fait accomple-ների, կատարված փաստի առաջ: Հաճախ՝ դառն, երբեմն՝ շա՛տ դառն:

Սոչիում նոյեմբերի 26-ի եռակողմ հանդիպումից Ռուսաստանը գոհ էր մնացել, Ադրբեջանը՝ նույնպես: Գոհ էր մնացել նաեւ Հայաստանը, եթե հավատալու լինենք Նիկոլ Փաշինյանի խոսքին: Հարցնող լինի՝ դո՞ւ ինչու ես գոհ. սահմանազատման եւ սահմանագծման գործընթացն սկսելու արտոնություն ստացած լինելու համա՞ր, մի գործընթաց՝ որը Ալիեւը ձեռնարկել է վաղուց, եւ փոխ առնելով մեր Արտաշես արքայի՝ «Սահման քաջաց՝ զէնն իւրեանց» սկզբունքը՝ վերցրել է արդեն Գորիս-Կապան ճանապարհը եւ շուրջ 40 կմ մխրճվել մեր տարածքներից ներս: Միակողմանի սահմանազատումը, ավելի ճիշտ՝ սահմանախլումը, սկսվել է վաղուց, մինչդեռ սահմանագծումը, հակառակ՝ այսպես կոչված «աշխատանքային խմբերի» կազմությանը եւ ունեցած հանդիպումներին, շարունակվելու է անվերջ, հակառակ քպ-ականների հորթային հրճվանքի:

Հարցնող լինի՝ այդքան ե՞նք կուրացել, որ չենք տեսնում, որ սահմանազատում կոչվածը մեզ զատում, անջատում, հեռացնում է Արցախից, եւ գալու է այն օրը, եթե արդեն չի եկել, որ Լաչինով ոչ թե միջանցք, այլ դեպի Ստեփանակերտ մեզ մի կածան անգամ «շնորհելը» Բաքուն սակարկելու է Սյունիքով իրեն միջանցք զիջելու դիմաց:

Վերջը ի՞նչ ա լինելու:

Հարցի պատասխանը գուցե ադրբեջանցիք գիտեն, որ նոյեմբեր 26-ի եռակողմ հանդիպման ավարտին հայտարարեցին, որ միջանցքների հարցը լուծված է արդեն, որքան էլ որ Նիկոլ Փաշինյանն ու նրա թիմակիցները պնդեն, թե Հայաստանը միջանցք չի տրամադրելու, այլ՝ ընդամենը հաղորդակցման կամ ուղեւորաբեռնատեղափոխման ուղիներ՝ իր գերիշխան վերահսկողության ներքո, որին որպես ապացույց շեփորում են սեփական անցակետ-մաքսակետ դնելու ծրագիրը: Ուրեմն կարելի է հարցը ուղղել իշխանականներին. ի՞նչ դժվար բան է տրամադրվող ուղին կամ ճանապարհը լայնահուն միջանցքի վերածելը, եթե մեր զինվորը չի պաշտպանելու դրա յուրաքանչյուր սանտիմետրը: Եվս մեկ հարց՝ ի՞նչ սահմանազատում եւ առավել եւս՝ սահմանագծում, երբ հաստատված չէ խաղաղություն, տեւական խաղաղություն:

Այո, վերջը ի՞նչ է լինելու:

Ո՞ւմ հավատալ. մեր իշխանությա՞նը, որ միշտ ստում է, իսկ Բաքուն՝ միշտ խաբում: Միգուցե ռուսների՞ն, որոնք առայժմ գոհ են, որ պաշտոնապես տակավին ոչ ոք հարց չի տալիս իրենց, թե տարածաշրջանում ու հատկապես Արցախում ի՞նչ գործ ունեն նրանց զորքերը, ո՞ր եւ ո՞ւմ խաղաղությունն են պահպանում, ի՞նչ հանգամանքով, երբ ըստ Ալիեւի՝ այլեւս գոյություն չունի Արցախի հարց:

Հավատա՞նք Շառլ Միշելին, ավելի շուտ՝ Մինսկի խմբի եռանախագահներին, որոնց համար է, ըստ երեւույթին, Փաշինյանը պահել Արցախի հարցը, դատելով Սոչիի հանդիպման փաստաթղթից, որտեղ ոչինչ չկա այդ մասին: Առաջիկա դեկտեմբերի 15-ին ի՞նչ են անելու նրանք, ավելի կոնկրետ՝ նրանցից երկուսը՝ ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան, արդյոք ընդունելո՞ւ են Պուտինի պատրաստած fait accompli-ն, թե՞ սողանցքներ են գտնելու Ստեփանակերտին մոտենալու, նկատի ունեմ՝ կարգավիճակ-մարգավիճակ քննարկելու, ինչ-որ կերպ խցկվելու ռուսական խաղաղապահության բավիղներում եւ «վերջին խոսքի» իրավունք կորզելու, անշուշտ՝ միշտ մեր հաշվին: Ու երեւակայել, որ ոմանք դեռ հույս ունեն շրջված տեսնելու մեր երկրի դժխեմ կացությունը:

Իսկապես, վերջը ի՞նչ ա լինելու:

Այնքան ժամանակ, քանի դեռ, 1988-ի օրինակով եւ համազգային տարողությամբ չենք միավորվել, չենք բանաձեւել մեր ազգային-պետական պահանջները, քանի դեռ սահմանում կանգնած մեր զինվորը, նորակոչիկ, պայմանագրային թե կամավոր, չգիտի՝ ինչո՞ւ է կանգնել սահմանին ու չգիտի՝ թշնամի զինվորին ու հրոսակին ի՞նչպես պիտի դիմավորի եւ ո՞ւր պիտի թաքցնի հրացանը, քանի դեռ ներկա ապիկար եւ գաղափարազուրկ իշխանությունը շարունակում է իշխանություն լինելու իմիտացիա ստեղծել եւ շատերի կողմից հանդուրժվել, ու քանի դեռ ընդդիմություն կոչվողները չգիտեն՝ ինչը ինչից առաջ է եւ ինչու-ն ավելի կարեւոր է քան ինչպեսը, ապա ոչ ոք չի կարող պատասխանել մեր շարքային քաղաքացուն եւ սփյուռքահայ մեր հայրենակցին:

Իսկապես, ի՞նչ ա լինելու վերջը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Հակոտնյա առաջարկների խաչուղում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Չեք պատկերացնում՝ որքան հայեր չեն կարողանում նորմալ առօրյայով ապրել, քանի որ պատերազմն ու ապագայի անորոշությունը նրանց անհանգստություններին օրեցօր նոր երանգներ են ավելացնում: Չեք պատկերացնում, թե շատ-շատերի համար որքան անհետաքրքիր են ՏԻՄ ընտրություններն ու ԱԺ հանձնաժողովի նախագահի տեղակալի 14-րդ անգամ ընտրության փորձը՝այդ անհանգստությունների համեմատ:




Թվում էր՝ այս պայմաններում ամենակարեւոր բանը պետք է լիներ հանրությանը ներկայացնել բոլոր այն պատկերացումները, որոնք պետք է ուղղվեն ներկա իրավիճակից նվազագույն կորուստներով ելքերին: Ու ոչ թե ողջ քաղաքական եւ մեդիա խոսույթը լցոնված լիներ միմյանց անվանարկելու ինքնամոռաց ջանքերով: Հանրությունը, անգամ հին ու նորաստեղծ քաղաքական ուժերը, նրանց հայտարարություններին եւ հարցազրույցներին որ հետեւում ես, դույզն -ինչ պատկերացում չունեն, թե ինչ է կատարվում Հայաստանի շուրջ, որո՞նք են այս պահի իրական-շոշափվող սպառնալիքները, ինչու Բրյուսելի հանդիպումից առաջ տեղի ունեցավ Սոչիի հանդիպումը, որտեղ մազից պրծանք՝ իրավական հենք չունեցող եռակողմ հայտարարություններին չհաջորդեց արդեն միջազգային պայմանագրի ուժ ունեցող եռակողմ կամ երկկողմ թուղթ: Ի դեպ՝ չենք էլ պրծել, դեռ չի բացառվում մինչեւ դեկտեմբերի 15-ը այդպիսի թուղթ չի ստորագրվի ինչ-որ ձեւաչափում՝ ավելորդ ու անիմաստ դարձնելով բրյուսելյան հանդիպումը, եթե նկատի առնենք, թե դեռ ինչեր են պայմանավորվել նոյմբերի 2-ին Ստոկհոլմում հանդիպած Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները...

Ո՞վ պետք է ոչ թե մոլորեցնի հանրությանը, զբաղեցնի լոկալ բողոքի ցույցերով ու զանազան շուներով, այլ իրոք բացատրի իրերի դրությունը գոնե ոչ պաշտոնապես, եթե պաշտոնապես դա հնարավոր չէ անել:

Իհարկե՝ նա՛խ քաղաքական ուժերը: Կա՞ հայ հանրության մեջ այդպիսի ակնկալիք քաղաքական ուժերից, վստահություն, որ նրանք իրոք գիտեն՝ ի՞նչ է կատարվում, եւ իրոք ցանկություն ունեն իրազեկելու հայ մարդկանց այդ մասին, որ տարբեր անկատ գործողություններով մարդկանց չեն շեղում վտանգը տեսնելուց, խոչընդոտում նոր, առողջ ուժերի ձեւավորմանը: Որ նրանք չեն մնա անցյալի եւ ներկայի կլիշեներում (որ էլ ավելի վատ է՝ միայն իշխանությունը պահելու կամ իշխանության հասնելու նպատակի ծիրում), եւ ի վերջո կգտնվե՞ն այն շերտերը, որոնք ոչ թե կաշխատեն՝ հանրության տրամադրություններով ձեռնածություն անելով հանուն իրենց նպատակների, այլ նույն հանրությանը կպատրաստեն՝ Հայաստանի ապագան փրկելու, ելքի ճիշտ նպատակը սպասարկելով:

⇨3

## ԷԿՕ-ի գագաթաժողովը Հարավային Կովկասին վերաբերող հարցերի քննարկման հարթա՞կ

*Իրանի նախագահ. «Տարածաշրջանի քաղաքական աշխարհագրության որեւէ փոփոխություն կհանգեցնի հետագա լարվածության էսկալացիայի»*

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Իրանի նախագահ **Էբրահիմ Ռայիսին** Տաջիկստանից հետո, արտասահմանյան երկրորդ այցելությունն իրականացրեց դարձյալ Միջին Ասիայի ուղղությամբ, այս անգամ՝ Թուրքմենստանի նախագահ **Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի** հրավերով նոյեմբերի 28-ին Աշխաբադում անցկացված Տնտեսական համագործակցության կազմակերպության՝ ԷԿՕ-ի 15-րդ գագաթաժողովին մասնակցելու համար:

Թուրքմենստանի մայրաքաղաքում անցկացվող միջոցառմանն Իրանի նախագահի ելույթի՝ Հարավային Կովկասին ու «միջանցքային տրամաբանությանը» վերաբերող հատվածը, միջազգային հանրությունից բացի, հասցեագրված էր նաեւ կազմակերպության անդամի կարգավիճակով գագաթաժողովին մասնակցող թուրք եւ ադրբեջանցի գործընկերներին: Քանի որ միջազգային հարթակներում «մեկ ազգ, երկու պետություն» նշանաբանով հանդես եկող Էրդողան-Ալիեւ զույգն իրենց ելույթների ծանրակշիռ մասը ձոնել էին պանթուրանիզմի քարքարոտ ճանապարհը հարթող «միջանցքային» թեմաներին, մերթ գոհունակություն հայտնելով հարցի դրական հանգուցալուծման, մերթ հուսադրող հեռանկարի կապակցությամբ:

Իսկ ԻԻՀ նախագահ Ռայիսին, անդրադառնալով տարածաշրջանային ավանդական ճանապարհներին եւ ուղեւորաբեռնափոխադրումների համար նպաստավոր պայմանների ապահովմանը, համոզմունք հայտնեց, որ տարածաշրջանի քաղաքական աշխարհագրության որեւէ փոփոխություն ո՛չ միայն չի նպաստի տարածաշրջանի կայունությանն ու անվտանգությանը, այլեւ կարող է հանգեցնել հետագա լարվածության էսկալացիայի:

⇨2

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Սուրիա-Լիբանան երէկ եւ այսօր

**Սուրիացիին համար Լիբանանը այնքան հարազատ է, որքան եղբայրներ հարազատը կ՚ըլլան, իրարու ուրախութեամբ կ՚ուրախնան եւ իրարու ցաւով կը ցաւին, այն աստիճան, որ երկու երկիրներն ալ երկար տասնամեակներ փոխադարձ դեսպանատուներ չունէին: Այսպէս եղած է միշտ. չկայ սուրիացի մը, մասնաւորաբար սուրիահայ մը, որ հարազատ մը, ընկեր մը, բարեկամ մը չունենայ Լիբանանի մէջ:**

**Սակայն, եղբայրակցութիւնը ուրիշ բան է, քաղաքականութիւնը՝ ուրիշ: Սահմանազատեցին, տասնամեակներով դժուարացուցին մէկ երկրէն միւսը երթեւեկութիւնը: Կը յիշեմ այն տարիները, ուր վիզա խնդրելու պէս, ժամերով շարքի կը կենային քաղաքական գրասենեակի մը առջեւ՝ Լիբանան երթալու արտօնութիւն ձեռք ձգելու համար. երբեմն կը ստանային, երբեմն կը մերժուէին:**

**Իսկ երկու երկիրներու սահմաններուն մաքսատուները ուղղակի մէկական փորձանք էին, յատկապէս լիբանանեան ապահովութեան պաշտօնեաներու ծուռերես վերաբերմունքը սուրիացիներուն նկատմամբ, ոչ միայն ծուռերեսութիւն, այլեւ արհամարհանք, չկամութիւն... Միւս կողմէ ալ Լիբանանէն Սուրիա եկողներուն չարչարանքը սուրիական մաքսատան մէջ: Սուրիացի պաշտօնեաներուն մաքս գանձելու տարօրինակ մոլուցք էր, Պէյրութէն գնուած ամենայետին նոր ապրանքի մը համար, ըլլար ան հագուստեղէն, ուտեստեղէն, կամ տնային առարկայ:**

**Թէեւ ցաւով կը յիշատակենք անցեալի օրերը, սակայն ներկայիս ալ վիճակը շատ տարբեր չէ՝ սեղմումներ, անհանդուրժողութիւն, արհամարհանք ու թշնամանք, եւ ինչո՞ւ համար, եթէ հին օրերուն յղփացած լիբանանցիին վերէն նայուածքն էր «գիւղացի» սուրիացիին, այսօր՝ լիբանանեան քաղաքացիական պատերազմին վերջ տալու համար Սուրիոյ «ներխուժման» բանակին ձգած հետքերն են, որոնք ամբողջ 15 տարի՝ (1975-1990) չմարսուեցան տեղացիներուն կողմէ, ուր Սուրիան էր «իշխողը», իսկ «հպարտ» լիբանանցին ակամայ հնազանդողն էր:**

**Արդէն երեք տասնամեակ անցած է այդ թուականէն, կ՚ակնկալուէր որ երկու երկիրներն ալ թօթափած ըլլային հին օրերու ստուերոտ տրամադրութիւնները, սակայն Սուրիան պատուհասուեցաւ տակաւին վերջ չգտած տասնամեայ պատերազմով: Աժանութեան, առատութեան, ապահովութեան այդ երկիրը այսօր կը տառապի տնտեսական ճգնաժամի դժոխային ահաւոր կացութեան պատճառով:**

**Լիբանանն ալ այսօր կը տուայտի տնտեսական ահաւոր տագնապին պատճառով, թէեւ պատերազմական վիճակ չկայ այնտեղ, բայց կան «թաքնուած ականներ», կան իշխող ոյժեր, , քաղաքական հակամարտութիւններ, որոնք պատերազմէն պակաս վնաս չհասցուցին երկրին: Շուկայի վրայ որեւէ ապրանքի (եթէ գտնուի) գինը արդէն տասնապատկուած ու քսանապատկուած է: Ժողովուրդը կիսասնանկ, անապահով վիճակի մէջ է, դրամատուները սեղմած են կոկորդը ժողովուրդին, որ սկսած է շնչահեղձ ըլլալ:**

**Պատկերացուցէք, հաց եթէ պիտի գնես, տոպրակին համար առանձին 1500 լիրա պիտի վճարես, տոպրակին բերանի կապին համար ալ՝ առանձին, երբ այդ գումարով առաջ 3 տոպրակ հաց կարելի էր գնել: Կազային ըմպելիք՝ քոլա կամ այլ, եթէ պիտի խմես, խողովակիկի գինը առանձին վճարելու ես՝ 600 լիրա: Անհաւատալի, բայց իրաւ:**

**Ու հարց կու տաս՝ ի՞նչ պիտի ըլլայ ասոր վերջը, իրերայաջորդ կառավարութիւնները բան մը չկրցան փոխել: Կ՚ըսեն՝ մեծ թնճուկ մըն է, սովորական լուծելի հարց մը չէ: Միլիառաւոր տոլարներու պարտք ունի Լիբանանը, գողցողը գողցեր է, երկիրն ալ սնանկացեր: Հեռատեսիլէն հարցազրոյցի մը ընթացքին լիբանանցի մտաւորական մը կ՚ըսէր՝ այն մարդը, որ իր թալանած դրամներով Լիբանանի ամենահարուստ մարդը դարձած է, բերին վարչապետ ըրին, ի՞նչ կը յուսաք դեռ...**

**Կ՚ըսեն, այս թնճուկին միակ լուծումը՝ կէս միլիոն պաղեստինցիներուն կամ մէկուկէս միլիոն սուրիացի գաղթականներուն լիբանանեան քաղաքացիութիւն շնորհելն է, եղեր այն ատեն պարտքերը կը ջնջուին... Ես տրամաբանական կապ մը չգտայ հարցին ու լուծումին մէջ: Լիբանանի հարցերէն ո՞վ բան կը հասկնայ որ:**

**Ու, եղբայր կարծուած երկու երկիրները այսօր ճակատագրակից, դժբախտակից դարձած՝ հրաշքներու կը սպասեն:**

*Իրանական օրագիր*

# Պատժամիջոցների չեղարկումը բանակցությունների օրակարգում

Մերձավորարեւելյան տարածաշրջանում միջուկային ծրագրերի մասշտաբայնացումը սպառնալիք է ողջ աշխարհի համար: Եվ Իրանի միջուկային գործունեության ընթացքը վերահսկելու նպատակով 2015 թվականին ստորագրված փաստաթուղթն այդ սպառնալիքը չեզոքացնելու նպատակ ուներ: Սակայն Դոնալդ Թրամփի կառավարության կողմից տվյալ փաստաթղթից միակողմանի հրաժարվելը սպառնալիքների նոր դուռ բացեց միջազգային հանրության առջեւ:

Դա նշանակում է, որ Համատեղ գործողությունների համապարփակ ծրագրին (ՀԳՀԾ) վերադառնալու ուղղությամբ որեւէ ձեռնարկում միջազգային հանրության կողմից պետք է դիտարկվի որպես փակուղուց դուրս գալու անհրաժեշտ քայլ:

Այսպիսով, բանակցությունների առկախումից հինգ ամիս անց վերսկսված հանդիպումը կարող է Իրանի համար միջազգային մեկուսացումից դուրս գալու, իսկ միջազգային հանրության համար միջուկային սպառնալիքների դուռը փակելու նոր հնարավորություն ընձեռել:

Սակայն, բանակցությունները վերսկսելու Իրանի ու ԱՄՆ-ի պայմաններն իրարամերժ լինելու պատճառով, Վիեննայի առաջին հանդիպման մասին քաղաքական վերլուծաբանների կանխատեսումներն սկզբնական շրջանում հուսադրող չէին: Իրանը պահանջում էր չեղարկել Թրամփի նախագահության շրջանի պատժամիջոցներն ու ստանալ ամերիկյան կողմի հավաստիացումներն առ այն, որ ԱՄՆ հաջորդ իշխանություններն այլեւս չեն հրաժարվի ՀԳՀԾ-ից: Իսկ ԱՄՆ-ը պնդում էր, որ Իրանը պետք է ուրանի հարստացման աստիճանը հասցնի ՀԳՀԾ-ով նախատեսված ելակետային սահմանին, եւ սահմանափակի հեռահար հրթիռների արտադրությունը:

Այս իրարամերժ պահանջներից բխող պայմաններում, նոյեմբերի 29-ին Վիեննայում տեղի ունեցած երկժամանոց քննարկումներն արդեն իսկ հուսադրող կարելի է համարել, առավել եւս այն պատճառով, որ իրանական պատվիրակությունը բանակցային սեղանին ներկայացրել էր պատկառելի թվականակով եւ հետընտրական Իրանում ձեւավորված երկրի բարձրագույն հոգեւոր իշխանությանը չընդդիմացող կառավարության կողմից գործուղված ներկայացուցչական կազմով:

Իսկ բանակցությունների օրակարգում պատժամիջոցների չեղարկման հարցի ներառումը կարելի է Թեհրանի նախնական ձեռքբերումը համարել:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Ռուս-ուկրաինական նոր լարվածություն

Դեկտեմբերի 1-ին Ուկրաինայի նախագահ **Վլադիմիր Զելենսկին** իր երկրի խորհրդարանում հայտարարել է, թե մտադրություն ունի վերադարձնել Ղրիմը: Սա Մոսկվան ուղիղ սպառնալիք է դիտում Ռուսաստանի հանդեպ, մանավանդ, ըստ ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ **Մարիա Զախարովայի**, Դոնբաս125 հազար ուկրաինացի զինվոր ու սպա է բերվել, դա ուկրաինական զորքի կեսն է: Ըստ ՌԴ արտգործնախարար **Սերգեյ Լավրովի**՝ այդ կազմում մեծ թվով արեւմտյան հրահանգիչներ կան, փաստորեն՝ այնտեղ չծրագրված զորավարժություններ են, ու ՆԱՏՕ-ի երկրների նման գործելակերպը Ուկրաինային կարող են մղել արկածախնդրության:

Այս շրջանում, երբ հայ-ադրբեջանական շփումներում ռուսական կողմն ինչ-որ արդյունքի է ուզում հասնել, ռուս-ուկրաինական լարվածությունը կարող է սրբագրումներ մտցնել նաեւ մեր տարածաշրջանային գործընթացներում: Ակնդետ հետեւենք:

Մ.Խ.

# Նոր ջերմային էլեկտրակայան Երեւանում

Վերջերս Երեւանի ՋԷԿ-ի հարեւանությամբ բացվեց նոր էլեկտրակայան՝ 254 ՄՎտ հզորությամբ:Այն աշխատելու է համակցված շոգեգազային ցիկլով:

Ծրագրի իրականացման համար ներդրվել է շուրջ 270 միլիոն դոլար: Շինարարական աշխատանքներում ներգրավված է եղել 1200 աշխատակից, իսկ էլեկտրակայանի գործարկումից հետո ստեղծվել է մշտական 50 նոր աշխատատեղ:

Կարգաբերման աշխատանքների ավարտից հետո էլեկտրակայանը ՀՀ էլեկտրաէներգետիկ ցանցին է մատակարարելու ամենաէժան էլեկտրաէներգիան: Անհրաժեշտ է նշել,որ էլեկտրակայանի հիմնարկեքի արարողությունը տեղի էր ունեցել 2019 թվականի հուլիսի 12-ին:

Ընդհանուր առմամբ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկների շահագործման արդյունավետությունը շատ բարձր է եւ կարող է լուրջ խթան հանդիսանալ Հայաստանի էներգետիկայի զարգացման համար: Կայանի ընդհանուր օգտակար գործողության գործակիցը կարող է կազմել ավելի քան 60 տոկոս:Արդյունքում կխնայվեն վառելիքաէներգետիկ ռեսուրսներ: Կշահենք նաեւ շրջակա միջավայրի պաշտպանության տեսակետից:

Հիշեցնենք, որ Երեւանի ՀՇԳՑ էներգաբլոկի շահագործման հանձնման պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել 2010թ. ապրիլի 21-ին:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ

# ԷԿՕ-ի գագաթաժողովը Հարավային Կովկասին վերաբերող հարցերի քննարկման հարթա՞կ

⇨1 Ռայիսին նաեւ համոզմունք հայտնեց, որ տարածաշրջանի կառավարումը պետք է իրականացվի տվյալ ռեգիոնի երկրների կողմից, ուրախությամբ նշելով տարածաշրջանային զարգացման ու ինտեգրման նոր շրջափուլի մեկնարկը երաշխավորող թշնամանքի դադարեցման ու կայունացման մասին: Ռայիսին իր ելույթում նաեւ կարծիք հայտնեց, որ տվյալ ժամանակահատվածում ԷԿՕ-ի անդամ պետությունների մասնակցությունն ու Կովկասյան երկրների հետ ընկերակցումը կարող է նպաստել ԷԿՕ-ի դերի բարձրացմանը: Իրանի նախագահը նաեւ վստահություն հայտնեց, որ կովկասյան տարածաշրջանի երկրների միջեւ փոխադարձ հարգանքի ու տարածքային ամբողջականության պահպանման, ինչպես նաեւ միջազգային նորմերի վրա հիմնված համագործակցությունը կերաշխավորի տարածաշրջանի երկրների զարգացումն ու առաջընթացը:

ԻԻՀ նախագահի համոզմամբ, կովկասյան տարածաշրջանի կայունությունը կարող է նաեւ նպաստել արտատարածաշրջանային երկրների համագործակցությանը՝ ԷԿՕ-ի անդամ պետությունների ու մյուս երկրների միջեւ առեւտրատնտեսական համագործակցությունը դյուրացնող Պարսից ծոց-Սեւ ծով միջազգային միջանցքի գործարկման հաշվառմամբ:

Բազմակողմ հարթակում ելույթի միջոցով Իրանի համար կարեւոր ուղերձներ փոխանցելու հնարավորությունից բացի, ԻԻՀ նախագահի գլխավորած պատվիրակության այցը կարեւորվում էր նաեւ նրանով, որ Թեհրանն ու Աշխաբադը վերջին տարիներին երկկողմ հարաբերություններում հետընթաց են արձանագրել, եւ բազմակողմի առիթով, երկկողմ հարաբերությունների շրջանակում իրականացվող այս այցելությունը նաեւ տեղավորվում է հարեւան պետությունների հետ հարաբերություններն ակտիվացնելու՝ Էբրահիմ Ռայիսիի հռչակած արտաքին քաղաքականության ուղղություններից մեկի տրամաբանության մեջ: Բնականաբար, Ռայիսին կփորձի



նաեւ այս առիթն օգտագործել՝ հալեցնելու վերջին տասը տարիների ընթացքում երկկողմ հարաբերություններում գոյացած սառույցը:

Թուրքմենական կողմի հետ երկկողմ հարաբերությունների կարգավորմանը հետամուտ լինելուց բացի, ԷԿՕ-ի հարթակը Իրանի նախագահին կազմակերպության մյուս անդամների հետ շփումների առումով լայն հնարավորթյուն տվեց: Թուրքմենստանում անցկացվող միջոցառման շրջանակներում Իրանի նախագահն իր պաշտոնն ստանձնելուց հետո առաջին անգամ հնարավորություն ունեցավ հանդիպելու կազմակերպությանն անդամակցող Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահներ **Էրդողանի** ու **Ալիեւի** հետ, եւ առիթն օգտագործեց փոխանցելու 44-օրյա պատերազմի հետեւանքով ձեւավորված աշխարհաքաղաքական նոր իրավիճակին վերաբերող հարցերի կապակցությամբ Իրանի պաշտոնական տեսակետները:

Իրանի համար ԷԿՕ-ի 15-րդ նստաշրջանին մասնակցելը կարեւորվում էր նաեւ մեկ այլ տեսանկյունից: Բացի վերը նշվածից, միջինասիական պետությունների հետ հարաբերությունները Թեհրանի համար կարեւորվում են նաեւ նրանով, որ Իրանն այդ տարածաշրջանի միջոցով կամրջվում է թե՛ Ռուսաստանի եւ թե՛ Չինաստանի հետ: Իսկ Արեւմուտքի շրջափակմանը ենթարկված Իրանի համար այդ երկրների նշանակությունը անթերագնահատելի է:

# Հակոտնյա առաջարկների խաչուղում

⇨1 Դա առայժմ չի կատարվում, կամ չեն թողնում, որ կատարվի, որովհետեւ հրապարակի վրա եղած ուժերի թիվ մեկ նպատակը ոչ թե Հայաստանի փրկությունն է, այլ իրենց ներքին շահի սպասարկումը: Իսկ քաղաքական ուժերի շփոթվածության վկայություն կարելի է համարել, ասենք, **Կարին Տոնոյանի** ղեկավարած ուժի եւ ամպագոռգոռ «Ազատագրական շարժում» անունով ուժի ՝ դեռ չմիացած, միասնաբար չգործած՝ բաժանվելը:

Կան այլ տեսանելի խմորումներ՝ ընդդիմադիր ուժերն իրենց ներսում խուլ կռվում են դոմինանտության համար, քանի որ **Նիկոլ Փաշինյանին** հեռացնելու թիվ մեկ նպատակից հետո գալու է թիվ երկու նպատակը՝ ո՞ր ուժը պետք է հնարավորություն ստանա իր լիդերով նրա աթոռը զբաղեցնելու (ԱԺ լսումների ամբիոնից **Իշխան Սաղաթելյանի** եւ **Նաիրի Հոխիկյանի** երկխոսությունը՝ ո՞վ գնա հանրահավաքների, ո՞վ չգնա, այդպիսի ներքին պարզաբանումների անսպասելի հանրայնացված դրսեւորում էր):

Քաղաքական տարբեր միավորների՝ միմյանց դեմ ներքին, խաղի ոչ մի կանոն չունեցող պարզաբանումների տարբեր հրապարակային դրսեւորումները հենց ցույց են տալիս, որ Հայաստանի գնալիք ուղու, կատարելիք քայլերի վերաբերյալ միասնական, համաձայնեցված մոտեցումներ որդեգրելու առաջնային նպատակն այս պահին գոյություն չունի, կամ միգուցե հենց այդպիսի նպատակ չունենալն է նպատակ՝ որպես դրսի ազդեցությունների հարկադրանք, չգիտենք: Սակայն Հայաստանի ողջ քաղաքական դաշտն անհասկանալի կամ միգուցե մի արտաքին կենտրոնից ուղղորդվող հասկանալի գործելակերպով՝ անդամալուծում է, այդպիսով, ողջ քաղաքական դաշտը՝ երրորդ-չորրորդ մոտեցումների համար ճանապարհ փակելով եւ հայերիս զրկելով առկա վտանգների վերաբերյալ տեսադաշտը լայնացնելուց: Մեդիա դաշտը, որ ամբողջովին ծածկված է ընդդիմադիր ու իշխանական ուժերի երկու բեւեռացված մոտեցումներով, թույլ չտալով այլ տեսակետներով լրատվամիջոցների գոյությունը, որոնք հանրությանը վիճակի ողջ վտանգավորությունը բացատրելու, այլընտրանքների շուրջ ծանրութեթեւ անելու հնարավորություն կստեղծեին, նույնպես խոսուն է: Արդեն անգամ չեն խորշում լրատվամիջոցների ներսից տրոյական ձիեր ունենալու գաղափարից, վիժեցնելու համար ամեն առողջ մոտեցում: Փողն է որոշում ամեն ինչ, ու փողը մեդիայում պտտելով՝ զանգվածների ուղեղն այնպես են լվանում, որ մարդիկ չկարողանան կողմնորոշվել Հայաստանը ճիշտ ուղու վրա դնելու հարցում: Նույնիսկ **Սերժ Սարգսյանը**, որ «Եդինայա Ռոսիյա» ռուսական իշխող քաղաքական ուժի հետ նախորդ օրը ուղիղ կապ-տեսաուղերձում հնարավորություն ուներ բացահայտելու այն երկընտրանքը, որի առաջ կանգնած է հիմա Հայաստանը, բավարարվեց հռետորական հարցադրումներ անելով եւ երկրի՝ դիլետանտ-պոպուլիստների պատճառով կառավարման ծանր հետեւանքների մասին խոսելով:

Բոլոր դեպքերում, բարեբախտաբար, կան անհատներ, որոնք, ճիշտ է, ժողովրդի լայն շերտերի ուշադրությունից հեռու են, այնուամենայնիվ գտնում են մեդիա հարթակներ՝ այլընտրանքի մասին խոսելու, չնայած նրանք էլ համարյա արտաքին ազդեցության տարբեր թեւեր, տարբեր շրջանակներ են ներկայացնում, ու սովորական հայ մարդն ամեն օր պետք է վերածվի Սողոմոն իմաստունի՝ համադրելու համար կարծիքները, նրանցում ռացիոնալ հատիկն արտաքին ազդեցության աղբից զատելու համար:

Եւ այսպես՝ եթե ենթադրությունների մեր շարանը կառուցենք՝ այդպիսի վերլուծությունների առողջ հատվածները համադրելով, ապա ղարաբաղյան երկրորդ պատերազմն արդյունք է տարածաշրջանային վերաձեւումների, եւ կամ միգուցե հենց պատերազմի արդյունքը հնարավորություն տվեց Ռուսաստանին՝ խաղաղապահ զորք մտցնել Արցախ ու Հայաստանի սահմաններ: Ռուսաստանն, այդպիսով, առայժմ վերահսկողության տակ է պահում տարածաշրջանը՝ Թուրքիայի հետ միասին, դիմակայելով հատկապես՝ Ռուսաստանին մեր տարածաշրջանից ամբողջովին դուրս մղելու արեւմտյան փորձերը: Հիմա պատերա՞զմն է այդ պատճառով եղել, թե՞ ուղղակի պատերազմի պատճառով է այդ վիճակն արձանագրվել՝ հավի ու ձվի պատմությունն է, տողերիս հեղինակն անձամբ առաջին վարկածի կողմնակիցն է (հայերիս համար ողբերգական հետեւանքների ողջ պատասխանատուներով հանդերձ):

Դրանից հետո մեկ տարի ձգվեց այն գործընթացը, որ, Հայաստանի ղեկավարությունից համաձայնություն փորձելով ստանալ (հարկադրանքով կամ գուրգուրանքով՝ դուք մտածեք), մեր գլխավոր դաշնակից պետությունն ամեն կերպ ուզում էր երկրորդական դարձնել Մինսկի խումբը՝ նրան հրելով երկրորդական հարցերի դերակատարման տիրույթ, եւ հիմա էլ խոսում է ի վերջո պատերազմի հետ կարծես թե գոնե դե յուրե չառնչված բուն Հայաստանի տարածքի սահմանազատումից ու սահմանագծումից, այդպիսով Արցախի կարգավիճակի հարցի քննարկումն անորոշ ժամանակով հետաձգել ցանկանալով եւ խաղաղապահ մանդատն առանց միջազգային օրենսդրության իրենով անելով:

Հենց սրանք կարող են տեղավորվել Արցախի հարցը լուծելու, դրա համար Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագիր ստորագրել տալու ռուսական (լավրովյան) առաջարկի տրամաբանության մեջ: Չնայած դա հայերիս համար, կարելի է ասել, պարունակում է բոլոր այն վտանգները, որոնցով համակված է հայ հասարակությունը. Հայաստանի տարածքներով անցնող հաղորդուղիներ ու երկաթգիծ՝ ռուսական վերահսկողությամբ (իսկ այդ վերահսկողությունը միջանցքային տրամաբանություն ունի, քանի որ ճանապարհների երկայնքով պետք է կառուցվեն ռուսական խաղաղարարների համար ենթակառուցվածքներ՝ զորանոցներ, անհրաժեշտ սպասարկման ծառայություններ եւ այլն, ու դա, այո, կարող է վերածվել մեր տարածքի հաշվին միջանցքային գոտու, գումարած մեր տարածքում դրվելիք ադրբեջանական մաքսակետերը): Իսկ որ ավելի կարեւոր է՝ Հայաստանը ոչ թե ապաշրջափակվում է, այլեւ ամբողջովին սեղմվում թուրքադրբեջանական աքցանում, իսկ թուրքերի վաղեմի երազանքը՝ Նախիջեւանով ուղիղ կապվել Ադրբեջանին, իրականություն է դառնում:

Եթե հիշենք, թե ինչպես էր **Բայդենը** սպառնում Վրաստանում ռազմաբազա դնել, ու հիշենք վերջին շրջանի եվրոպական ակտիվությունը՝ հայ, ադրբեջանցի պաշտոնյաների հետ եվրոպական կառույցների ներկայացուցիչների հաճախադեպ հանդիպումները, Փարիզում Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումը՝ Մինսկի խմբի հովանու ներքո, ԵՄ ներկայացուցչի եւ **Լավրովի**՝ նյարդային վերջին հանդիպումը եւ այլ համանման փաստեր, ապա ենթադրելի է դառնում, որ Բրյուսելում եվրոպական կողմը գեներացնելու է իր առաջարկը կողմերին:

Եվրոհանձնաժողովի՝ Արեւելյան հարեւանության գծով ղեկավար **Լոուրենս Մերեդիթը**, որը հայտնել է նոյեմբերի 2-ին Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպման մասին, տեսեք թե ինչ է ասել.

« Իրավիճակը շարունակում է մնալ լարված: Ես Հարեւանության հարցերով հանձնակատար Վարհեիի հետ մի քանի շաբաթ առաջ մասնակցել եմ Կովկասի երեք երկրներում արտգործնախարարների հետ հանդիպումներին: Դա հենց Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ողբերգական բռնությունների վերսկսման օրն էր, կամ՝ դրանից քիչ առաջ: Ուզում եմ մեր կողմից շատ հստակ ընդգծել՝ Եվրոհանձնաժողովը ծայրաստիճան հանձնառու է անել ամեն բան, որ կայուն խաղաղությունը հնարավոր դառնա՝ ի շահ Կովկասի բոլոր երկրների»:

Փաստորեն Մերեդիթն ուղիղ ակնարկում է, թե ինչու սկսվեց նոյեմբերի 14-16-ը ներառյալ ադրբեջանական ներխուժումը Հայաստան: Հավանաբար՝ այդ հանդիպմանը խոսք է եղել ԵԱՀԿ Մինսկի խմբի ինչ-որ այլընտրանքային առաջարկի մասին, որից հետո անսպասելի տեղի ունեցավ Սոչիի հանդիպումը, եւ առհասարակ՝ տեսանելի է Հայաստանին բան պարտադրելու ռուս-ադրբեջանական շտապողականություն:

Իհարկե, Սոչիում պայմանագրի տրամաբանությամբ որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել, որը կփոխեր եռակողմ երկու հայտարարությունների՝ իրավական հողից զուրկ վիճակը, ու հայերիս համար կփակեր դուռն այլընտրանքից որեւէ կերպ օգտվելու առումով:

Սակայն չի կարելի ասել, թե մինչեւ Արեւելյան գործընկերության գագաթաժողովի շրջանակում Փաշինյան-Ալիեւ հանդիպումն այդպիսի կամ այդ տիպի ինչ- որ թուղթ չեն պարտադրի Հայաստանին ստորագրել, որով Ադրբեջանն առանց հայերիս համաձայնության ռուսական խաղաղապահներին թույլ է տալիս Շուշիում, Հադրութում եւ մնացած սահմաններում ռուսական ներկայություն, հետո խաղաղության պայմանագիր է պարտադրվում հայերիս, բացվում են հաղորդուղիներ, իսկ այդ բոլորին նպաստում է ի վնաս Հայաստանի սկսված սահմանազատումը:

Արցախը մնում է կախված օդից, ենթադրաբար՝ ռուսական ազդեցության գոտում: Խաղաղության պայմանագիրն այն պարտադրող երկու կողմին հարկավոր է այն պատճառով, որ հետո , Հայաստանի ստորագրությունն այդ պայմանագրի տակ նրանց թույլ կտա ՄԱԿ-ի պատժամիջոցների տակ չընկնել՝ քանի որ միջազգային օրենքներով ռուսական խաղաղապահների մանդատը չի կարող հաստատված համարվել:

Գումարենք, որ վստահ չենք, թե եվրոպական առաջարկը հատկապես հայերիս շահերից կարող է բխել, եթե այդպիսին կա, բայց որ այդպիսի առաջարկը հայկական կողմի համար ավելի բալանսավորված պահանջներ ներկայացնելու հնարավորություն կստեղծեր՝ դա հնարավոր է ու հավանական, այլապես ռուս-ադրբեջանական կողմերն այդպիսի շտապողականություն չէին դրսեւորի փաստաթուղթ պարտադրելու գնով ամրագրելու առկա վիճակը, Մինսկի խմբին հրելով դեպի երկրորդական հարցերի կարգավորման տիրույթ:

Եվրոպական հնարավոր առաջարկը նույնպես իր բացասական պահերը կարող է ունենալ հայկական կողմի համար, եթե այն ձեւավորվում է հայտնի սկզբունքներով. ՄԱԿ-ի խաղաղապահների մանդատ, որով միջազգային խաղաղապահ ուժերը պետք է մտնեն Արցախի շուրջ ստեղծված բուֆերային գոտի (դրանք հենց Ադրբեջանի գրաված տարածքներն են), այս պրոցեսներում գլխավոր դերակատարը եւ վերահսկողը Մինսկի խումբը պետք է լինի, որը կպնդի, որ որեւէ պայմանագիր առանց Մինսկի խմբի չի ստորագրվելու: Արցախի կառավարումն էլ միգուցե անցնի միջազգային ուժերի՝ պարզ չէ ինչ տիպի կառավարման մասին կարող է խոսք գնալ:

Որ այդպիսի առաջարկ կարող է լինել, ըստ քաղաքագետ **Անդրիաս Ղուկասյանի**, վկայում է ԵԱՀԿ գործող նախագահի եւ Լավրովի՝ անգամ հրապարակայնորեն դրսեւորում ունեցած նյարդային վերջին հանդիպումը:

Ահա այս հակոտնյա առաջարկների մեջտեղում է Հայաստանը՝ մուրճի ու սալի արանքում: Իրանի եւ մյուս տարածաշրջանային դերակատարների՝ ներգրավվածության մասին այս ամեն ինչում՝ մեր լրատվամիջոցը հաճախ է հրապարակումներ անում, ինչպես ներկա համարում:

Ու մեր քաղաքական ուժերը, փոխանակ քննարկեն ու որոշեն՝ ինչ են դեմ տալիս պարտադրանքներին, զորաշարժվում են արտաքին թելադրանքերով ու իրենց դրած նեղ խնդիրներով:

*Հ.Գ.-Իշխանություններին ուզում ենք ասել՝ **Աշոտ Մինասյանին** բաց թողեք, արցախյան բոլոր պատերազմների մասնակից մարդու իրավական հետապնդումը շատ վատ մեսիջ է հանրությանը, մանավանդ՝ առաջին հայացքից էլ երեւում է, որ տակն առանձնապես մեղադրանք չկա:*

# Կարեւոր միջոցառում

Հայոց պատմության նորագույն շրջանի անբաժան մաս է կազմում տարբեր ասպարեզներում Հայրենիք-Սփյուռք բազմավեկտոր համագործակցությունը: Առանձնանում են հատկապես հոգեւոր, կրթամշակութային եւ գիտության ոլորտները: Դրա հերթական դրսեւորում էր 20212 թ. նոյեմբերի 26-ին Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում կազմակերպված Բեյրութի Հայկազյան եւ Երեւանի Մանկավարժական համալսարանների միջեւ կնքված համագործակցության հուշագրի ստորագրման արարողությունը եւ «Հայկազյան հայագիտական հանդես»-ի 41-րդ հատորի շնորհանդեսը:

Միջոցառման վարող, գիտական գրադարանի տնօրեն **Տիգրան Պետրոսյանցը** ողջունեց Բեյրութի Հայկազյան համալսարանի ներկայացուցիչներին, հանդեսի 41-րդ համարում տպագրված հեղինակներին ու հյուրերին եւ խնդրեց հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգել Արցախյան պատերազմներում եւ վերջին օրերին զոհված հայ զինվորների ու խաղաղ բնակիչների հիշատակը: Այնուհետեւ ասաց, որ Մանկավարժական ու Հայկազյան համալսարանների միջեւ կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ ստորագրվելու է Համագործակցության հուշագիր: Այն ստորագրելու համար սեղանի մոտ հրավիրվեցին համալսարանների ղեկավարները՝ ռեկտորի պաշտոնակատար, դոկտոր-պրոֆեսոր **Աշոտ Խոեցյանը** եւ



վերապատվելի, դոկտոր **Փոլ Հայդոսթեանը**:

Վերջիններս ստորագրեցին եւ փոխանակեցին հուշագրի մեկական օրինակները: Դրանից հետո հոբելյանական հատորը բավական բովանդակալից ներկայացրեցին **Արծվի Բախչինյանը** եւ Տիգրան Պետրոսյանցը:

Այնուհետեւ սրտի խոսք ասելու համար ամբիոնի մոտ հրավիրվեցին հատորի հոդվածագիրներ, դոկտոր պրոֆեսորներ Սուրեն Սարգսյանը, Վանիկ Վիրաբյանը, Գեւորգ Ստեփանյանը, ինչպես նաեւ Սուրեն Դանիելյանը, Լալիկ Խաչատրյանը, Խաչատուր Ստեփանյանը եւ այլք: Միջոցառման ավարտին շնորհակալական խոսքով հանդես եկավ հանդեսի խմբագիր, դոկտոր **Անդրանիկ Տաքեսյանը**:

Բոլոր ելույթ ունեցողները կարեւորելով հանդեսի ազգաշահ գործունեությունը՝ բարձր գնահատեցին այն եւ հետագա հաջողություններ մաղթեցին:

# Սոչիի հանդիպման քաղաքական հետեւանքները

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Դետրոյթ, ԱՄՆ

Յուրաքանչյուր զարգացում կովկասյան տարածաշրջանում գոյութենական նշանակություն ունի Հայաստանի համար: Այդ պատճառով էլ լրատվամիջոցները չափազանց մոլեգնած էին, մինչ քաղաքական կառույցները ինքնախարազանման սադիստական տրամադրության մեջ էին Հայաստանում քաղաքական վերիվայրումների ամբողջ ընթացքում:

Որոշակի քաղաքական նպատակներ հետապնդող բոլոր վերլուծաբանները վատ ծառայություն են մատուցում երկրին: Միայն նրանք, ովքեր համարձակվում են ցավալի իրականության մասին խոսել, կարող են օգտակար ուղիներ նշել եւ ռեալիստական պատկերացում տալ հանրությանը: Օրինակի համար «Ազատություն» հեռուստատեսության պանելային քննարկումների ժամանակ քաղաքական մեկնաբան **Ալեքսանդր Իսկանդարյանը** մռայլ դեմքով պնդում էր, որ հակառակորդի հետ բանակցություններում Հայաստանը, որպես պարտված կողմ, ի վիճակի չէ թելադրելու օրակարգի հարցերը: 2020 թվի նոյեմբերի 9-ից սկսած Հայաստանը ստիպված է իր թշնամի Ադրբեջանի հետ բանակցությունների սեղանի շուրջ նստել քննարկելու համար իրադրությունը 44-օրյա պատերազմից հետո, որը փոխեց տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը:

«Մարտավարությունների եւ տեխնոլոգիաների վերլուծության կենտրոնի» հրատարակած «Փոթորիկ կովկասյան երկնակամարում» (Storm Over the Caucasus) ռուսալեզու գրքի վերջաբանում Կառնեգիի մոսկովյան կենտրոնի աշխատակից **Դմիտրի Տրենինը** գրում է. «Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, որն սկսվեց 2020-ի աշնանը, շրջադարձային նշանակություն ունեցավ ոչ միայն մասնակից երկրների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի համար: Այն փոխեց քաղաքական եւ ռազմական հավասարակշռությունը ամբողջ Հարավային Կովկասում: ...Մ. Նահանգների եւ Եվրոպայի փոխարեն, այժմ Թուրքիան, Իրանը եւ Իսրայելն են տեւական ազդեցություն թողնում այն ամենի վրա, ինչ կատարվում է Ադրբեջանում, Հայաստանում, եւ այդ երկու պետությունների միջեւ: Այս հանգամանքը պետք է մղի ռուս քաղաքագետներին հետխորհրդային կամ Ռուսաստան-Արեւմուտք կոնտեքստի փոխարեն կենտրոնանալ երկրի հարավկովկասյան հարեւանների վրա եւ մշակել առավել համապատասխան մոտեցումներ նրանց հանդեպ է՛լ ավելի ընդարձակելով Միջին Արեւելքի քաղաքականության ոլորտները»:

Այդուհանդերձ, Հայաստանում շատերն են դեռ պահպանում սառը պատերազմի ժամանակաշրջանի մտածելակերպը եւ հավատում, որ Ռուսաստանին փոխարինող այլընտրանքը Արեւմուտքն է եւ այլ պետությունների ժողովրդավարական արժեքները: Փաստը, սակայն, որ Արեւմուտքը հակառակ իր հռչակած ժողովրդավարական եւ արդարության արժեքների, դեռեւս պահպանում է Միջին Արեւելքում միջնադարյան միապետերի, ցույց է տալիս նրա կեղծավորությունը կամ երկակի ստանդարտների դրսեւորումը:

Կովկասում զարգացումները գլխապտույտ արագությամբ են տեղի ունենում, եւ շատ դժվար է քայլ պահել դրանց հետ: Որոշված էր եռակողմ հանդիպում (Ռուսաստան, Հայաստան, Ադրբեջան) կազմակերպել նոյեմբերի 9-ի տխրահռչակ տարելիցի առթիվ՝ գնահատելու համար համապատասխան կողմերի փոխվարչապետների կատարած աշխատանքը եւ մի նոր համաձայնությամբ վերջնական տեսքի բերելու համար հռչակագրի դրույթները:

Բայց այդ հանդիպման նախօրեին Ադրբեջանը նոր սահմանային ոտնձգություն սանձազերծեց Հայաստանի նկատմամբ: Հանդիպումը անորոշ ժամանակով հետաձգվեց: Ի դեպ, Բաքվի քաղաքականությունը շատ թափանցիկ է: Նոր խնդիրներ առաջացնելով նա փորձում է խուսափել օրակարգի գլխավոր հարցերից: Պատերազմը ծագեց ղարաբաղյան հակամարտության հիման վրա: Բաքուն տեղում փաստեր ստեղծելով ինքնավար Հայաստանին խճճում է տարաբնույթ խնդիրներով: Առաջ քաշելով Զանգեզուրի միջանցքը ձեռք բերելու հարցը, Հայաստանին եւ տարածաշրջանի նրա գործընկերներին ստիպում է շեղվել ղարաբաղյան հիմնահարցից եւ զբաղվել Սյունիքում իր տարածքային ամբողջականությունը պաշտպանելու գործով:



Միջադեպերի ու ոտնձգությունների պատճառով կացությունն այնքան հեղհեղուկ էր դարձել, որ մի քանի շաբաթ առաջ հնչած Եվրոմիության նախագահ **Շառլ Միշելի** հայտարարությունն այն մասին, որ վարչապետ Փաշինյանն ու նախագահ Ալիեւը «Եվրոմիության արեւելյան գործընկերության» շրջանակներում հանդիպելու են Բրյուսելում դեկտեմբերի 15-ին, գալվանացրեց ամբողջ քաղաքական մթնոլորտը:

Ակնկալելով, որ կովկասյան օրակարգը կարող է փոխադրվի Արեւմուտք, Կրեմլը որոշեց առաջ անցնել եւ երկու կողմերին հրավիրեց հանդիպել Սոչիում նոյեմբերի 26-ին՝ համաձայնության գալու եւ բրյուսելյան հանդիպումը անտեղի դարձնելու նպատակով:

Այսպիսով, մի նոր քաղաքական ներկայացում տեղի ունեցավ Սոչիում, որտեղ Փաշինյանն ու Ալիեւը հանդիպեցին ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինի** հետ երեքժամյա լարված բանակցությունների ընթացքում: Հանդիպման հանրային մասում **Ալիեւը** ամբողջովին վերափոխված էր եւ պատրաստ կարգավորելու հարցերը որպես խաղաղասեր: Անհետացել էին նրա անախորժ ակնարկները «հայկական շների» վերաբերյալ: Չմոռանանք, որ նրա ռազմատենչ եւ կոպիտ վարքագիծը նողկալի բռնակալի էին վերածել նրան համաշխարհային քաղաքական թատերաբեմում: Բայց դա չէր վերափոխման միակ պատճառը: Կային նաեւ քաղաքական այլ գործոններ, որոնք նպաստեցին նրա՝ այսպես կոչված բարեկրթությանը:

Ալիեւը հայտարարեց, որ հարյուր տոկոսով կատարել է նոյեմբերի 9-ի հռչակագրի հայտարարությամբ իրեն վերապահված պարտավորությունները եւ պատրաստ է անցյալի էջը շրջել եւ բարիդրացիական հարաբերությունների նոր դարաշրջան բացել Հայաստանի հետ:

«Ներեցեք, որ չհամաձայնվեմ», պատասխանեց **Փաշինյանը**, հիշեցնելով ռազմագերիների եւ Ադրբեջանում դեռեւս պատանդ պահված հայերի հարցերը: Նաեւ այն փաստը, որ Ադրբեջանի զինված ուժերը շարունակ խախտել էին Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Բոլոր երեք ղեկավարներն էլ դրական գնահատեցին հանդիպումը՝ համարելով այն «կոնստրուկտիվ»: Փաշինյանը նույնիսկ հայտարարեց, որ որոշ անլուծելի թվացող խնդիրներ արդեն դարձել էին լուծելի:

Այն ինչ չափազանց անսովոր էր՝ Ալիեւի լռությունն էր միջանցքի հարցի վերաբերյալ: Առնվազն հանրային ելույթների ժամանակ: Դա ինտրիգային էր, քանի որ ինքն ու իր քաղաքական մենտորը՝ Թուրքիայի **Էրդողանը** մինչեւ վերջերս այդ հարցն էին առաջ քաշում եւ նույնիսկ սպառնում, որ ուժի միջոցով ձեռք կբերեն այդ միջանցքը: Հանդիպման ավարտին մեղմ մի հայտարարություն ստորագրվեց՝ կողմերին թողնելով լուծել ներքին հարցերը:

Ընդդիմությունը Հայաստանում, սակայն, վրդովված է եւ պնդում է, որ Փաշինյանը համաձայնություն է ստորագրել միջանցքի վերաբերյալ եւ ծախել Ղարաբաղը: Ցուցարարները խորհրդարանի առաջ պահանջում էին կառավարության հրաժարականը:

Սոչիի հանդիպման ավարտին հրապարակված եռակողմ հայտարարությունը նշում է, որ կողմերը համաձայնել են «քայլեր ձեռնարկել ամրապնդելու համար կայունությունն ու անվտանգությունը Հայաստան-Ադրբեջան սահմանում եւ ստեղծելու համար երկկողմ մի հանձնախումբ, որը կզբաղվի Ադրբեջանի եւ Հայաստանի հանրապետությունների միջեւ սահմանազատման եւ սահմանագծման հարցերով Ռուսաստանի Դաշնության խորհրդատվական աջակցության (կողմերի համաձայնությամբ) հիման վրա»:

Իհարկե, հեշտ է խոսել, քան գործել, քանի որ սատանան հենց մանրամասների մեջ է: Հակամարտության երկու կողմերը մեծապես գովաբանեցին ռուս խաղաղապահների դերը, մինչդեռ հայտնի է, որ Բաքուն փորձում է ազատվել նրանց ներկայությունից:

Իհարկե, նախագահ Պուտինը ոչ մի առիթ չկորցրեց ընդունելու երկու կողմերի երախտագիտական խոսքերը խաղաղապահների նշանակության եւ մանավանդ Ռուսաստանի, որպես միջնորդի, դերի վերաբերյալ: Այս հարցը առավելապես շեշտվում է Կրեմլի կողմնակիցների ելույթներում՝ համեմատվելով Ադրբեջանի հանդեպ Թուրքիայի վերաբերմունքով եւ հակադրվելով Հայաստանի հանդեպ Ռուսաստանի վերաբերմունքով:

Ներկայիս, մենք փոփոխություն տեսնում ենք Հայաստանի հանդեպ Ռուսաստանի վերաբերմունքում: Այն դաշնակցայինից դարձել է միջնորդական՝ խաղի կանոնները փոխող կովկասյան քաղաքականության մեջ: Հայաստանի հետ կնքված պայմանագրերն այժմ ժամանակավրեպ են դարձել:

Ալիեւի տրամադրության վրա ազդած քաղաքական գործոնները (նույնիսկ ընդունումը, որ դրական ազդանշաններ կան Հայաստանից) չափազանց շատ են: Դրանցից մեկը Թուրքիայի գործոնն է: Անկարայի ընդարձակման (էքսպանսիական) ախորժակը շատ ավելի մեծ է, քան այդ երկիրը կարող է հոգալ իր մահամերձ տնտեսությամբ: Թավալգլոր արժեզրկվող թուրքական լիրան եւ արտակարգ ընտրություններ անցկացնելու ընդդիմության կոչերը համարյա հօդս են ցնդեցրել 2023-ին վերընտրվելու (եւ երկրորդ Աթաթուրքը մկրտվելու) Էրդողանի երազանքը:

Այդ պատճառով է, որ Էրդողանը արագորեն փորձեց հարաբերությունները կարգավորել Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Իսրայելի հետ: Որպես վարձատրություն նա ԱՄՀ-ից ստացավ 10 միլիարդ դոլար ներդրումային փաթեթ՝ խթանելու համար Թուրքիայի տնտեսությունը: Էրդողանը Ալիեւին խորհուրդ տվեց միեւնույն ձեւով վարվել Իրանի հետ: Հայտնի է, որ Կովկասում սահմանային փոփոխություններ կատարելու կարմիր գիծն անցնելու հետեւանքում երկու երկրները քիչ էր մնում պատերազմեին միմյանց դեմ:

Բաքուն դրանից առաջ էլ չկարգավորված հարց ուներ Իրանի հետ՝ Կասպից ծովում հորատման իրավունքների առնչությամբ: Իրանը նույնիսկ պատերազմ էր պատրաստվում հայտարարել կանգնեցնելու համար Ադրբեջանի ոտնձգությունները իր տարածքում:

Բաքուն անմիջապես համաձայնություն ստորագրեց եւ դա իր դրական ազդեցությունն ունեցավ: Իրանի արտգործնախարար **Հոսեյին Ամիր-Աբդոլլահիանը** շնորհավորեց Բաքվին նոյեմբերի 9-ի հաղթանակի տարելիցի առթիվ: Իրանին նաեւ թույլատրվեց մասնակցել «գրավյալ տարածքներում» իրականացվող ծրագրերին, որ հնարավորություն է ընձեռելու Իրանին հետեւելու Ադրբեջանում Իսրայելի գործողություններին:

Այս նույն ժամանակահատվածում Թուրքիայի արտգործնախարար **Մեվլութ Չավուշօղլուն** Թեհրան էր այցելել նախապատրաստելու համար նախագահ Էրդողանի առաջիկա այցը այդ երկիր: Բայց նախքան այդ այցելությունը Էրդողանն ու Իրանի նախագահ **Էբրահիմ Ռաիսին** հանդիպեցին Աշխաբադում (Թուրքմենստան) եւ զրուցեցին երկու երկրների միջեւ համագործակցության ապագա ծրագրերի մասին: Ռաիսին նույնիսկ իր գոհունակությունը հայտնեց ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանի հաղթանակի համար:

Բոլոր այս զարգացումները ցույց են տալիս, որ այս պահին Անկարան չի կարող թիկունք կանգնել Բաքվին մի նոր պատերազմում:

Մյուս գործոնը, որ նպաստել է Ալիեւին ավելի քաղաքավարի լինելու, այն է գուցե, որ նախագահ Պուտինը խորհուրդ է տվել նրան վերաձեւավորելու միջանցքի պահանջի հարցը այնպես, որ այն չհնչի որպես Հայաստանի ինքնավար տարածքից հավելյալ իրավունքներ են խլվում, այլ այն դրվի ռուսական զինուժի հսկողության ներքո, ինչպես ասենք Լաչինի միջանցքն է:

Հաջորդ հանդիպումը Բրյուսելում ծառայելու է ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության վերաակտիվացմանը: Այդ խմբի համանախագահները ծրագրում են տարածաշրջան այցելել: Թե ո՞ր կողմից՝ Հայաստանից թե Ադրբեջանից նրանք կմեկնեն Ղարաբաղ՝ խորհրդանշական քաղաքական ուղերձ է պարունակելու իր մեջ:

Տարածաշրջանում քաղաքական գործընթացները միշտ չէ, որ տեղի են ունենում Ալիեւի ակնկալած ուղղություններով: Այնպես որ, դա Հայաստանին հնարավորություն է տալու վերակազմավորելու իր զինված ուժերը, որպեսզի այդ կերպով կարողանա պահպանել իր դիվանագիտության հեղինակությունը:

Անգլ. թարգմանեց
ՀԱԿՈԲ ՃՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# «Վարկաբեկելով Էրդողանին, Իրանը փորձում է թուլացնել Թուրքիայի ազդեցությունը, միաժամանակ քողարկում իր անհաջողությունը:

## Ինչպես երեւում է, դեռ դասեր չի քաղել կրած փորձություններից»

**ՅԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**
**Թուրքագետ**

*Նոյեմբերի 28-ին Աշխաբադում հրավիրվել էր «Տնտեսական համագործակցություն» կազմակերպության 15-րդ գագաթաժողովը, որի շրջանակներում Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** հանդիպեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ **Էբրահիմ Ռայիսիի** եւ ադրբեջանցի գործընկերոջ **Իլհամ Ալիեւի** հետ: «Կարակում» հյուրանոցում անցկացված երկու հանդիպումներն էլ եղել են դռնփակ եւ տեւել 30 րոպե:*

*Էրդողան-Ալիեւ հանդիպումն անցել է կատարյալ փոխըմբռնման մթնոլորտում եւ կողմերը, ըստ վերջինի մամուլի ծառայության, քննարկել են Հարավային Կովկասում ընթացիկ իրավիճակին եւ գործընթացներին առնչվող հարցեր: Որքան էլ ծառայությունը հաղորդագրության մեջ չանդրադառնա դրանց բովանդակությանը, ակնհայտ է, որ եղբայրական երկու երկրների նախագահները քննարկել են «Զանգեզուրի» միջանցքի բացման եւ ղարաբաղյան հիմնահարցում 3+3 ձեւաչափի կիրառման հնարավորությունը:*

*Ի դեպ, թուրքական լրատվամիջոցներն էլ չեն մանրամասնել Էրդողան-Ռայիսի հանդիպման օրակարգը: Բայցեւայնպես կողմերին «Զանգեզուրի» միջանցքի հետ հետաքրքրում է 3 + 3 ձեւաչափը: Պարզապես, ի տարբերություն Էրդողանի, Ռայիսին միջանցքին դեմ է, իսկ ձեւաչափին՝ կողմ, որովհետեւ դա Իրանին, եթե ոչ ռազմական ներկայություն, ինչպես արդեն ունի Թուրքիան, գոնե քաղաքականն ապահովում է:*

*Հարկ է նաեւ նշել, որ տարածաշրջանի քաղաքական այս երկու հզոր ուժերը, որոնք մշտապես մրցակցել են միմյանց հետ, ունեն Հարավային Կովկասը իրենց ազդեցության տակ վերցնելու եւ այնտեղ «մեծ եղբոր» դերը ստանձնելու հավակնություններ: Այդ իսկ պատճառով հավասարապես իրենց մրցակիցն են համարում Ռուսաստանին, առանց այդ մասին բարձրաձայնելու:*

*Էրդողան-Ռայիսի հանդիպման հաջորդ օրը Իրանի արտգործնախարար **Հոսսեյն Ամիր Աբդոլլահիանը**, թուրքական «Դունյա» թերթի նոյեմբերի 29-ի վկայությամբ, հանդիպումը գնահատել է կառուցողական, նշել է Իրան-Թուրքիա հարաբերությունների բազմակողմանի զարգացման հարցում կողմերի ձեռք բերած համաձայնության մասին եւ ընդգծել է երկու երկրների միջեւ առկա տարաձայնություններն Էրդողանի Թեհրան նախատեսվող այցի ընթացքում հաղթահարելու հավանականությունը:*

*Արտգործնախարար Աբդոլլահիանի այս լավատեսությունը, սակայն, չի խանգարել «Timeturk»-ին, որ դեկտեմբերի 1-ի համարում հրապարակի «Իրանում ծավալվող Թուրքիային միտված հակաքարոզչության պատճառը» խորագրով հոդվածը: Հոդվածում այս թերթն անդրադառնում է Իրանի աշխարհաքաղաքական առաջադրանքներին, ունեցած համանուն կորուստներին Ղարաբաղում եւ առհասարակ Կովկասում, ինչպես նաեւ ողջ տարածաշրջանում:*

*Հոդվածն արտատպված է «Turkiye» թերթից, հեղինակն է պրոֆ. **Մեհմեդ Շահինը**, ահա թե ինչ է գրում «Իրանում Թուրքիայի դեմ ուղղված քարոզչության պատճառը» վերնագրված հոդվածում:*

«Երկար ժամանակ է ի վեր Իրանում տարօրինակ քարոզարշավ է ծավալվում Թուրքիայի եւ նախագահ Էրդողանի դեմ: Գրեթե ամեն օր իրանական մամուլը հանդես է գալիս Թուրքիայի եւ Էրդողանի դեմ բացասական հոդվածներով: Իրանում արդեն առօրյա սեանսի է վերածվել Թուրքիային եւ Էրդողանին վարկաբեկելը: Այս մոտեցումն այնքան պարզորոշ է, որ պատահական չես համարի, որովհետեւ Իրանի պես երկրներում վարչակարգը կատարելապես հսկում է մամուլը եւ այդ մասին իրանցիների գլխավորությամբ գիտի ողջ աշխարհը:

Առանց իշխող վարչակարգի թույլտվության եւ ուղղորդման անհնար է Թուրքիայի պես կարեւոր երկրի եւ նրա նախագահի դեմ առօրյա սեանսի վերածված քարոզչության ծավալումը: Հատկանշական է, որ Թուրքիային ուղղված վարկաբեկման հոդվածները գլխավորապես հայտվում են հենց վարչակարգին ենթակա մամուլում, իսկ վարկաբեկողներն ուղղակի Հեղափոխության պահապանների կորպուսի անդամներն են կամ պետական կառույցների պատասխանատու աշխատակիցներ:

Ընդհանուր առմամբ բացասական նյութերն ու վերլուծությունները հրապարակվում են Էրդողանի միտումնավոր ընտրված անհաջող լուսանկարներով, ինչպես նաեւ վերնագրեր եւ ենթավերնագրերով: Դրանց հեղինակները բան ու գործ թողած՝ իրենց ողջ ժամանակը վատնում են Թուրքիայի ու Էրդողանի գործողություններին հետեւելու վրա: Թերթերում լույս են տեսնում այնպիսի հոդվածներ ու հարցազրույցներ, որոնց բովանդակությանը ծանոթանալու դեպքում ակամա համոզվում ես, որ Իրանի մեծագույն թշնամին Թուրքիան եւ Էրդողանն են:

**Աշխարհաքաղաքական վրդովմունքով շարժվելը արդյունքի չհանգեցրեց**

Պարզորոշ պետք է ասել, որ վերջին տարիներին Իրանը տարածաշրջանում գլխավորում է կորուտի առավել մասնված երկրների ցանկը: Մի կողմից չի կարողանում ապահովել բնակչության բարեկեցությունը երկրում, մյուս կողմից կարեւոր դիրքեր է կորցնում տարածաշրջանում:

2000 թ. սկզբներին, այսինքն սեպտեմբերի 11-ից հետո, երբ ԱՄՆ-ը միջամտեց Աֆղանստանին, վնասազերծելով «Թալիբանին», ապա օկուպացրեց Իրաքն ու տապալեց Սադդամին, չափազանց գոհունակություն պատճառեց Իրանի վարչակարգին: Մեղմ ասած, Իրանը նպաստավոր դերակատարում ունեցավ տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմական միջամտության համար: Շնորհիվ ԱՄՆ-ի նա էլ ձերբազատվել էր ինչպես «Թալիբանից», այնպես էլ Սադդամից:

ԱՄՆ-ի միջամտությունից հետո տարածաշրջանում Իրանի ազդեցության աճին զուգընթաց սկսեցին վերստին խոսել Իրանի շիականության վրա հիմնված «աշխարհաքաղաքականության», Հեղափոխության պահապանների կորպուսի եւ «Ալ-Քուդսի» ակտիվացման մասին:

Սակայն Իրանը հրապարակվող հոդվածների, արտահայտվող կարծիքների ազդեցությամբ սխալ գիծ բռնեց, փոխանակ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու հարեւանների հետ, հաղթահարելու համար իր մեկուսացվածությունը, զարկ տվեց աշխարհաքաղաքական ծրագրերին:

Արդյունքում հանգեց զրո արդյունքի, կրելով զգալի կորուստներ բոլոր ոլորտներում: Էլ չենք խոսում մարդկային եւ նյութական ահռելի կորուստների մասին:

**Որտե՞ղ է կորուստներ կրել Իրանը**

Իրանը կորուստներ է կրել Ղարաբաղ/Կովկասի, Իրաքի եւ Աֆղանստանի պես երկրներում, որոնց նկատմամբ ուներ առավել մեծ հավակնություններ:

Սիրիայում, Եմենում եւ Լիբանանում շարունակում է գին վճարել:

Անցյալ տարի Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ծագած ու որպես «44-օրյա պատերազմ» պատմության մեջ մտած ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանի հաղթանակը խիստ մտահոգեց Իրանին:1990-ի սկզբներին, երբ օկուպացվում էին Ղարաբաղն ու հարակից շրջանները, Հայաստանին աջակցող Իրանը երկրորդ պատերազմում չկարողացավ աջակցել, ինչպես հարկն է, իսկ Թուրքիան, առանց երկմտության, զորավիգ կանգնեց Ադրբեջանի արդարացի դատին:

Իրանին չհաջողվեց Կովկասում պաշտպանել իր ագրեսոր դաշնակցին: Նոր պայմանները թույլ չտվեցին նրան վարվել այնպես, ինչպես 1990-ականներին: Հիմա Իրանի առջեւ կա երկու ճանապարհ. կա՛մ առաջվա պես պիտի շարունակի սատար կանգնել Հայաստանին, կա՛մ էլ մտնի «Կովկասի վեցյակի» մեջ:

Չմոռանալ, որ Իրաքի վերջին ընտրություններում իրանամետ կուսակցությունների պարտությունն անհանգստացրել է Իրանին: Աֆղանստանում թալիբների իշխանության գալը նմանապես Իրանի սրտով չէր: Ի չիք են դառնում նրա աշխարհաքաղաքական երազանքները: Թերեւս դրանով է պայմանավորվում Իրանի՝ Թուրքիային եւ Էրդողանին ուղղված քարոզչությունը: Վարկաբեկելով Էրդողանին, նա տարածաշրջանում փորձում է թուլացնել Թուրքիայի ազդեցությունը, միաժամանակ քողարկում իր անհաջողությունը: Ինչպես երեւում է՝ դեռ դասեր չի քաղել փորձություններից»:

# Տնտեսագիտության նվիրյալը. ապագան պատկանում է գիտությանը

Գաղտնիք չէ, որ ցանկացած երկրի տնտեսության զարգացման մակարդակն անխզելիորեն պայմանավորված է գիտության հարաճուն զարգացման հետ:Այս տեսանկյունից գիտնականի դերակատարությունը տնտեսության զարգացման գործում հսկայական է: Հանդիպումը վաստակաշատ գիտնական **Վլադիմիր Հարությունյանի** հետ անցավ գործնական եւ հետաքրքրական մթնոլորտում:

Օգտագործելով իր մասնագիտական փորձը, գործնական գիտելիքներն ու հմտությունները՝ Վլ. Հարությունյանը 2004 թ.ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, որտեղ եւ աշխատում է մինչ օրս:

2010թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Դասախոսել է ՀՊՏՀ-ում եւ ԵՊՀ-ում: 2013թ. պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, 2014թ., 2016թ. եւ 2018թ. «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթների հաղթող է: 27 մենագրության եւ ավելի քան 140 գիտական հոդվածների հեղինակ է:

Վլ.Հարությունյանը գիտականորեն հիմնավորել է հետեւյալ դրույթները.

1. Բյուջեի եկամուտները դասակարգել ըստ հարկ վճարողների խմբերի, ըստ հարկման օբյեկտների ու բազաների եւ ըստ ոլորտների. մոտեցումներ՝ որոնք հարկային օրենսդրությամբ դրված են հարկման մեխանիզմների հիմքում:Նրանք իրենց արտացոլումը չեն ստացել «Բյուջետային համակարգի մասին» եւ ամեն տարի ընդունվող «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներում.

2. Համապատասխան փոփոխություններ կատարել հարկային օրենսդրության մեջ, որոնք որոշակիացված են ինչպես ըստ առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքների, այնպես էլ ըստ դրանց համապատասխան հոդվածներում կատարվելիք փոփոխությունների՝ հնարավորություն ընձեռելով ընդլայնելու առանձին հարկատեսակների հարկման բազաները եւ բարձրացնելու հարկման արդյունավետությունը.

3. Նոր մոտեցումներ բյուջետային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ, որոնք կիրառական նշանակություն կարող են ունենալ հանրապետությունում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման բնագավառում:

4. Մինչեւ 30 տոկոսի հասցնել հարկեր / ՀՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցանիշը եւ այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ:

5. Հրաժարվել արատավոր հարկային օրենսդրությունում հաճախակի ու մասնակի փոփոխություններ կատարելու պրակտիկայից եւ առաջարկել այնպիսիք, որոնք կնպաստեն.

- անուղղակի եւ ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը՝ հօգուտ երկրորդի, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա,
- պրոգրեսիվ հարկման մոտեցումների գործնականում կիրառմանը. մոտեցումներ՝ որոնք կիրառվում են զարգացած երկրներում.
- միասնական հարկի ձեւավորման ու գործնականում կիրառման ճիշտ մոտեցումներ արմատավորելուն, բայց ոչ այնպես, ինչպես կատարվել է «պարզեցված հարկի» եւ հաստատագրված վճարների պարագայում, որոնք չեն բխում հարկման արտերկրյա փորձից ու հարկման տեսություններից.
- հարկային բեռի ինչպես արդարացի, այնպես էլ համաչափ բաշխմանը: Վերջինս ենթադրում է օրենքի առաջ հարկատուների հավասարության սկզբունքի ֆիսկալային կենսագործում: Ընդ որում, հարկային բեռի բաշխման հիմքում ֆիզիկական անձանց պարագայում անհրաժեշտ է դնել ընտանիքի անդամների, իսկ իրավաբանական անձանց պարագայում՝ վերջիններիս համախառն եկամուտը:

Քննական վերլուծության են ենթարկվել ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշները, ներկայացվել են մոտեցումներ դրանց վերանայման ուղիների վերաբերյալ, ինչպես նաեւ արվել են առաջարկություններ ՓՄՁ-ների գործունեությունը խթանող հարկային եւ վարկային խթանների վերաբերյալ:

Համակողմանիորեն ուսումնասիրվել են տնտեսության առաջընթացի ապահովման գործում վճռորոշ ազդեցություն ունեցող հարկային եւ մաքսային մարմինների գործունեության զարգացման հիմնախնդիրները, հարկային վարչարարության բարելավման տեսական եւ մեթոդաբանական մոտեցումները, տարածաշրջանային ինտեգրման ազդեցությունը հարկային եւ մաքսային համակարգերի վրա, միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային եւ մաքսային ծառայողի վարվելակերպի արմատական վերափոխման հնարավոր ուղիները:

Վերլուծությամբ եւ միջազգային փորձի խորը ուսումնասիրությամբ բացահայտվել են հարկային եւ մաքսային մարմինների գործունեության կատարելագործման օպտիմալ ուղիները՝ շեշտադրելով նաեւ կազմակերպչական կառուցվածքի օպտիմալացումը, եւ հարկային եւ մաքսային ծառայողի վարվելակերպի կանոնների բարելավումը:



Հարկ է նշել, որ Վլադիմիր Հարությունյանի երկու որդիները՝ Տիգրան եւ Դավիթ Հարությունյանները տնտեսագիտության դոկտորներ են, իսկ դուստրը՝ Աննան, տնտեսագիտության թեկնածու: Նրանք ներկայում աշխատում են ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում:

Չպետք է մոռանալ, որ ապագան պատկանում է գիտությանը:

**Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ**
**Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր,**
**ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ**

## Հայրենիքի համար




Լույս է տեսել **Տիգրան Պետրոսյանցի** «Հայրենիքի համար» (կենսա-մատենագիտական հանրագիտարան) գիրքը 212 էջ ծավալով:Այն նվիրված է Հայաստանի անկախության վերակերտման համար Արցախյան պատերազմի մասնակից Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանականներին:

Հարկ է նշել, որ Արցախյան երեք պատերազմներին գործուն մասնակցություն են ունեցել համալսարանի երեք հարյուրից ավելի շրջանավարտներ եւ ուսանողներ: Անհավասար մարտերում հերոսաբար զոհվեցին 52 մանկավարժականցիներ: Նրանց հիշատակը հավերժացնելու համար 2000թ. համալսարանի Խանջյան փողոցի վրա գտնվող մասնաշենքի բակում կանգնեցվել է խաչքար-հուշակոթող: Արցախյան երրորդ պատերազմից հետո բանասիրական ֆակուլտետի շենքի մուտքում կանգնեցվեց հուշարձան-կոթող, որի կենտրոնական կերպարը 1602 թվականին Արցախի Ծիծեռնակավանքում կերտված խաչքարն է:

Գրքից տեղեկանում ենք նաեւ, որ 2020թ. Արցախյան պատերազմի ընթացքում հարյուրավոր ուսանողներ մասնակցում էին կամավորական աշխատանքների՝տեղահանված արցախցիների տեղավորման, սննդով եւ հագուստով ապահովման եւ աջակցության այլ ծրագրերի համար:

- «Բայց ուժերն անհավասար էին:Հայերի դեմ կռվում էին ոչ թե ադրբեջանի,այլ հիմնականում թուրքական սպաների մարզած հատուկ պատրաստության զորամիավորումներ, տարբեր երկրներում հավաքագրված վարձկաններ, երրորդ երկրներից ներկրված ամենաարդիական զինատեսակներ, քիմիական ու ֆոսֆորային զենք»,- գրում է դոկտոր-պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը**:

Համալսարանի հերոսներին է նվիրված գիրք-հանրագիտարանը, որտեղ զետեղված են նրանց կենսագրականները լուսանկարներով:

Գրքի տպաքանակը՝ 400 օրինակ: Այն պատմագիտական արժեք ունի եւ կարդացվում է սրտի թրթիռով:

**Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ**
**Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու**

# Հոգեվարքի ջղաձգումներ. Աշոտ Մինասյանի կալանավորումը

**ՆԱԻՐ ՅԱՆ**

Վերաքննիչ քրեական դատարանը՝ դատավոր **Տիգրան Սիմոնյանի** նախագահությամբ, բավարարել է դատախազության բողոքը եւ կայացրել «Սիսական» ջոկատի հրամանատար **Աշոտ Մինասյանի** նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը:

Հիշեցնենք, որ Աշոտ Մինասյանին կալանավորելու առաջին փորձը եղել է 2020 թվականի նոյեմբերին՝ Նիկոլ Փաշինյանի՝ կապիտուլյացիոն հայտարարության փաստաթղթի ստորագրումից հետո, երբ տեղի էին ունում զանգվածային ձերբակալություններ: Այդ օրերին ձերբակալվեց նաեւ Աշոտ Մինասյանը:

«Սիսական» ջոկատի հրամանատարը մեղադրվում է իշխանության յուրացումը նախապատրաստելու, պետական, քաղաքական կամ հասարակական գործչի գործունեությունը դադարեցնելու նպատակով սպանության նախապատրաստման եւ ապօրինի զենք-զինամթերք պահելու մեջ:

Ուղիղ մեկ տարի առաջ մեծ աղմուկ բարձրացավ, թե իբր Աշոտ Մինասյանը պատրաստվում է Նիկոլ Փաշինյանի սպանության նախապատրաստությանը: Զավեշտալի բառախաղի վերածված մեղադրանքն ավելի ընդգծեց Փաշինյանի՝ իր անձն ու իշխանությունը «վտանգներից պաշտպանելու» հոգեվարքային վարքագիծը: Սակայն մեկ տարի անց, արդեն այսօր, դատական իշխանություններն իրականացրին ազատամարտիկին կալանավորելու քաղաքական որոշումը:

Փաստաբան **Միհրան Պողոսյանը** դեկտեմբերի 1-ին է տեղեկացրել, որ լեգենդար



հրամանատարը կալանավորվել է. «Վերաքննիչ քրեական դատարանի տարած-հետ բերած, անունով դատավոր Տիգրան Սիմոնյանի ակնհայտ ապօրինի որոշմամբ «Սիսական» ջոկատի լեգենդար հրամանատար, արցախյան երեք պատերազմների մասնակից Աշոտ Մինասյանը կալանավորվեց:

Աշոտ Մինասյանը շուրջ մեկուկես ժամ սպասում էր կալանավորվելուն: Սույն դատավորը բավարարեց քննիչի՝ դեռեւս 2020 թվականի նոյեմբերի 15-ի միջնորդությունը, որով փաստեց, որ կալանք տալու համար փաստերն էական չեն, էականը իշխանության ցանկությունն է:

Ընթանում է «Սյունիքի գլխատում» օպերացիայի երկրորդ փուլը, ինչին օժանդակում են տիգրանսիմոնյան դատավորները. արդյունքը՝ առաջիկայում»:

Այս տարվա նոյեմբերի 22-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը մերժել էր Աշոտ Մինասյանին կալանավորելու մասին դատախազության որոշումը, իսկ Վճռաբեկ դատարանը մասնակի բավարարել էր դատախազության բողոքը եւ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Փաստորեն, կալանավորման որոշումը բավարարվեց:

Արցախի Մարդու իրավունքների նախկին պաշտպան **Ռուբեն Մելիքյանն** արձագանքել է իրողությանը. «Վերաքննիչ դատարանի նորաթուխ դատավոր Տիգրան Սիմոնյանի որոշումն այն աստիճանի ապօրինի է, որ քրեական դատավարությունից թեկուզ 3-րդ կուրսի գիտելիք ունեցող յուրաքանչյուրի մոտ կարող է միայն սարկաստիկ ժպիտ առաջացնել:

Քեզ հետ ամեն ինչ պարզ է, Տիգրան: Ափսոս»:

Հայտնի է, որ Աշոտ Մինասյանը սյունեցի է, ծնունդով Սիսիանից, եւ պարբերաբար քննադատել է իշխանությունների վարած քաղաքականությունը, հայտնել իր դիրքորոշումը, որ հայրենիքը պետք է միայն զենքով պահել:

Հրամանատարին, որի մարտական անունն Աշոտ Երկաթ է, բարձր են գնահատում թե՛ քաղաքական, թե՛ զինվորական շրջանակներում:

Նրան կալանավորելու փաստին անդրադարձել է նաեւ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Գեղամ Նազարյանը**՝ նշելով. «Սյունիքի գլխին կարկտաբեր ամպերը կուտակվում են: Առուշ, Մխիթար, Մենուա, Արթուր, հիմա էլ՝ Աշոտ Երկաթ: Կամ գուցե ամպեր չեն կուտակվում Սյունիքի գլխին, այլ ոմն մեկի վախի նոպան է սաստկացել: Կալանավորես, չկալանավորես՝ քո դատավճիռը Երկնքում վաղուց է կայացել: Ամեն ինչ արա, որ դատավճիռդ էս երկրի վրա կայանա, որ այն դատավճիռը գոնե մեղմվի»:

# Փուչիկը տրաքեց





«Բազմաթիվ անգամ Առուշ Առուշանյանը նույն բնակիչներին օգնել է, եւ դա դիտել ընտրակաշառք՝ անընդունելի է: Զղջում եմ, որ սուտ ցուցմունք եմ տվել Առուշանյանի դեմ»,- Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նիստի ժամանակ հայտարարել է Քարահունջ համայնքի ղեկավար **Լուսինե Ավետյանը**:

Ստացվում է՝ Լուսինե Ավետյանը, որը նույնպես կալանավորված է, նախկինում մեղադրական սուտ ցուցմունք է տվել Առուշ Առուշանյանի դեմ: Իսկ դատական հերթական նիստի ժամանակ ասել է, որ սուտ վկայություն տալու համար զղջում է: Նա պատմել է, որ Գորիս համայնքի ղեկավարն ընդունել է բնակիչներին, լսել նրանց սոցիալական խնդիրները, դրա հիման վրա օգնություն հատկացնելու որոշում կայացրել, բայց դա ընտրակաշառք համարելն անընդունելի է:

Լուսինե Ավետյանը նաեւ նշել է, որ Քարահունջի բնակիչների վրա եւս ճնշումներ են գործադրվել, որպեսզի նրանք հայտարարեն, թե Առուշանյանն իրենց ընտրակաշառք է տվել: Նա ասել է, որ ինքը սատարել է «Հայաստան», դաշինքին, նաեւ քարոզարշավ իրականացրել:

Լուսինե Ավետյանի հայտարարությունից հետո Առուշանյանի փաստաբան **Արմեն Մելքոնյանն** հայտարարել է. «Այս հսկայածավալ հատորների մեջ միակ ապացույցը, որն օգտագործվում էր Առուշ Առուշանյանի դեմ, մինչ այս պահը համարվում էր Լուսինե Ավետյանի ցուցմունքը. բոլորի աչքի առաջ այդ փուչիկը տրաքեց:

5 ամիս է՝ այս ցուցմունքի հիման վրա Առուշանյանը կալանքի տակ է: Ո՞վ է դրա համար պատասխան տալու: Լուսինեն պարզ ասաց՝ հասկացել է, որ ոչ թե ինքն է թիրախը, այլ Առուշանյանը, եւ կեղծ ցուցմունք է տվել, որպեսզի դուրս գա կալանավայրից:

Անկեղծ եմ ասում՝ Լուսինեի արածն ինձ համար հերոսությանը հավասար քայլ է: Նրան հարց տվեցին՝ արդյո՞ք հիմա չի վախենում, նա պատասխանեց, որ չի ուզում կեղծիքով ապրել եւ պատմեց, թե ինչ է կատարվել իրականում»:

Զավեշտալին այն է, որ 2021 թվականի հունիսի 20-ի ընտրություններից ամիսներ առաջ Առուշ Առուշանյանը Գորիսի սոցիալապես անապահով բնակիչներին օգնություն է բաժանել, դա դիտարկվել է որպես ընտրակաշառք: Առուշ Առուշանյանն առաջին տարին չէ Գորիսի քաղաքապետ, նրան ճանաչողները շատ լավ գիտեն, որ իշխանափոխությունից առաջ էլ, միշտ Գորիսի քաղաքապետարանը սոցիալական ծրագրեր է իրականացրել, օգնել կարիքավորներին: Բայց այս անգամ այդ քայլը համարվեց քրեորեն պատժելի: Մինչդեռ ընդամենը մեկ ամիս առաջ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախօրեին, քպ-ականները գումար են բաժանել եւ դա անվանել սոցիալական աջակցություն: Իշխանական թեկնածուների արարքը քրեորեն պատժելի չի համարվել, անգամ կասկածելի չի թվացել՝ այն որպես ընտրակաշառք դիտարկելու համար:

Առուշ Առուշանյանի գործն արդեն դատաքննության փուլում է: Դատարանն անցել է եղած ապացույցների ուսումնասիրությանը: Որոշում է կայացվել սկզբում քննել ամբաստանյալներին, հետո՝ վկաներին:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում Առուշ Առուշանյանի եւ մյուսների գործով դատական նիստը հետաձգվել է մինչեւ դեկտեմբերի 27-ը:

Հիշեցնենք, որ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը հուլիսի 16-ից կալանքի տակ է: Նա մեղադրվում է ԱԺ արտահերթ ընտրություններում ընտրողներից առավելագույն քվեներ ստանալու համար նախընտրական քարոզարշավի ընթացքում ուղղակի դիտավորությամբ ծանր հանցագործություն նախապատրաստելու, այն է՝ ընտրություններին մասնակցելու եւ «Հայաստան» դաշինքի օգտին կողմ քվեարկելու համար երկու կամ ավելի ընտրողի կաշառք տալու մեջ:

Ըստ առաջադրված մեղադրանքի՝ Առուշ Առուշանյանը Քարահունջի վարչական ղեկավար Լուսինե Ավետյանի միջոցով կազմակերպել է, որ քարահունջցիները մասնակցեն ընտրություններին եւ նրանց հարկադրել քվեարկել «Հայաստան» դաշինքի օգտին:

Առուշ Առուշանյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

**ՆԱԻՐ ՅԱՆ**

**Ազգ** ՀԱՎԵԼՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 45(5685)
3 ԴԵԿՏԵՄԲԵՐ
2021

# «Այսօր, առավել քան երբեւէ, անհրաժեշտություն է հայոց պատմության բոլոր փուլերի ուսումնասիրումը».

## «Վահան Թեքեյան» մրցանակակիր Արման Եղիազարյան

«Հայոց պատմության կարեւորագույն փուլերից մեկը՝ Բագրատունյաց դարաշրջանը, երբեք խորությամբ ու ըստ արժանվույն չի ուսումնասիրվել: Եղել են տարբեր թեմատիկ անդրադարձեր, սակայն թագավորների, նրանց գործունեության պատմաքաղաքական գնահատականի, ձեռքբերումների եւ թերացումների մասին որեւէ առանձին ուսումնասիրություն չի եղել: Ես խորամուխ եղա նման հետազոտության եւ մատենաշարով փորձեցի ներկայացնել Բագրատունի հայոց արքաների գահակալության տարիները»,-նշում է Հայաստանի Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխության 2021 թվականի «Հայագիտության» անվանակարգի հաղթող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արման Եղիազարյանը**:

Վերջինս մրցանակի է արժանացել «**Աշոտ Գ Ողորմած թագավոր հայոց**» աշխատության համար: Մենագրությունն էական ներդրում ունի հայագիտության մեջ, քանի որ ներկայացնում է չուսումնասիրված պատմափուլերից մեկը՝ Բագրատունիների թագավորության շրջանը: Օգտվելով գիտական շրջանառության մեջ նաեւ երբեւէ չօգտագործված աղբյուրներից՝ Արման Եղիազարյանը ոչ միայն ներկայացրել եւ վերլուծել է Աշոտ Գ Ողորմած թագավորի գործունեությունը, այլեւ խորությամբ բացահայտել Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի պատմությունը, որը նախկինում մանրամասնորեն ուսումնասիրված չէր:

Աշոտ Առաջին, Աշոտ Երկաթ, Աբաս, Աշոտ Գ Ողորմած.սրանք մատենաշարի այն առանձին գրքերն են, որոնցում հեղինակը բացահայտել է Բագրատունի թագավորների գործունեության՝ դեռեւս չբացահայտված կողմերը, ներկայացրել նրանց որպես պետական-քաղաքական գործիչ, բարեգործ կամ հայոց պատմության մեջ այլ դերակատարում ունեցող թագավոր:

«Աշոտ Գ Ողորմածի կերպարը մեզ համար բացահայտված չէր: Նա քիչ ուսումնասիրված, բայց խոշոր քաղաքական դեմք էր, որ կրել է «թագավոր թագավորաց ամենայն տիեզերաց» տիտղոսը: Ի՞նչ տիտղոս էր սա, ոչ ոք չի անդրադարձել: Նրա մասին մի քանի էջով կա միայն Ասողիկի մոտ. պատմաբանները բավարարվել են միայն պատմիչի տեղեկությունները լուսաբանելով»,-նկատում է Արման Եղիազարյանն ու վստահեցնում՝ թեեւ նոր աղբյուրներ գտնելը, եղածները նորովի «խոսեցնելը» դժվար աշխատանք է, սակայն դրանք հնարավորություն են տալիս խորությամբ ուսումնասիրել Հայաստանի այդ ժամանակաշրջանը:

Պատմաբանն այն կարծիքին է, որ պետք է խոր քննության առնել տարբեր աղբյուրներում եղած տեղեկատվությունը, լուսաբանել իրարամերժ տեսակետները, ժամանակին բնորոշ իրադարձություններով բացել թագավորների կերպարները եւ պատմական խորքով ներկայացնել տվյալ ժամանակաշրջանը:

Անցնող տարում տպագրվել է Բագրատունյաց հաջորդ արքայի՝ Սմբատ Բ Տիեզերակալի մասին գիրքը. այս պահին հեղինակն աշխատում է Գագիկ Ա Շահնշահի դարաշրջանի ուսումնասիրության վրա, իսկ Հովհաննես Սմբատի եւ Գագիկ Բ թագավորների մասին մենագրություններով կարծես կամբողջանա եւ հստակ կերպարանք կստանա Բագրատունյաց դարաշրջանի ուսումնասիրումը: Հեղինակի նպատակն է նյութերն ամբողջացնել եւ տպագրել Բագրատունյաց դարաշրջանին վերաբերող երկու մեծ հատոր՝ «Հայաստանը Բագրատունյաց դարաշրջանում. քաղաքական պատմություն» խորագրով: Երկհատորյակով կիրականանա Բագրատունյաց դարաշրջանի հայոց պատմության ուսումնասիրության հեղինակի առաքելությունը:






Պրոֆեսոր Արման Եղիազարյանը ղեկավարում է ԵՊՀ-ի Սփյուռքագիտության ամբիոնը եւ «Հայաստանը Բագրատունյաց դարաշրջանում» նյութը դասավանդում է մագիստրատուրայում: Ցավով է նկատում՝ ապագա պատմաբանները նախընտրում են ուսումնասիրել հիմնականում պատմության ժամանակակից փուլը. «Ուսանողներն այդ միտումը հիմնավորում են մասնագիտության հեռանկարայնության տեսանկյունից՝ կարծելով, որ մեր երկրում ցանկացած տեղ աշխատելու համար ցանկալի է լինել արդի շրջանի պատմության մասնագետը»,-նշում է պատմաբանն ու վստահեցնում՝ մշտապես սովորեցնում է ուսանողներին, որ պատմության արդիականությունը միայն ժամանակակից պատմության ուսումնասիրությամբ չի ամփոփվում եւ նույնքան արդիական է նաեւ, օրինակ, Բագրատունյաց դարաշրջանի ուսումնասիրությունը՝ մի շարք պատճառներով:

Որպես օրինակ Արման Եղիազարյանը նշեց, որ մեր հարեւանները անթաքույց նենգափոխում են հայոց պատմությունը. պետք է նման նենգափոխումներին տալ հիմնավորված պատասխաններ՝ արմատները փնտրելով հենց միջնադարում:

Պրոֆեսորը ջանք չի խնայում, որ իր ուսանողներին ցույց տա տնտեսական, քաղաքական, մշակութային պատմության չուսումնասիրված, լրացման կարիք ունեցող եւ բաց դաշտերը, առանձին անհատներին, երեւույթներին, աղբյուրներին, ու զարգացումներին, որոնք սպասում են իրենց հետազոտողին:

«Պատմագիտության զարգացման միջազգային տեմպերին ինտեգրվելու, մրցունակ լինելու համար դեռ բավարար վիճակում չենք: Մեզանում վաղուց խախտված է հայոց պատմությունը ըստ ժամանակաշրջանների ուսումնասիրելու համամասնությունը. միջնադարագետներ, հնագույն շրջանի մասնագետներ քիչ են, այնինչ կան այդ խնդիրները լուծելու բոլոր հիմքերը, պարզապես պետք է տեղի ունենա համապատասխան խնդրադրում, որ մեզ պետք են պատմաբաններ մեր պատմության բոլոր դարաշրջանների ուսումնասիրության առումով»,-նշեց Արման Եղիազարյանը:




Նա այն կարծիքին է, որ խնդիրներ կան նաեւ մեր գաղափարաբանության մեջ, քանի որ, օրինակ, Երեւանն ադրբեջանական համարելու հարեւան երկրի պատմաբանների եւ ղեկավարների պնդմանը հակադարձող, այդ պնդումների սնանկությունը հիմնավորող թեմայի ուսումնասիրումը պատմությամբ զբաղվող հաստատություններից որոշները համարում են ոչ այնքան արդիական ու հեռանկարային:

Արման Եղիազարյանը նաեւ նկատում է, որ անկախության տարիներից սկսած մեր երկրում հայագիտության հանդեպ կա լուրջ մոտեցում, իսկ վերջին 10 տարիներին հատկապես պետությունը հակված է հայագիտական թեմաներին տալ մրցակցային առավելություն:

«Մենք խնդիրներ ունենք գիտական քաղաքականություն վարելու տեսանկյունից: Բուհերը եւ ակադեմիական հիմնարկները կարիք ունեն փոխելու գիտության զարգացման քաղաքականությունը: Պետք է սահմանել խնդիրներ, ապահովել նպատակադիր ընթացք՝ անցյալի փորձը հասկանալու, մեր պատմությունը այլոց հարձակումներից պաշտպանելու եւ սերունդների դաստիարակությունը ապահովելու համար.եղած ռազմավարությունը հստակ չէ»-նշեց Արման Եղիազարյանը:

ԵՊՀ Սփյուռքագիտության ամբիոնի վարիչ Արման Եղիազարյանի հետաքրքրության մյուս շրջանակը Սփյուռքի ձեւավորման պատմության շրջանն է: Այդ համատեքստում նա քաջածանոթ է Թեքեյան մշակութային միության ազգանվեր գործունեությանը ինչպես Սփյուռքում, այնպես էլ մեր երկրում՝ սկսած 1991 թվականից: «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությանը մասնակցել է վստահությամբ, որ յուրաքանչյուր մասնակցի վաստակը գնահատվելու է ըստ արժանվույն եւ անաչառության դիրքերից:

«Այս ամենամյա միջազգային մրցանակաբաշխությունն անչափ կարեւոր իրադարձություն է մշակույթի եւ գիտության բնագավառում: Հույս ունեմ, որ «Հայագիտության» մրցանակը հետագա տարիներին եւս կպահպանվի»,-նշեց Արման Եղիազարյանը:

Նշենք, որ Հայաստանի եւ ԱՄՆ եւ Կանադայի Թեքեյան մշակութային միությունների համատեղ նախաձեռնությամբ արդեն 27-րդ անգամ անցկացվող «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությունն իրականացվում է «Շաքե Ղազարյան» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Այս տարիներին մրցանակների եւ դրամական պարգեւների են արժանացել հարյուրից ավելի արվեստագետներ, գիտնականներ:

# Հովիկ Աֆյանի «Կարմիր»-ը ճանաչվել է տարվա «Լավագույն գեղարվեստական գիրք»




«**Ազգ**»-ի վաղեմի աշխատակից, երիտասարդ գրող եւ այժմ հեռուստալրագրող Հովիկ Աֆյանի «Կարմիր» գիրքը ճանաչվել է տարվա «Լավագույն գեղարվեստական գիրք»՝ հաղթելով TCK Publishing-ի կազմակերպած միջազգային մրցույթում: Մրցույթն անցկացվել է առցանց ձեւաչափով:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «Կարմիր»-ը մեր երկրից միակ գիրքն է եղել, որը մասնակցել է միջազգային մրցույթին՝ ներկայացնելով Հայաստանը: Այն հաղթել է ընթերցասերների քվեարկության արդյունքում:

«Շատ ուրախ եմ, որ «Կարմիր»-ը ճանաչվել է տարվա «Լավագույն գեղարվեստական գիրք»: Ու քանի որ այն ամբողջ մրցույթում հարյուրավոր գրքերի մեջ միակն էր Հայաստանից, այսօր կարող եմ հանգիստ գլուխս դնել բարձին՝ վստահությամբ, որ մի բան արեցի Հայաստանի համար: Շնորհակալ եմ բոլոր ընթերցողներին, որոնց օգնությամբ տեղի ունեցավ այս հաղթանակը»,- նշում է Հովիկ Աֆյանը:

Գիրքը լույս է ընծայել «Անտարես» հրատարակչությունը:

«Կարմիրը» գրքում հեղինակն ընդգծում է՝ պատերազմները փոխում են ամեն ինչ: Նույնիսկ նկարիչների սիրած գույնը կամ պարուհիների նախընտրած շարժումը: Անփոփոխ են մնում միայն մարդիկ, որոնք պատերազմում են կամ էլ խաղաղություն են որոնում՝ ամեն օր ավելի ու ավելի հեռանալով դրանից:

Այս գիրքը մարդկանց մասին է, որոնք սիրում կամ կռվում են ամեն մեկն իր ներսում, իր տանը, իր քաղաքում, իր երկրի սահմանին: Եվ այդ սերն ու կռիվը երբեք չեն ավարտվում:

# «Աստուա՜ծ իմ, ինչպէ՞ս զքեզ ըմբռնել»

## *Կոմպոզիտոր Երվանդ Երկանյանի հոբելյանական համերգին հնչեցին իր հեղինակած հոգեւոր եւ աշխարհիկ երգեր ու նվագներ*

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Երվանդ Երկանյանի** ծննդյան 70-ամյա հոբելյանին ընծայված համերգին Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը կատարվեցին կոմպոզիտորի հեղինակած՝ փոքր կտավի մի շարք գործեր եւ բարձրարվեստ մշակումներ: Համերգին մասնակցում էին չորս երգչախմբեր եւ Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը (գեղ. ղեկավար եւ դիրիժոր՝ **Սեդրակ Երկանյան**): Իր եղբոր արվեստին մի յուրօրինակ տուրք էր այդ երեկո Սեդրակ Երկանյանի դաշնամուրային մենանվագը: Նրա կատարմամբ հնչեց Ե. Երկանյանի «Ավետումը»՝ խոհական-խորը, ալեկոծ տրամադրությամբ, եւ երկի խորագրից ավելի բովանդակային ծավալով, որ երաժշտության ըմբռնման լայն ազատություն է ընձեռում: Դաշնակահարը դեռ վաղ խոստովանել է, որ իր ավագ եղբոր՝ Երվանդի օրինակն է ունեցել մանկուց՝ երաժշտությանը նվիրվելու, ստեղծագործելու շնորհի առումով: Երկու մաեստրոներ նույն գերդաստանից այսօր հայ երաժշտական մշակույթի փայլուն դեմքերի շարքն են դասվում, նրանց արվեստը՝ թե՛ արարման եւ թե՛ կատարման առումով, զգացմունքի կատարյալ անկեղծությունն ունի, մտքի զվարթությունը, առողջ եւ ապրեցնող տրամաբանությունը, մարդկայինը սերմանելու միտվածությունը եւ զորությունը, Աստվածային սիրո կնիքը, հայրենանվիրության ուխտը, դեպի Արարիչ ընթացքի համամարդկային փնտրումը...

«Արվեստագետի խնդիրն ու առաքելությունն, իմ կարծիքով, աշխարհն ու մարդկանց դարձնել ավելի մարդկային եւ բարոյական,- հարցազրույցներից մեկում ասել է կոմպոզիտորը:- Արվեստագետը պետք է իդեալը ցույց տա, բայց այդ իդեալը մեր օրերում կամ ուրիշ օրերում չի պատահում, իդեալը մարդու մեջն է: Իդեալը մարդկային ձգտում է՝ ապրելու համար ավելի ճիշտ աշխարհ «ստեղծել», որքան էլ այն հեռու կամ անհասանելի թվա»:

Իդեալի, կատարյալի, անեղծի փնտրումը կոմպոզիտորի մոտ ընթանում է աստվածայինի գոյաբանության արվեստային վերլուծության ուղով. մտածողի, քննողի, ստեղծագործողի ներքնատեսությանը, Արարչի էությունը բացահայտելուն, նրան ներդաշնակվելուն գալիս է օգնելու բանաստեղծական տողը, որ ինքը քաղում է Սուրբգրքային տեքստերից, միջնադարյան գրիչներից, արդի բանաստեղծներից: Դրա վկայություններն էին համերգային ծրագրում ընդգրկված շատ գործեր: Դրանցից էր «Սաղմոս Ծ»-ն, որ առաջին անգամ հնչեց Երեւանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ, եւ որը նվիրված էր խմբավար **Հարություն Թոփիկյանի** հիշատակին: Ազդեցիկ, մերթ զուսպ-հուզական, մերթ մտքի բուռն ալեկոծումով գործն այս աղոթք եւ աղերս է, նվիրման մկրտարան: «Գեղարդ» երգեցիկ խմբին է նվիրված XIII դարի բանաստեղծ Հովհաննես Պլուզի խոսքով գրված «Արիք ի ծովակն իջնումք» ստեղծագործությունը՝ «Վեց խոհախրատական հայրեններ» շարքից: Այն ժողովրդական երգերի մի քանի մշակումների հետ կատարեց **Միեր Նավոյանի** ղեկավարած երգչախումբը: Բանաստեղծական խոսքի անթերի երաժշտական «ընթերցումներ» են «Տխուրաչյա միրհավ»-ը, «Երազներ իմ փութանցիկ»-ը, որ համապատասխանաբար կատարեցին «Արար» եւ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբերը:



Հոգեւոր, տաճարական շատ նվագների հեղինակն ու մշակողն է Երվանդ Երկանյանը: Նրա հեղինակած նմանատիպ գործերն Աստծո փնտրումի հարատեւ ջանքի արդյունքն են, ներքին ինքնակատարելագործման, ինքնազննության, Նարեկացիական խոկումների երաժշտական արտահայտություններն ասես, որ մեղեդիական մարմնացում են ստացել՝ աղոթարար հունչով եւ մարդկային ձայնով՝ մեր հոգու անկյունները ներթափանցելու, միաժամանակ Վե՜ր առաքվելու համար: Այդ մեղեդիներից մեկը միջնադարից մեզ հասած «Ու՞ր ես, մայր իմ» հոգեխորով մեղեդին է, որի նուրբ-արվեստավոր մշակումը թույլ է տալիս այն կատարելու տարբեր նվագարաններով: Ե. Երկանյանի հոբելյանական համերգին այն հնչեց **Համմիկ Մուրադյան-Հարությունյանի** բլուլով՝ «Տաղարան» համույթի նվագակցությամբ: Խաչելության ցավից, ծարավից տանջվող եւ մարդկության մաքրագործման ու փրկության համար տոչորվող Քրիստոսի դիմումն է Աստվածածնին, իսկ ես նրանում տեսնում եմ նաեւ ազգիս տառապանքի կնճիռը, որ խորացել է մեր օրերում: Հոգեւոր ստեղծագործության կատարումը Կոմիտասի սիրած նվագարանով՝ բլուլով, այս գործի նոր ընկալում է բերում, իսկ բլուլահարուհին կատարելապես հաղորդում է գեղեցկահյուս մեղեդու դրամատիզմը, որ համընթաց թե՛ մարդկային է եւ թե՛ աստվածային...

Աստվածամոր պատկերը տեսլացավ Գրիգոր Նարեկացու «Աչքն ծով ի ծով» հոգեւոր նվագն ունկնդրելիս. Ե. Երկանյանի մշակմամբ՝ այն երգեհոնով կատարեց **Թերեզա Ոսկանյանը**: Վերջինիս նվագակցությամբ էլ թավջութակահար **Հենրի Երկանյանը** նվագեց Ս. Ջորափորեցու «Որ նշանաւ ամենայաղթ» էլեգիան: Համաչափ-մեղեդային-կառուցիկ, անչափ հոգեհույզ «Տեսիլքը» հեղինակի հուշապատումն է իր երազների եւ կորուստների մասին, կարոտն ու անբառ անհաշտությունը ծնողների բացակայությանը, թերեւս նաեւ՝ երիտասարդության տարիների սպասումների եւ իղձերի բախումն իրականությանը: Այս ամենի երաժշտական արտահայտությունն է «Տեսիլքը», որ կատարեց մաեստրո Սեդրակ Երկանյան եւ ջութակահար **Քրիստինե Չքչյան** դուետը:

«Աստուա՜ծ իմ, ինչպէ՞ս զքեզ ըմբռնեմ» հարցումը՝ **Գայանե Ղամբարյանի** ռեչիտատիվային երգեցողությամբ, ամենաազդեցիկ պահերից մեկն էր «Իրիկնային խորհուրդներ» լիրիկա-խոհական երկի: Որքան ձգտում ես նույնանալու աստվածային էությանը, այնքան գիտակցում ես քո անկատարությունը. բայց սա հուսակտուր հարցում չէ, այլ մաքրագործվելու անընդհատ աշխատանք, որ ոնց առաջներում ձեւակերպել է կոմպոզիտորը, պիտի բերի ազատության եւ անկաշկանդության՝ ստեղծագործելիս, հասարակությանը մարդկային բարձր արժեքներով դաստիարակելուն, հոգեւոր պահանջմունքներն առաջ մղելուն:

«Տաղարանի» մեներգչուհի **Լուսինե Մարկոսյանի** մեցցոսոպրանոյով «Ուրախացան ազգք մարդկան» ստեղծագործությունը պատարագումի զորությունն ուներ՝ ներքին խռովքի եւ ներդաշնակման հաղորդմամբ: Եվ ես այն նմանեցրի Սուրբ պատարագներից հետո հաղորդության հացն ընդունելուն...

Նոյեմբեր 27, 2021

# Հենրի Պյորսելի «Դիդոնե եւ Էնեաս» օպերայի բեմադրությունը Գյումրիում







Մեծ իրադարձություն էր Գյումրիում: Գյումրու երաժշտասեր եւ թատերասեր հասարակությունը գեղեցիկ նվեր ստացավ. նոյեմբերի 13-ին եւ 15-ին «Օլիմպիկ» մարզահամերգային կենտրոնի դահլիճում ներկայացվեց անգլիացի կոմպոզիտոր Հենրի Պյորսելի «Դիդոնե եւ Էնեաս» օպերան: Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրությունից հետո, որը տեղի է ունեցել 1912թ.-ին Գյումրիում, սա տեղում իրականացված երկրորդ բեմադրությունն էր:

Ներկայացմանն ընդգրկված էին ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ երգիչներ, որոնցից շատերն առաջին անգամ էին հանդես գալիս օպերային դերերգով: Կարթագենի թագուհի Դիդոնեի դերում հանդես եկավ երիտասարդ երգչուհի **Մարի Մյուլլերը** (Ֆրանսիա), իսկ Էնեասի դերակատարն էր բազմաթիվ միջազգային եւ հանրապետական մրցույթների դափնեկիր, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի առաջնակարգ մենակատար **Հովհաննես Անդրեասյանը**: Ինչպես այս երկու գլխավոր դերակատարները, այնպես էլ **Նունե Գրիգորյանը**՝ Բելինդայի դերում, **Վարդուհի Թորոյանը**՝ երկրորդ տիկնոջ եւ նավաստու դերում, **Նելլի Սաղաթելյանը**՝ առաջին վհուկ, **Մարիամ Հովհաննիսյանը**՝ երկրորդ վհուկ, **Աննա Խաչատրյանը**՝ ոգի, փայլեցին իրենց գեղեցիկ ձայներով, անկաշկանդ վոկալով, բեմական արտաքինով եւ բնական խաղով, որը բխում էր դերերգի բովանդակությունից եւ օրգանական միասնություն կազմում երաժշտության հետ: Կախարդուհու դերում հանդես եկավ **Լիանա Վարդանյանը**, որն իր ձայնի թավությամբ եւ արտահայտիչ խաղով ստեղծեց իրական կերպար:

Դիրիժորն էր Իտալիայից հրավիրված **Ստեֆանո Ինտրիերին**, որը եվրոպական տարբեր թատրոններում երեք տասնյակից ավել անգամ արդեն ղեկավարել է Հ. Պյորսելի «Դիդոնե եւ Էնեաս» օպերան: Նրա հսկայական աշխատանքի շնորհիվ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի կամերային նվագախումբը, «Ռադիո Մարիամ»-ի երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ **Արփինե Մանուկյան**) եւ մենակատարները ցուցադրեցին համաձույլ երաժշտական կատարում:

Ներկայացման հաջողությանը մեծապես նպաստեց **Տաթեւ Հարթենյանի**՝ բեմական հագուստների բարձրաճաշակ ձեւավորումը:

Արժանին պետք է մատուցել այս նախաձեռնության հեղինակին՝ մեր հայրենակից, փարիզաբնակ **Նարինե Սիմոնյանին**, որի հսկայական ջանքերի շնորհիվ իրականացավ այս բեմադրությունը: Պետք է նշել նաեւ, որ Նարինե Սիմոնյանը միջազգային ճանաչում ունեցող երգեհոնահարուհի է, բարոկկո երաժշտության մասնագետ, որն իր մասնակցությունը բերեց նաեւ որպես կլավեսինահարուհի՝ նվագախմբի կազմում:

Ներկայացումն արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը, հանդիսատես, որը ծարավի է գեղեցիկ ներկայացումների եւ որը դահլիճից հեռացավ հետագայում նման նոր ներկայացումների ակնկալիքով:

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉՅԱՆ

Երգիչ, խմբավար

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Սելեսթ Նազելի Սնոուբեր. «Հայկական «բեկորները» կարող են աշխարհ պահել»

***Սելեսթ Նազելի Սնոուբերը** կանադացի բանաստեղծուհի է, պարուհի, պարադիր, արվեստաբան եւ մրցանակակիր մանկավարժ: Նա Բրիտանական Կոլումբիայի Սայմոն Ֆրեյզեր համալսարանի կրթության բաժանմունքի պրոֆեսոր է, պարի, արվեստի եւ պոեզիայի վերաբերյալ գրքերի ու բազմաթիվ հոդվածների հեղինակ: Գրել է «Մարմնավորված աղոթք», «Մարմնավորված հարցում. գրել, ապրել եւ լինել մարմնի միջոցով», «Աստծո արգանդում. ստեղծագործ սնուցում հոգու համար» արվեստագիտական գործերը, բանաստեղծական «Վայրի զբոսաշրջիկ. հրահանգներ վայրի զբոսաշրջիկին աստվածային կանացիից» եւ իր հայկական ինքնությունը քննող «Կապույտ սպասում» եւ «Կարոտի ոսկրածուծը» հատորները: Սելեսթը ստեղծում է առանձին վայրերին հատուկ բեմադրություններ, այդ կերպ Բրիտանական Կոլումբիայի համալսարանի բուսաբանական այգում ներկայացրել է լայնակտավ ներկայացումներ՝ շաղկապելով պոեզիան եւ պարը տարվա յուրաքանչյուր եղանակի: Հեղինակել է ձայնը, կատակերգությունը եւ պարը միավորող մենաներկայացումներ, որոնք ցուցադրել է Հյուսիսային Ամերիկայում եւ այլուր՝ համերգասրահներում, պատկերասրահներում, թանգարաններում եւ բացօթյա տարածքներում: Սելեսթի անձնական կայքէջն է՝ www.celestesnowber.com:*



*Լուսանկարը՝ Միքել Մաթեուսի*

**-Սե՛լեսթ, առաջին անգամ ձեր մասին եւ քո բանաստեղծությունները կարդացել եմ 2005-ին «Արարատ» անգլերեն եռամսյա հանդեսում: Հետո ձեր կարճ կենսագրությունը ներառեցի իմ «Հայերը համաշխարհային պարարվեստում» ուսումնասիրության մեջ: Վստահ եմ, վաղուց ժամանակն է, նույնիսկ ուշացել ենք, որ հայությունը ճանաչի իր հայրենակցուհուն: Պոեզիան եւ պարը տեսականորեն նման են, բայց դուք ապացուցում եք, որ գործնականում դրանք նույնպես նման են: Ինչպե՞ս են դրանք փոխկապակցված ձեր գեղարվեստական աշխարհում:**

-Իմ ընկալմամբ՝ թե՛ պարը, թե՛ պոեզիան ծնվում են մարմնից: Իմ աշխատանքը համատեքստված է հետազոտության մարմնավորված ձեւերում, եւ ես գրելուն նվիրվում եմ այնպես, ինչպես որ պարում եմ: Ուստի ես ուզում եմ, որ ռիթմը, պոեզիան, շարժումը, դադարը եւ կենսական ուժերը մտնեն իմ գրածի լեզվի մեջ, քանի որ դրանք նաեւ «բնակվում են» իմ պարի մեջ: Ես հաճախ եմ գրում պարելուց հետո, եւ իմ պոեզիան իմ պարի մեջ է մտնում միաժամանակ խոսելու եւ պարելու միջոցով: Բանաստեղծություններս հաճախ մեկնաբանում եմ ժամանակակից պարի միջոցով՝ ինչեցնելով դրանք շարժվելիս: Այս երկու արվեստի ձեւերն էլ տեսնում եմ որպես գեղեցիկ ուղեկիցներ եւ ոգեշնչումներ մեկը մյուսի համար:

**-Մի անգամ դուք ասել եք. «Երբ մենք կարող ենք բացվել մարմնի առջեւ, կարող ենք բացվել եւ սրտի առջեւ»: Բայց մինչ այդ միգուցե պետք է բացվենք մտքի՞ առաջ:**

-Կարծում եմ՝ միտքը, մարմինը եւ սիրտը փոխկապակցված են, եւ եթե մեկը բացենք, կարող ենք բացել եւ մյուսները: Այնուամենայնիվ, քիչ ուշադրություն է դարձվում մարմինը բացելուն, ինչը, իմ համոզմամբ, խորապես կապված է ներըմբռնման, տրավմայի բուժման եւ կեցության նոր ուղիների անցնելու, արտացոլման եւ ընկալման հետ: Ուզում եմ միտք՝ մարմնով եւ մարմին՝ մտքով: Եվ, իհարկե, ուզում եմ սիրտ... մշտապես:

**-Ձեր կենսագրությունը կարդալիս հետաքրքրական էր իմանալ, որ դուք սովորել եք նաեւ հուլա՝ պոլինեզական պարերգի մի տեսակ: Արդյո՞ք դա չափազանց հեռավոր ու տարաշխարհիկ չէ արեւմուտքցու համար՝ լինի կատարող, թե հանդիսատես:**

-Իմ պարային պրակտիկայի մի զգալի մասը բնության աշխարհում տվյալ վայրին հատուկ պարի կատարումն է: Ես զգում եմ, որ ստեղծագործությունը մի վայր է՝ լսելու այն, ինչը որ ի հայտ է գալիս, եւ ես ստեղծագործում եմ ծառերի, երկնքի, ծովի եւ բույսերի հետ համատեղ եւ բնությունը մեկնաբանելը ներգրավում եմ ժամանակակից պարի, հանկարծաբանության եւ պոեզիայի միջոցով: Հուլան պարի հին ավանդույթ է, որը խորապես կապված է սրբության եւ ստեղծագործության հետ: Հուլային տիրապետելու համար ինձնից մի ամբողջ կյանք կպահանջվի, եւ կարծում եմ, որ հուլայի արմատները պիտի ուսումնասիրել բնիկ գիտելիքների եւ շարժումների միջոցով, որոնք համատեղելի են երկրին ունկնդիր լինելու իմ արժեքների հետ: Ինքս հուլա չեմ կատարում, բայց այն աջակցում ու ոգեշնչում է շարժման այն ձեւերը, որոնք ես գնահատում եմ:

**-Ասում են՝ պարողների մեծամասնությունը սովորաբար չի կարդում: Դուք պարի վերաբերյալ ուսումնասիրությունների հեղինակ եք: Ո՞ւմ համար եք գրում պարագիտական աշխատությունները՝ պարողների՞, թե՞ իրենց՝ պարագետների:**

-Իմ հետազոտությունները խարսխված են արվեստի վրա հիմնված ուսումնասիրության եւ մարմնավորման վրա, ուստիեւ ինձ չեմ դասում պարագետների շարքում: Վերջին քսանհինգ տարիները ես նվիրել եմ մարմնից կատարվող գրառման պրակտիկան զարգացնելուն, հետազոտության մարմնավորված եղանակներին, որոնք ներառում են պարը, շարժումը եւ սոմատիկան՝ մարմնի հետ կատարվող աշխատանքի եւ շարժումների ուսումնասիրությունը, որոնք նաեւ կապեր ունեն տարբեր ոլորտների հետ՝ էկոլոգիա, ընդհանուր կրթություն, հոգեւորություն եւ պարային ու գեղարվեստական կրթություն: Ես ինձ հաճախ անվանում եմ «վերականգնվող պարադիր», քանի որ իմ բեմադրություններում ես շատ եմ դիմում հանկարծաբանությանը՝ միախառնված ժամանակակից ու արդիապաշտ պարի, ձայնի, պոեզիայի եւ նույնիսկ կատակերգության ձեւերի հետ: Ես զգում եմ, որ պարի իմացության լսարանն ավելացել է ավելի շատ ոլորտներում, զուտ պարագիտությունից բացի, եւ միշտ ձգտել եմ պարը, մարմինը եւ սոմատիկան հասցնել ավելի լայն լսարանների:

**-Ձեր երկրորդ անունը՝ Նազելի, հուշում է ձեր հայկական արմատների մասին: Յուրաքանչյուր հայի անձնական պատմությունը համընդհանուր հայկական պատմության մի մասն է: Ինչպիսի՞ պատմություններ, աշխարհագրական եւ մշակութային անուններ ու նյութեղեն հիշատակներ եք դուք փայփայում «հին երկրի» հետ կապված:**

-Մայրս՝ Գրեյս Թերզյանը, հոր եւ մոր հետ թողել է իր ծննդավայր Խարբերդը 1913 թվականին՝ Ցեղասպանությունից անմիջապես առաջ, երբ երեխա էր: Նա միակն էր, որ ծնվել էր Հայաստանում, իսկ իմ մյուս նախնիները սպանվել են Մեծ եղեռնի ժամանակ: Կարծում եմ, որ մայրս ողջ կյանքում չսպիացած վերք է ունեցել, որը բացահայտելու համար ինձնից բավական երկար ժամանակ է պահանջվել: Հայկական ժառանգությունն, իհարկե, շատ դժվարություններ է ներառում, բայց առկա է նաեւ մշակութային հարստություն, որը ես հետ եմ տանում իմ կյանքում: Դա է պատճառը, որ ես շատ նյութեղեն հիշատակներ չունեմ: Ունեմ մի քանի լուսանկար, որոնք փայփայում եմ: Այնուամենայնիվ, ես ունեմ բանավոր պատմությունների դրվագներ եւ հիշողությունն այն հրաշալի խոհանոցի, որով մեծացել եմ:



*Լուսանկարը՝ Քրիս Ռենդլի*

**-Եվ այս ժառանգությունն ինչ-որ կերպ արտացոլվո՞ւմ է ձեր պարի եւ պոեզիայի վրա:**

-Այո, մեծապես: Բազմաթիվ բանաստեղծություններ ու պարեր կան, որոնք ես ստեղծել եմ՝ կապված, ասենք, խաղողի տերեւների ու խաչքարերի, հայկական ճարտարապետության հետ. եկեղեցիներն ու վանքերը նույնպես միշտ գրավել են ինձ, քանի որ մանուկ հասակից դրանք ինձ ծանոթացրել են գրքերում: Մի քանի տարի առաջ մի մենաներկայացում ունեի՝ «Կինը կարմիր պղպեղ է ծնում», որտեղ քննել եմ իմ հայկական ժառանգությունը եւ օգտագործել եմ սմբուկի մասին իմ մի բանաստեղծությունը՝ «Սեւ սալորի կեղեւի տակ»: Ես այն կարծիքին էի, որ պոեզիա գրելը միջոց է պեղելու իմ հայկական ինքնության բեկորները, բացահայտելու նրա հետ կապված դժվարությունները, բայց նաեւ՝ բացառիկ հարուստ մշակույթը: Ես հաճախ ասում եմ, որ հայ ինքնության այս բեկորները կարող են աշխարհ պահել:

**-Դուք քննել եք ձեր հայկականությունը նաեւ ձեր վերջին՝ «Կարոտի ոսկրածուծը» ժողովածուի 54 բանաստեղծություններում: Պատմական հիշողության եւ ինքնության ճանաչման այս պոեզիան սփյուռքահայերի մեջ գոյություն ունի շուրջ մեկ դար: Ինչպե՞ս են ոչ հայերն ընկալում խորապես անձնական եւ միջանձնային գրականության այս տեսակը, հատկապես, եթե նրանք չեն առնչվում արդի միտումներին:**

-Ես անսահման հիացած եմ, որ մեծաթիվ ոչ հայեր ծանոթացել են այս գրքին: Շատերն ուսումնասիրում են իրենց ինքնությունը, եւ հատկապես Հյուսիսային Ամերիկայի բնիկները ցեղասպանության պատմություն ունեն: Շատերն ինձ ասել են, որ այդ գիրքն իրենց արիություն է տվել՝ փնտրելու իրենց անհանգստացնող անցյալը եւ կապվելու իրենց մշակույթների հետ՝ որպես բուժման վայր: Կարծում էի, որ ամենաշատը հայերին կհուզի այդ գիրքը, եւ այդպես էլ եղել է, բայց հատկապես ուրախացնում է ոչ հայերի դրական արձագանքը: Այսպիսով, իմ գիրքը դառնում է մեր մշակույթն ու պատմությունը ճանաչել տալու մի վայր:

**-106-ամյա ցեղասպանությունը հայերի համար ահազանգող իրողություն է եղել, սակայն այսօր Հայաստանում 44-օրյա պատերազմից հետո մենք բախվեցինք ցեղասպանական նոր փորձի: Ինչպես տեսնում ենք, ոչինչ չի փոխվել: Եվ չնայած ամեն ինչին, Հայաստանն ու նրա ժողովուրդը միշտ ողջունում են իրենց զավակներին: Երբեւէ եղե՞լ եք ձեր մոր երկրում, եթե ոչ, ապա գիտեք, որ այնտեղ միշտ սիրով կընդունեն ձեզ:**

-Հայաստանում եղել եմ 2007-ին եւ հայկական պարեր եմ սովորել: Ինձ դուր եկավ լինել այնտեղ եւ այդ ժամանակվանից ի վեր փափագում եմ վերադառնալ: Ամենից շատ ինձ ցնցեց, երբ Եղեգնաձորի գյուղերից մեկում ես ինձ ամենից շատ զգացի ինչպես իմ տանը: Իմ բարեկամ Անտուան Թերջանյանը տարին վեց ամիս բնակվում է այդ գյուղում: Երբ պարուհի Ռուզանը լավաշ հաց բերեց, եւ մենք բոլորս գյուղի ժողովրդի հետ փողոցում քոչարի պարեցինք, ես զգացի, որ իսկապես իմ հարազատ տանն եմ գտնվում: Ի դեպ, իմ վերջին գրքում կա մի բանաստեղծություն՝ «Մի պարող սիրտը՝ մյուսին» վերնագրով, որտեղ խոսում եմ այս մասին: Վերջին տողերն են՝

*Ահա՛ իմ ծագումը*
*մի ժամանակ, որը ես չգիտեմ*
*բայց որի համար ցավում եմ:*

Ցանկանում եմ վերադառնալ Հայաստան, երբ անցնեն կովիդի սահմանափակումները. Ես գիտեմ, որ իմ ժամանակը չի ավարտվել այս սիրելի երկրում...

ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ

# Արծվի Բախչինյան. «Քանի կա մարդկությունը՝ կլինի եւ կինոն»

*Զրույցս կինոգետ, բանասիրական գիտությունների թեկնածու Արծվի Բախչինյանի հետ է: Վերջինս կինոաշխարհին նվիրված արժեքավոր գրքեր ունի՝ «Հայերը համաշխարհային կինոյում» (2004), «Հայ կինո-100» (2012, հայերեն, անգլերեն, ռուսերեն), նաեւ կինոյին առնչվող հարյուրավոր հոդվածներ է հրատարակել Հայաստանի եւ Սփյուռքի գիտական ու զանգվածային մամուլում: 1996-ից որպես ՖԻՊՐԵՍՍԻ-ի (Կինոգետների եւ կինոլրագրողների միջազգային ընկերակցության) հայկական մասնաճյուղի հիմնադիր անդամ եւ փոխնախագահ մասնակցել է ընկերակցության տարեկան հանդիպումներին, իսկ որպես ՖԻՊՐԵՍՍԻ-ի ժյուրիի անդամ՝ Ստամբուլի, Թրոմսյոյի, Երեւանի, Սալոնիկի միջազգային կինոփառատոներին:*

*Արծվիի «մտերմությունը» կինոյի հետ սկսվել էր դեռ դպրոցական տարիներից, երբ «Ֆիլմ» թերթին նամակներ եւ փոքրիկ թղթակցություններ էր ուղարկում, ինչը, փաստորեն, պատահական չեղավ նրա կյանքում...Երկար տարիներ Արծվին անդամակցել է հայաստանյան կինոմիություններին (Կինոգետների եւ կինոլրագրողների միջազգային ընկերակցություն, Հայաստանի Ազգային կինոակադեմիա, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն), սակայն անցյալ տարի հարկ համարեց դուրս գալ դրանցից՝ չխզելով իր կապը կինոաշխարհից եւ չհրաժարվելով կինոյի մասին գրելուց: Մոտ ապագայում հրատարակվելու է նրա տարիների պրպտումների հանրագումարը՝ նվիրված ամերիկյան կինոյի եւ թատրոնի մեծ բեմադրիչ Ռուբեն Մամուլյանին:*

**-Արծվի, եւ ո՞րն է լավ կինոն...**

-Այն, որը դիտելուց հետո հասկանում ես, որ այդ մեկուկես-երկու ժամն իզուր չանցավ, որ այդ ընթացքում ինչ-որ բան «դիպավ» սրտիդ ու մտքիդ, միգուցե ինչ-որ բան փոխվեց քո մեջ, մի նոր բան հասկացար, ցնցվեցիր, զարմացար, ապրումակցեցիր, լիցքավորվեցիր, ապրեցիր կատարսիս կոչվող զգացողությունը... Ինչո՞ւ ոչ, նաեւ լիցքաթափվեցիր քեզ «թույլ տված» ժամանցից: Եվ գիտես, որ տարբերաբար հիշելու ես այդ «շարժվող պատկերների» թողած տպավորությունը: Մի խոսքով այն, որը տալիս է արվեստի լավ գործն առհասարակ:

**-Ի՞նչ է սպասվում կինոյին, որքա՞ն կդիմանա, թե՞ հավերժ է նրա գոյությունը:**

-Քանի կա մարդկությունը՝ կլինի եւ կինոն: Դա նրա ստեղծած այն հրաշքներից է, որից ամենաբուռն ցանկության դեպքում էլ անկարելի է հրաժարվել: Մարդ միշտ կախարդանքի, լեգենդի կարիք ունի, իսկ կինոն ունի հենց այդ հատկությունը՝ ստեղծել կախարդանք, լեգենդներ...

**-Ամբողջ աշխարհում այլեւս ռեժիսորներն իրենք են նաեւ գրում ֆիլմի սցենարը: Մի՞թե սա ճիշտ եք համարում:**

-Անշուշտ, քանի որ այդ կերպ բեմադրիչի ստեղծագործական ազատությունն առավել մեծ է: Հատկապես, այսպես կոչված, հեղինակային կինոն անկարող է ստեղծվել ուրիշ մեկի գրածի հիման վրա: Ժամանակին Տարկովսկին ասել է. «Չեմ պատկերացնում, թե ինչպես կարելի է ֆիլմ նկարահանել ուրիշի սցենարով: Եթե բեմադրիչը նկարահանում է՝ ամբողջությամբ ընդունելով ուրիշի սցենարը, ապա նա անխուսափելիորեն դառնում է նկարազարդող»:



**-Ո՞ւր է գնում 21-րդ դարի կինոն: Ինչպիսի՞ պատկերի մեջ են այսօրվա լավագույն ֆիլմերը:**

-Բարեբախտաբար, գլոբալիզացիա կոչվող չարիքը տակավին չի դիպչում կինոյին, այնպես որ ամեն երկիր գնում է իր ճանապարհով: Հոգեպես իրեն կարծես սպառած եւ կինոյի սոսկ ժամանցային կողմին ծառայող Հոլիվուդը գնում է դեպի տեխնիկական է՛լ ավելի մեծ աճպարարությունների՝ մոռանալով մարդուն, մարդկայինը, հավերժական արժեքները, իսկ Բոլիվուդը գնում է հնդկական կինոյի հաստատած ուղիով՝ գերգունազեղությամբ ու գեր-երգուպարով զանգվածներին մի փոքր կտրել այս չար աշխարհից՝ պատժելով պաթոլոգիկ չարագործներին եւ իրենց մուրազին հասցնելով իդեալական հերոսներին: Եվրոպական եւ կորեա-ճապոնական կինոն այլեւս չգիտի՝ գլուխը ո՛ր պատին տա՝ հանդիսատեսին ցնցելու գերխնդրով, այդ իսկ նպատակով 21-րդ դարում ավելի ուժգին է սեղմում պաթոլոգիայի «ոտնակը»՝ հաճախ կինոնյութ հայթայթելով ոչ թե մարդու ներաշխարհից, այլ սոսկ «մատից ծծելով»: Ռուսական կինոն, ցավոք, մեծ մասամբ մոռացել է իր լավագույն ավանդույթները եւ տարուբերվում է արեւմտյան ընդօրինակությունների ու սեփական վատ սերտած կինոդասերի միջեւ: Իսկ այսօրվա լավագույն ֆիլմերը նրանք են, որոնք զերծ են նշածս արատներից, որոնցում տակավին հույսը, հավատն ու սերը չեն ընկալվում որպես հնացած հասկացություններ, որոնք դիտելով՝ դեռեւս շարունակում ես հավատալ մարդ էակին...

**-Հայտնի է, թե որքան ծախսատար է մեկ ֆիլմ նկարելը: Այսօր Հայաստանում հազվադեպ են նկարահանվում խաղարկային ֆիլմեր: Հնարավո՞ր է փոքր բյուջեով լավ ֆիլմ նկարել: Դա կապ ունի՞ ռեժիսորի տաղանդի հետ:**

-Տաղանդավոր բեմադրիչը փոքր բյուջեով կարող է լավ ֆիլմ ստեղծել եւ ընդհակառակը՝ անտաղանդ կինոբեմադրիչին չի կարող փրկել խոշոր դրամագլուխը: Ի դեպ, նույնը վերաբերում է եւ տեխնիկային. երբեմն ձեռքի հեռախոսով կարելի է ստեղծել գլուխգործոց, որը չի ստեղծի գերժամանակակից տեխնիկան: Ամեն ինչ կապ ունի ստեղծողի ձիրքի, կինոմշակույթի, այն երեւույթի հետ, որ կինոգործիչները երբեմն անվանում են «կինոյի բացարձակ զգացողություն» (բացարձակ երաժշտական լսողության նմանությամբ): Ի վերջո, Արտավազդ Փելեշյանի կինոգլուխգործոցները մեծ բյուջեով չեն ստեղծվել:

**-Րաֆֆին ասում էր, որ մի լավ վեպը կարող է փոխել կյանքը: Իսկ ֆիլմն ունի՞ այդպիսի ազդեցություն:**

-Ունի: Հիշեցի ռիգացի այն կնոջը, որը տանը՝ վզին պարան գցած, պատրաստվել է ինքնասպան լինել, երբ այդ պահին հեռուստացույցով սկսել են ցուցադրել Ռյազանովի «Ճակատագրի հեգնանք կամ Բաղնիքդ անուշ» կատակերգությունը: Կինը սկսել է դիտել ու փոխել է մտադրությունը: Վստահ եմ, սակայն, որ նույն կինն ավելի ուժեղ կսեղմեր պարանը, եթե հեռուստացույցով սկսեին ցուցադրել Լարս ֆոն Տրիերի «Հակաքրիստոս» կամ Վացլավ Մարհոուլի «Ներկված թռչունը» ֆիլմերը...

**-Ձեր կարծիքով ինչպիսի՞ ֆիլմ է պետք այսօրվա Հայաստանին:**

-Այնպիսին, որը միաժամանակ թե՛ մեզ, թե՛ աշխարհին կկարողանա կինոլեզվով ասել՝ ա՛յս ենք մենք, ա՛յս է մեր տեսակը: Առանց որեւէ բան թանձրացնելու, նվազեցնելու կամ գունազարդելու: Սա ահավոր դժվարին գործ է, որին մեր կինոգործիչները երբեւէ կկարողանա՞ն հասնել...

**-Երաժշտության մեջ՝ Մոցարտ, կինոյո՞ւմ...**

-Չա՛պլին: Ինչպես Մոցարտի երաժշտությունն է թեթեւ, ծորուն, խաղացկուն եւ իր լուսավոր էության մեջ՝ հաճախ նաեւ դրամատիկ, այնպես էլ Չարլի Չապլինի արվեստն ավելին է, քան սոսկ կատակերգականը, անտեսանելիորեն խորն է, որը տեղ-տեղ սահմանակցում է դրամատիկականին ու դրանից անդին:

Ի դեպ, հիշեցի, որ ժամանակին «կինոյի Մոցարտ» են անվանել Սաթյաջիթ Ռեյին: Նման բնորոշումները փոքր-ինչ կամայական են, թեեւ արժե ա՛յդ աչքով վերադիտել հնդիկ այդ ականավոր բեմադրիչի լավագույն գործերը...

**-Ռեժիսոր, օպերատոր, դերասան, սցենարիստ, կոմպոզիտոր, հնչյունային ռեժիսոր, զգեստավորող, դիմահարդար. կա՞ էլի մեկը, որի մասին ոչ ոք չի հիշում, բայց նա կարեւոր աշխատանք է կատարում ֆիլմի ստեղծման ժամանակ:**

-Իհա՛րկե, արտադրի՛չը, որի կարեւոր աշխատանքը սկսվում է, երբ դեռ նշածդ մասնագիտությունների մարդիկ հաճախ որոշված էլ չեն լինում:

**-Ձեր կարծիքով ո՞ր երկիրն է այսօր առաջատարը կինեմատոգրաֆիայում:**

-Միանշանակ դժվար է ասել: Ես շարունակում եմ մնալ եվրոպական կինոյի հետեւորդ: Վերջերս ինձ համար հայտնագործել եմ Իսլանդիայի արդի կինոարվեստը, որի «սառցե» կինոաչքը՝ հաճախ կապտականաչ գունաբաժանմամբ, սառը պաստելային երանգներով սկսել է շատ ինքնատիպ հայացքներ ձգել աշխարհին՝ իրենց խստաշունչ բնապատկերների խորքից:

**-Որքա՞ն է ինքնուրույն դերասանը կինոյում: Ասում են՝ նրան ղեկավարում է ռեժիսորը:**

-Նայած դերասան եւ նայած բեմադրիչ: Օրինակ, պատմում են, որ էքսցենտրիկ կինոկատակերգության մեծ վարպետ Լեոնիդ Գայդայը դերասաններին միայն ամենահիմնական ուղղություններն էր տալիս աշխատանքում: Նրա յուրաքանչյուր նկարահանմանը դերասանները պետք է գնային լավ պատրաստված, առաջարկեին դերի մեկնաբանման, կերպարաստեղծման իրենց տարբերակները: Այդ իսկ պատճառով Գայդայի ֆիլմերում ավելի հեշտ նկարահանվել են վառ անհատականություն եւ մեծ երեւակայություն ունեցող դերասանները...

**-Ո՞վ է ձեր ամենասիրելի ռեժիսորը:**

-Չեմ տա քիչ ծանոթ կամ այսօր մոդայիկ ինչ-որ անուն: Ես չեմ դադարում զարմանալ Ֆեդերիկո Ֆելինիի կինոերեւակայությամբ, չեմ դադարում հիանալ, թե ինչպես է նա կարողացել հաճախ արտակենտրոն եւ անհեթեթ պատմություններով էկրան փոխանցել մարդկային գոյության բազում դրսեւորումներ:

Ֆելինին պատմել է, որ մի անգամ ոսկեգույն քթով մի տիկին նրան հանդիմանել է, թե ինչո՞ւ իր ֆիլմերում չկա եւ ո՛չ մի նորմալ մարդ: Իսկ ես չունեմ ոսկեգույն քիթ ու միայն շնորհակալ եմ կինոյի մեծ Մաեստրոյին, որ նրա ֆիլմերում չկա եւ ո՛չ մի նորմալ մարդ: Մեծ հոգեհարազատություն եմ զգում նրա ստեղծած աշխարհների եւ կերպարների հանդեպ: Միգուցե քանի որ ինքս էլ համոզված եմ, որ մեր այս տխուր ու դաժան աշխարհը գեղեցկացնում ու առաջ են մղում «ոչ նորմալ» մարդիկ...

# Փասադենայում բացվել է Արմեն Արոյան գրադարան-թանգարանը

Փասադենայի հայկական Կիլիկիա ավետարանական եկեղեցու (ՀԿԱԵ) բակում հոկտեմբերի 9-ին պաշտոնապես բացվել է Արմեն Արոյան գրադարան-թանգարանը: «Միրոր-Սփեքթեյթըրում» **Գեւորգ Քյոշկերյանը** տեղեկացնում է, որ ՀԿԱԵ-ն առաջին հայկական եկեղեցին է, որ կառուցվել է Փասադենայում 1922-ին: Անվանումը մի երկու անգամ փոխվել է, իսկ ներկա տարածքը ձեռք է բերվել 1991-ին:

Եկեղեցու վերապատվելի **Սերոբ Մկրտչյանը** կատարել է բացման խոսքը, որից հետո բեմ է հրավիրել եկեղեցու ծխական խորհրդի նախագահ **Արա Ասիլյանին**, որ վարի միջոցառումը: Վերջինս մեծապես գնահատել է Արոյանի 40-ամյա գործունեությունը որպես երգչախմբի ղեկավարի եւ երախտագիտություն է հայտնել նրա առատաձեռն նվիրատվության համար, որի շնորհիվ եկեղեցապատկան մի սենյակ հիմնովին վերանորոգվել եւ վերածվել է գրադարան-թանգարանի, որտեղ Արոյանի ավելի քան 3000 պատմական հատորներ, հազվագյուտ մետաղադրամներ, դրոշմանիշեր եւ պղնձե իրեր մշտական ցուցադրության կդրվեն ապագա սերունդների համար: Ասիլյանը նաեւ նվիրել է Արարատ լեռան լանջից ժայռի մի կտոր, որ իրեն է տրամադրել դեպի սրբազան լեռը ուխտավորների մի խումբ առաջնորդած **Հարութ Տեր-Դավիթյանը**: Այդ մասունքը եւս մշտական ցուցադրության կդրվի:

Մյուս ելույթ ունեցողները նույնպես դրվատանքի խոսքեր են ասել Արոյանի հասցեին: Գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերել «Փաթիլ» պարային ակադեմիայի անդամները եւ «Վեմ» երաժշտական համույթը (UCLA) **Մովսես Պողոսյանի** ղեկավարությամբ: Օրվա գլխավոր բանախոսն է եղել դոկտ. **Փիթեր Քաուին**, որ շեշտը դրել է Արեւմտահայաստանի պատմական վայրերի վերաբերյալ Արոյանի հարուստ գիտելիքների վրա: Միջոցառման վերջում Արոյանը կտրել է նորաբաց գրադարան-թանգարանի ժապավենը:

Արմեն Արոյանը տարիներ շարունակ ուխտավորների խմբեր է առաջնորդել դեպի Արեւմտյան Հայաստան: Մեծ հոգատարությամբ հետեւել է, որ խմբի մասնակիցները այցելեն իրենց ծնողների կամ նախնիների պապենական տները՝ Կեմերեկ, Սվազ (Սեբաստիա), Դաքեսի հովիտ (Դաքեսյանների անունով) եւ այլ վայրերում, տրամադրելով նրանց պատմական անհրաժեշտ տեղեկություններ:

Նոր գրադարան-թանգարանում կազմակերպվելու են դասախոսություններ, թեմատիկ ցուցահանդեսներ եւ համերգներ:

Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(Armenian Mirror-Spectator)

# «Գազելներով» ու դասարանում 35 աշակերտո՞վ ենք պայքարում համավարակի դեմ

## *Գյումրին որպես քաղաք ավտոբուսների արժանի չէ՞*

Վերջերս կառավարության նիստում որոշվեց հանրապետության չորս մարզերի, այդ թվում՝ Շիրակին գումար հատկացնել տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիոն ծրագրերի համար: Հատուկ նշվեց ու հեռուստաալիքներով հա կրկնվեց, որ ծրագրերից ամենախոշորը Գյումրիինն է՝ 882, թե՞ 887 մլն դրամ, որի կեսը վճարում է Գյումրու համայնքապետարանը, մյուս կեսը՝ պետությունը: Իսկ խոսքն ընդամենը այն մասին է, որ հանրապետության երկրորդ քաղաքում այժմ ներքաղաքային տրանսպորտի միակ միջոց մնացող հին «Գազել» մեքենաների փոխարեն գնվում են եւ կսկսեն երթեւեկել 63 նոր... էլի «Գազել»-ներ:

Ախր այս ո՞ր դարն է: Երկրի իշխանություններն անցած այսքան տարիների ընթացքում մարդկանց ստիպել են հանուն ինչ-որ գծատերերի գերշահույթների նեղվածք միկրոավտոբուսներում խցկված ու կռացած երթեւեկել: Հիմա մայրաքաղաքում գոնե նախատեսվում է ներքաղաքային երթուղիներում դրանց քանակի էական կրճատում ու հիմնականում ավտոբուսներով ժամանակակից համակարգի ներդրում, ինչն ուրախալի է ու ճիշտ: Իսկ Գյումրին, մեր մյուս քաղաքները մի՞թե արժանի չեն արժանապատիվ տրանսպորտ ունենալու, ինչը գոնե երկրաշարժից առաջ կար ու խնդիր չէր: Ավտոբուսնե՞րն ասեմ, այժմ անդարձ անցյալի գիրկն ուղարկված տրոլեյբուսնե՞րն ասեմ...

Լավը, նորը չտեսնող ու չգնահատող չենք: Քաղաքապետի պաշտոնը նոր թողած Սամվել Բալասանյանի, նրա թիմի աշխատանքը որպես քաղաքացի ընդհանուր առմամբ դրական գնահատելով, քաղաքային տրանսպորտի նորացման խոստումների կատարման այս տարբերակը չենք կարող ճիշտ համարել: Այժմ գնված միկրոավտոբուսներն, իհարկե, նոր արտադրված են, հներից 4 տեղ ավելի ունեն ու մի քիչ բարձր են, համեմատաբար հարմար: Բայց... ընդամենը այդքանը:

Թող առայժմ գոնե կեսը ավտոբուսներ լինեին: Որովհետեւ փողերն էլ արդեն ծախսվել են ու մոտ ապագայում քաղաքն այդ նպատակի համար նույնիսկ կառավարության աջակցությամբ այդքան գումար դժվար թե ունենա: Եվ եթե Եվրոմիության փորձնական ծրագրով նախատեսված, կարծեմ 23 տեղանոց 5 էլեկտրաավտոբուսներն էլ տեղ հասնեն, դա ընդամենը կլինի հաճելի փոքրիկ բացառություն:

Այսօր երկրի կառավարությունը, հեռուստատեսություններն ամեն օր նաեւ բոլորիս կոչ են անում քովիդի դեմ պատվաստվել, պահպանել հակահամավարակային կանոնները, ինչն իրոք անհրաժեշտություն է: Բայց մարդկանց ամեն օր «Գազել»-ների մեջ կուտակելով ու առաջին դասարանցի իմ թոռնիկին 35 աշակերտ ունեցող դասարանում նստեցնելո՞վ ենք պայքարելու այդ դաժան վարակի դեմ...

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ, Գյումրի**

# Անօրինական հերթեր պատվաստման շրջիկ կետերում




Covid-19-ի պատճառով մահերի օրական թիվը Հայաստանում վաղուց հաստատվել՝ 5 տասնյակի միջակայքում: Ստացվում է, որ կորոնավիրուսից ամսական 1500 մարդ է մահանում եւ այս թիվը աճելու միտում ունի: Նոյեմբերի 29-ի դրությամբ մեկ օրում Հայաստանում մահացել է 22 վարակակիր:

Վարակի տարածումը կանխելու նպատակով կառավարությունը կիրառում է բոլոր հնարավոր եւ անհնարին միջոցները. բայց անարդյունք:

ՀՀ վարչապետը հայտարարում է, որ Հայաստանում հնարավոր է օրական 20-25 հազար պատվաստում իրականացնել, իսկ Առողջապահության նախարար **Անահիտ Ավանեսյանն** ասում է. «Մենք պատրաստ ենք, մնում է, որ մեր քաղաքացիները օր առաջ պատրաստվեն»: Բայց քաղաքացիները չեն պատվաստվում:

Պատճառները հասկանալու համար կարելի է ուղղակի մոտենալ պատվաստման կետերից որեւէ մեկին, օրինակ՝ Հյուսիսային պողոտայի շրջիկ կետը: Աննկատ մոտենալու եւ ուղղակի հետեւելու արդյունքում հնարավոր է տեսնել, թե ինչ է կատարվում: Տեսարանը հեռվից շատ փորձություններով լի է, խոսքը ոչ թե պատվաստման հետեւանքների կամ ասեղի ծակոցից վախենալու մասին է, այլ՝ արհամարհական ու անհարգալից վերաբերմունքի:

«Որոշեցի պատվաստվել ու որպես ամենամոտ պատվաստման կետ՝ գնացի Հյուսիսային պողոտա: Ըստ Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության այդ կետը աշխատանքը սկսում է 12:00-ից: Շուտ էի հասել, բայց պարզվեց՝ ինձանից առաջ դեռ երկու սպասող կա: 20 րոպեի ընթացքում հերթը հասավ 10-ի, իսկ պատվաստման պատասխանատուները դեռ չէին երեւում: Կեսօրին մոտ երեւացին Կարմիր խաչի աշխատակիցները, որոնք պետք է հերթագրեին սպասողներին: Իմանալով, որ մենք արդեն մեր նախաձեռնությամբ հերթագրվել ենք՝ ստացանք արհամարական պատասխան: Երբ հերթագրվածների թիվը հասել էր արդեն 50-60-ի եւ արդեն 12:30 էր, «սպիտակավոր» կանայք ժամանեցին ու իջան «Տաշիր սթրիթ», որտեղ կատարվում են պատվաստումները:

Մոտ 15 րոպե, կրկին, սպասելուց հետո հերթում լսվեցին դժգոհություններ, որոնց ի պատասխան ստացանք կծկտուր պատասխաններ. բժիշկները դեռ «տեղավորվում են», «պատրաստվում են», «համակարգիչն են միացնում», «ինտերնետին են միանում, ներքեւում կապը լավը չէ» եւ այլն, ու խոստացան՝ «հենց պատրաստ լինեն, կկանչեն»: Անցավ եւս մի քանի րոպե ու շշուկներ լսվեցին, որ ներսում արդեն պատվաստումները սկսվել են, մինչդեռ մարդիկ վերեւում հերթի մեջ սառչում են»,- պատմում է 29-ամյա Արմինեն, ապա վրդովված շարունակում,- «Տեղեկությունները Կարմիր խաչի աշխատակիցները հերքեցին, բայց որոշեցի սրամտություն անել ու հերթից դուրս գալով «Տաշիր սթրիթի» մյուս մուտքից իջա ցած: Ներքեւում՝ իրենց տաքուկ անկյունում, մոտ տաս մարդ հերթ էր կանգնել, իսկ մի քանիսն էլ արդեն պատվաստվում էին:

Երբ բորբոքված սկսեցի պարզաբանում պահանջել պատասխանեցին, որ հավաքվածները գրանցվել են առցանց Earlyone հավելվածով: Բայց հերթում սպասելու ընթացքում միայն մի հոգի ասաց, որ գրանցվել է հավելվածի միջոցով: Երբ ասացի, որ զանգահարելու եմ նախարարության թեժ գիծ, հերթում սպասողներից շատերն անհետացան եւ ի հայտ եկավ մեկը, որը ներկայացավ որպես առողջապահության նախարարության աշխատակից, նրա հետ զրույցս նույնպես հարթ չանցավ, բայց իմ համառության շնորհիվ ի վերջո կարողացա «օրինական» հերթով պատվաստվել»: Զրույցի ավարտին Արմինեն ասաց, որ պատվաստումը ստացել է ոչ թե կեսօրին, այլ 14:15 ու քանի որ պատվաստման կետը աշխատում է մինչեւ ժամը 16:30-ը, «օրինական» հերթում գտնվողներից ընդամենը 10-ը հասցրին պատվաստվել, իսկ թե ինչ եղավ մյուսների հետ՝ հայտնի չէ:

Ահա՛, նաեւ այսպիսի դեպքերն են, որ քաղաքացիներին վանում են պատվաստվելուց: Զրուցակիցս նաեւ նշեց, որ կապ է հաստատել Առողջապահության նախարարության մամուլի քարտուղարի հետ հայտնել եղելությունը ու առաջարկել տրամադրել իր ձեռքի տակ եղած տեսանյութերն ու ձայնագրությունները, սակայն առաջարկն ու պահանջը մնացել են օդում կախված. «Ձեր պահանջին շուտով կպատասխանենք: Խնդրում ենք սպասել»,- եղել է լիազոր մարմնի պատասխանը:

Այս ամենից հետո պաշտոնյաներին խորհուրդ է տրվում ոչ թե քաղաքացիներին մեղադրել չպատվաստվելու մեջ ու ԱԺ ամբիոնից բարձրագոչ ճառեր ասել, այլ ուղղակի լուռ ու մունջ, առանց թափորի ու նախապես հայտարարելու այցելել, օրինակ, Հյուսիսային պողոտայի շրջիկ պատվաստման կետ ու իրավիճակին ծանոթանալ տեղում:

**ՀԱՍՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

# Առանց ՊՇՌ թեսթի կամ պատվաստման սերտիֆիկատի մուտքն արգելվում է



Կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումներն ավելի կխստացվեն: Առողջապահության նախարար **Անահիտ Ավանեսյանը** հայտնել է, որ հունվարի 1-ից մշակութային հաստատություններ, սննդի օբյեկտներ, ժամանցի վայրեր այցելությունը կթույլատրվի միայն ՊՇՌ թեսթի բացասական պատասխանի կամ պատվաստման սերտիֆիկատի առկայության դեպքում:

Այս հայտարարությանը հետեւել է «Ռեստորանների ասոցիացիայի» նախագահի հակադարձումը, որում նշվում է. «Կոչ ենք անում ՀՀ Կառավարությանը եւ Առողջապահության նախարարությանը զերծ մնալ անհիմն եւ բացասական հետեւանքներ ունեցող նախաձեռնություններից:

Խիստ անհամաձայնություն ենք հայտնում հնչեցված մտքի հետ եւ հայտարարում, որ գործարարները կնախաձեռնեն հակազդեցության քայլեր:

Ռեստորանային ոլորտը գտնվում է խիստ ծանր տնտեսական իրավիճակում, ապահովում է 50 000 աշխատատեղ եւ չի պատրաստվում հնազանդվել ոլորտի համար կործանարար որոշումներին»:

Ովքե՞ր են ավելի շատ հաճախում սրճարաններ, ժամանցի վայրեր. իհարկե, երիտասարդները, ուսանողները, պատանիները: Ստացվում է՝ հիմա էլ պատվաստման անուղղակի պարտադրանքի թիրախում են լինելու նրանք: Կա՛մ թեսթ, կա՛մ պատվաստում. ուսանողներն ու պատանիները չեն աշխատում, գումար չեն վաստակում, որպեսզի ամսական մի քանի անգամ թեսթավորվեն, այլընտրանքը պատվաստումն է լինելու: Ահա եւ նոր որոգայթ՝ այս անգամ պատվաստման ճնշումների ենթարկելու երիտասարդներին: Իսկ հայտնի է, որ ստեղծված պատվաստանյութերը հենց երիտասարդների համար են սպառնալիք, որովհետեւ վերարտադրողականության հետ կապված, սրտանոթային հիվանդություններ ձեռք բերելու վտանգ են ներկայացնում:

Պատվաստումների անուղղակի պարտադրանքով պայմանավորված՝ չպատվաստված քաղաքացիների՝ հանրային վայրեր այցելելու սահմանափակումներ են գործում նաեւ եվրոպական երկրներում, ինչի հետեւանքով այնտեղ եւս պարբերաբար բողոքի ալիքներ են բարձրանում:

Կորոնավիրուսի պատճառով մեկուկես տարվա դժվարություններից, լոքդաունից հետո հանրային սննդի օբյեկտները, մշակութային օջախները վերջապես փորձում են ոտքի կանգնել՝ այն էլ պատերազմով անցած, քաղաքական, տնտեսական ճգնաժամի շեմին հայտնված, անորոշ ապագա ունեցող այնպիսի երկրում, ինչպիսին մերն է: Նոր սահմանափակումների դեմ ընդվզումն այս իրողությամբ է պայմանավորված:

Առողջապահության նախարարն արձագանքել է «Ռեստորանների ասոցիացիայի» հայտարարությանը՝ նշելով. «Պատվաստման օրական ցուցանիշները ցույց են տալիս, որ արդեն այն չափով քաղաքացիներ են պատվաստվել, որ հանրային սննդի եւ այլ օբյեկտներին ինչ-որ լուրջ վնասներ չեն հասցվի»:

Մինչ օրս Հայաստանում կատարվել է 1.217. 391 պատվաստում. առաջին դեղաչափն ստացել է 781. 011 քաղաքացի, ինչը կազմում է մեծահասակ բնակչության 39 տոկոսը: Երկրորդ դեղաչափն ստացել է 43. 380 մարդ՝ մեծահասակ բնակչության 22 տոկոսը:

Եթե հաշվի առնենք, որ պատվաստումների պարտադրանքը խստացավ հոկտեմբերին, եւ պատվաստումների աճը գրանցվել է հատկապես վերջին երկու ամիսներին, ուրեմն շուտով վրա է հասնելու պատվաստման 3-րդ դեղաչափը ստանալու ժամանակը: Ըստ կարգի՝ 3-րդ՝ խթանիչ դեղաչափը պետք է ստանալ 2-րդ պատվաստումից 6 ամիս հետո:

Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ դեկտեմբերի 1-ից կորոնավիրուսով վարակված, բայց չպատվաստված քաղաքացիների բուժումը հիվանդանոցներում անվճար չէր լինելու, սակայն այս հարցը դեռեւս հստակեցված չէ, քննարկվում է:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը տեղեկություններ է հաղորդում կորոնավիրուսի նոր շտամի մասին, որը կոչվում է **օմիկրոն**: Այն տարածված է Հարավաֆրիկյան պետությունում: Ասում են, որ օմիկրոնի ալիք է սպասվում, որն ավելի դաժան է լինելու, ավելի արագ է տարածվելու, քան **դելտա** շտամը:

Հայտնի չէ, թե մինչ այժմ ստեղծված պատվաստանյութերը կարո՞ղ են պայքարել օմիկրոն շտամի դեմ, թե՞ ոչ:

**ՆԱԻՐ ՅԱՆ**

# Երեւանի մետրոյի

ԼՈՒՍՅԱ ՄԵՀՐԱԲՅԱՆ

Վերջապես կրկին խոսում են մետրոյի Աջափնյակ կայարանի շինարարությունն ավարտին հասցնելու մասին:

Երբ սկսվեցին Արցախյան շարժման միտինգներն ու լարվեցին Մոսկվայի հետ հարաբերությունները, մետրոշինարարները կանգ չառան, ավելին՝ շարունակեցին աշխատել արագացված տեմպերով, փորեցին, բետոնապատեցին պլանավորված հաջորդ կայարանի գետնուղին, որը ձգվում է Բարեկամություն մետրոյից դեպի Հրազդանի ձոր փորված, բետոնապատված թունելից, ձորի հակառակ կողմում՝ նախկին Արագած կինոթատրոնի մոտի հորանից, Աբելյան փողոցի տակով մինչեւ համարյա Հ 2 հեռուստաընկերություն հասվածը:



Նրանք փորձում էին միութենական ֆինանսավորմամբ ավարտել երկու կայարանների շինարարությունն ու շահագործումը: Բետոնապատումից հետո ամեն ինչ կանգ առավ: Հիմա ի՞նչ վիճակում է թունելը. անմիջապես փողոցի եզրով երկու խորը հիմքեր փորվեցին երկու բարձրահարկերի համար. արդյոք վտանգավոր չէ՞ զուգահեռ ընթացող բետոնապատված թունելի կողքին նման աշխատանքներ անելը:

Մետրոյի շինարարության ընթացքին հետեւել եմ հեռուստալրատվականի թղթակիցը լինելու տարիներին: Առ այսօր, երբ մտնում եմ այն կայարանները, որտեղ եղել եմ շինարարությունը լուսաբանելիս, տարօրինակորեն հաճելի զգացում եմ ունենում, կարծես թե շինարարությանը մասնակից եղած լինեմ նաեւ ես: Քանի նախագահ, վարչապետ ու քաղաքապետ ենք փոխել, ու, զարմանալիորեն, որեւէ մեկը չօգտվեց այդ երկու կայարանները կառուցած ղեկավարը դառնալու բացառիկ պատեհ հնարավորությունից: Նման կառույցները դափնիներ են ղեկավարների համար:

Իսկ Հայաստանում ստորգետնյա կառույցների շինարարությունն իրականացնող մասնագետ ինժեներները հայրենիք են տեղափոխվել հիմնականում Թբիլիսիից, որտեղ գտնվում էր նման մասնագետներ պատրաստող բուհը: Նրանցից մեկն էլ **Լեոնիդ Հարությունովն** էր, Հայաստանի գլխավոր մետրոշինարարը: Ճանաչենք վաստակաշատ գործիչներին, որոնց ներկայացնելու պատասխանատվությունը մեր սերնդինն է:

Լեոնիդ Հարությունովի հետ զրուցել ենք շուրջ քսան տարի առաջ: Նա ութսունն անց էր արդեն, շարունակում էր աշխատել Մետրոշինում, որտեղ մեծ հարգանքով էին վերաբերվում նրան: Նպատակ ունեինք այս հիշողությունների հիման վրա ներկայացնել Երեւանի մետրոյի ստեղծման պատմությունը: Իսկ մինչ մետրոյի շինարարությունը ստորգետնյա շինարարության մասնագետները հիմքը դրել ու կառուցել էին բազմաթիվ թունելներ՝ Օրդուբադի, Պուշկինի լեռնանցքի, Մեղրաձորի ու Սեւանի, Աղի հանքի հորանն էին բացել, ապա՝ Իջեւան - Հրազդան երկաթգծի շինարարությանը ձեռնամուխ եղել, ինչն, ավաղ, չարդարացրեց ներդրված ջանքերն ու գումարները, նախ, որ սողանքային գոտում չէր կարելի նման շինարարություն նախաձեռնել, երկրորդը՝ որ հարեւան երկրի պատճառով երկաթգիծը եւս մեկ փակուղի դարձավ ու չաշխատեց երկրի համար:

Զարմանալի հիշողություն ուներ լեգենդ դարձած շինարարը: Կարծես թե անուն առ անուն հիշում էր բոլոր նրանց, ում հետ աշխատել է: Հիշում էր մանրամասներով, ազնիվ ջերմությամբ: Այդ անկեղծությունն արժեր պահպանել եւ պատմությունները ներկայացնել առաջին դեմքով, այնպես, ինչպես պատմվել է, առանց եսուառաջի եւ առանց խմբագրման: Ահա, հիմա կարդում եմ ու միանգամից վերապրում մեր ամենօրյա հանդիպումները՝ մեկ բաժակ թեյի եւ որեւէ թխվածքաբլիթի վայելումով: Շատ արժանավոր եւ համեստ այդ մարդու տանը եղել եմ նաեւ նրա մահից հետո, երբ ընտանիքին էի վերադարձնում ինձ տրամադրած լուսանկարները: Մեծածավալ շինարարական կառույցների գլխավոր շինարարի տունը Շինարարների փողոցի սովորական հինգհարկանիներից մեկում էր, պետական նորոգմամբ, համեստագույն կահավորմամբ:

### Նրանք կառուցել են Երեւանի մետրոն

-ԷԿՈ նոմիկա, 2005թ./4-5

Մետրոյի առաջնեկից ուղիղ 100 տարի անց Երեւանում սկսեցին լրջորեն նախապատրաստվել մետրո կառուցելու գործին: Հայտնի բան է, որ 1860-63թթ. առաջինը անգլիացիները իրենց մայրաքաղաքում՝ Լոնդոնում, կառուցեցին 3.6 կմ երկարությամբ արտափողոցային երկաթուղին՝ շոգեքարշով գնացքների համար: Մոսկվայի մետրոյի առաջին նախագիծը մշակվել է 1901թ., սակայն շինարարությունն սկսվեց 1931 թվին, որից ընդամենը 4 տարի անց, 1935-ի մայիսի 15-ին, շահագործման հանձնվեց 11.6կմ երկարություն, 13 կայարան ունեցող, օրական միջինը 177 հազար ուղեւորափոխադրմամբ մետրոն: Հետագայում այս թիվը մի քանի միլիոնի հասավ:

Երեւանի մետրոն թվով ութերորդն էր նախկին ԽՍՀՄ-ում՝ Մոսկվայից, Լենինգրադից, Թբիլիսիից, Բաքվից, Կիեւից, Խարկովից, Տաշքենդից հետո:

Երեւանի մետրոպոլիտենի ծնունդը մեծապես կախված է երկրի առաջին դեմքերի՝ Անտոն Քոչինյանի եւ Կարեն Դեմիրճյանի անունների հետ: Մեր մայրաքաղաքի բուռն զարգացումը հրատապ էր դարձրել ժամանակակից տրանսպորտային համակարգ ունենալու հարցը, որն այն տարիներին հնարավոր էր համարվում լուծել ստորգետնյա արագընթաց փոխադրամիջոցի տարբերակով միայն: Սակայն ցանկանալը հարցի մեկ կողմն է, պետք է կարողանաս գումար հայթայթել: Այն տարիներին ամեն ինչ պլանավորվում եւ հաստատվում էր միմիայն կենտրոնացված կարգով, միութենական համապատասխան գերատեսչությունների միջոցով: Մետրո ունենալու համար ԽՍՀՄ-ում մեկ այլ պահանջ եւս կար, այն հնարավոր էր նախատեսել միայն մեկ միլիոն բնակչություն ունեցող քաղաքի համար: Իսկ Երեւանի բնակչությունը յոթ հարյուր հազար էր:



Նախագծողները Երեւանում մետրո կառուցելու գաղափարին ներգրավվել են դեռեւս 1964 թվին: Այն ժամանակ մետրո ասելով հասկանում էին արագընթաց տրամվայ եւ հակառակը: Մեկ միլիոն բնակչություն ունենալու պայմանը անհեթեթ էր, որովհետեւ այն տարիներին հանրապետությունները ցանկանում էին որքան հնարավոր է շատ բան կառուցել, օգտագործել միութենական բյուջեի ահռելի հնարավորությունները, քանի որ միշտ էլ հասկանում ես, որ ամեն ինչ վաղ թե ուշ իր վերջն է ունենում: Իսկ Հայաստանը միշտ հսկայական շինհրապարակ է եղել, ուստի, բնական էր, որ մետրո ունենալու ցանկությունը եւս պիտի լիներ:

Երեւանի մետրոն մեծ ջանքերի գնով նախագծվեց, կառուցվեց եւ այսօր էլ փայլուն շահագործվում է: Սա այն կառույցներից է, որին հայ ժողովուրդը մեծ ցնծությամբ է վերաբերվել այն կառուցելու գաղափարի ծնվելուց մինչեւ այսօր: Անկախության առաջին ծանր տարիներին մետրոն փրկարար փոխադրամիջոց դարձավ երեւանցիների համար: Իհարկե, գետնուղին նաեւ անվտանգային լուրջ կառույց է:

**2006, 2,**
**Լեոնիդ Հարությունով**

-Մետրոյի շինարարության առաջին ամիսները շատ դժվար անցան: Կայարանները նախագծված էին սեփական տներով հարուստ տարածքներում, որոնք պետք է իրացվեին: Բավական է ինձ տեսնեին տեղամասում, տանտերերն սկսում էին բողոքել՝ հարեւանիս այսքան փող են տվել, ինձ քիչ են տալիս, ընկեր Հարությունով, բա ոնց կլինի: Մի հրաշալի տուն կար «Երիտասարդական» կայարանում, գնի հարցում քաղխորհրդի հետ համաձայնության չէին գալիս, իսկ «Լոռի» ռեստորանի շենքի իրացումն այնքան ձգվեց, մինչեւ որ սկսեց ազդել շինարարության ժամկետների վրա: Մենք անհանգստացանք, իրար խառնվեցինք, մեկ էլ պարզվեց, որ շենքը չքանդելու միջնորդության համար նույնիսկ դիմել էին Մոսկվայում ապրող բարձրաստիճան մի հայի: Բայց նախագծողների հեղինակությունն այնքան մեծ էր, որ կայարանը մի քանի մետր հեռացնելու հնարավորության հարցը դրական լուծում չստացավ:

Մետրոյում պիտի երիտասարդ տարիքում աշխատես, որովհետեւ եթե դու մետրոյից բացի ուրիշ բաների մասին ես մտածում, գործը տուժում է: Չորս հերթափոխով էինք աշխատում, ու ես մարդկանց միշտ գործի մեջ էի պատկերացնում: **Կարեն Ադամյանն** արդեն «Երիտասարդական» կայարանի շինտեղամասի պետն էր, ապրում էր հենց հորանի մոտ գտնվող հանրակացարանում: Մի կիրակի օր նրան տեսնում եմ կնոջ հետ փողոցում ոչ աշխատանքային հագուստով, կոկիկ հագնված: Զարմացա, քիչ մնաց զայրանայի, հարցնում եմ՝ դու աշխատանքի չե՞ս: Կարենը խեղճացած սկսում է արդարանալ՝ Լեոնիդ Արկադիչ, մի օր է՞լ հանգստանալու իրավունք չունեմ: Սա չափազանցություն չէ, բոլորիս մոտ այնքան շատ էր ոգեւորությունը, կարծես ավելորդ վայրկյան անգամ կորցնել չէինք ուզում Երեւանին մետրո պարգեւելու համար:

Քաղաքում ստորգետնյա շինարարություն իրականացնելը շատ բարդ գործ է եւ մեծ վարպետություն է պահանջում: Մեղրաձորի թունելում մեր գլխավերեւում 2 կմ բարձրությամբ լեռն էր, իսկ Երեւանում՝ քաղաքը, բնակելի տներ, փողոցներ, հիմնարկներ, որտեղ կյանքը բնականոն հունով ընթանում է, իսկ դու դրանց տակ գետնուղի ես փորում: Անվտանգության պահպանման խնդիրները հատուկ ուշադրություն էին պահանջում: Ամեն մետր առաջանցումից հետո օղակաձեւ հիմնական բոլորապատում էինք անում, նոր միայն շարունակում փորել, այդ պատճառով որեւէ անգամ փլուզման որեւէ դեպք չունեցանք: «Բարեկամություն» եւ «Բաղրամյան» կայարանների բոլորապատումը միատիպ է: «Բարեկամությունում» բազալտը մի քիչ ճաքճքած էր, «Բաղրամյանում» ավելի լավ գրունտ էր: Չնայած արագության մեջ տուժում էինք, ընտրել էինք պայթեցման-հորատման տեխնոլոգիան՝ հենց միայն փլվածքներից խուսափելու նպատակով:

Ծանր խնդրի առաջ կանգնեցինք «Բարեկամություն» կայարանի հորատման առաջին իսկ պահին: Դեռ նոր-նոր գրունտին էինք ծանոթանում, հանդիպեցինք կենտրոնական ջրագծին: Ի պատիվ պայթեցնողների պիտի ասել, որ նրանք այնքան նուրբ արեցին իրենց գործը, որ որեւէ վնաս չպատճառեցին: «Երիտասարդական» եւ «Հանրապետության հրապարակ» կայարանների շինարարության կեսից ստորգետնյա ջրերի հոսքը ուժեղացավ: Աշխատանքները դադարեցրինք, Գլավկայից մասնագետների խումբ եկավ հատուկ աշխատանքների վարչության պետ **Ս.Ս. Զուկակյանցի** գլխավորությամբ: Որոշվեց խմբակային հատուկ հորանների միջոցով ջրի մակարդակը արհեստականորեն իջեցնել այնքան, որ հնարավոր լինի թունելի հորատանցումը անջուր միջավայրում կատարել: Ժամում 6000խմ ջուր էր արտամղվում պոմպերով: Դեռեւս այն ժամանակ մենք ներկայացրինք ջրահեռացման խնդրի լուծման վերաբերյալ մեր առաջարկությունը, որը հնարավոր էր կատարել մեկ տարում: Պետք էր առանձին դրենաժային թունել կառուցել:

Սակայն այն ժամանակ դրան կարեւորություն չտրվեց, քանի որ Մոսկվան մեր առջեւ կառույցն ավարտելու ժամկետ էր դրել, որը կխախտվեր: Ջրահեռացման խնդիրը ժամանակավորապես լուծվեց պոմպերի օգնությամբ, հետո կարծես թե հաշտվեցին դրա հետ, մինչեւ որ էներգետիկ ճգնաժամի տարիներին պարզ դարձավ, թե ինչ հետեւանքներով է լի հեղեղման մշտապես առկա վտանգը: Նախ պոմպերը ահռելի ավելորդ էներգիա էին վատնում, ապա նրանց սնուցման աղբյուրի բացակայությունը մի քանի ժամվա ընթացքում ջրի մակարդակի բարձրացման կբերեր, որը տեղի ունեցավ մեկ անգամ, երբ 45 րոպեով անջատվել էին մետրոն սնուցող բոլոր աղբյուրները եւ ուղեւորներին ոտքով էին դուրս բերում թունելներում մնացած գնացքներից, ջրի մակարդակի ամեն վայրկյան

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պրոֆեսոր

# Ես հավատում եմ հայոց պայծառ ապագային



Մերօրյա իրադարձությունները վերլուծելիս հստակ երեւում է, որ նոյեմբերի 16-ի մարտերից շատ չանցած, չնայած ցավալի կորուստներին, մեր զինվորներն իրենց հաղթական դրսեւորեցին եւ հայ-ադրբեջանական հակամարտության լուծման տրամաբանության մեջ արագորեն ինչ-որ բան փոխվեց: Կարծում եմ՝ կարեւոր բան: Պուտինը հայտարարեց, որ պետք է արդեն գնալ դեմարկացիայի եւ դելիմիտացիայի: Դրա մասին հայտարարեցին նաեւ հայ քաղաքական ղեկավարները: Իսկ Ազգային ժողովի Պաշտպանության եւ Ազգային անվտանգության հանձնաժողովի նախագահը հայտարարեց, որ այն սկսվելու է զրո կետից: Ակնհայտ է նաեւ, որ հայ-ադրբեջանական հարաբերություններում եւս վերջին կռվից հետո նոր միտումներ են նշմարվում: Արդեն խոսվում է երեք կողմերի մասնակցությամբ հանձնաժողովի արագ ստեղծման մասին, որը պետք է զատորոշի սահմանը: Նոյեմբերի 16-ի կռիվը նաեւ ակնհայտ դարձրեց այն իրողությունը, որ ոչ միայն հրապարակներում, այլեւ խորհրդարանում եւս արեւմտամետներն սկսում են ակտիվանալ: Կարծում եմ, այդ ամենի հիմքում զանազան այլ հարցերին զուգընթաց Արցախի հիմնախնդրի հետ կապված ներկա իրողությունների եւ մոտեցումների առկայությունն է:

Բազմատեսակ ու բազմագույն ԶԼՄ-ների, պաշտոնատար անձանց ու մասնագետ-վերլուծաբանների տեղեկատվություն-տեսակետներին ծանոթանալով հանգում ես այն կարծիքին, որ այսօր Արցախի հարցում առկա են երկու իրողություն-մոտեցումներ.

Արցախի՝ ազերիների կողմից բռնի օկուպացիայից զերծ մնացած մասը փաստացի գտնվում է Ռուսաստանի Դաշնության տնօրինության ներքո: Կրեմլին մոտ կանգնած փորձագետներից **Կոնստանտին Զատուլինն** ազերիներին պատասխան-ապտակ հասցնելով անթաքույց հայտարարում է. «Մեղադրել հայերին, որ նրանք պետականություն են կառուցում օտարապատկան հողերի վրա, անհիմն է: Քանի որ հարկավոր է չմոռանալ այն փաստը, որ 1991 թ. Ադրբեջանը ԽՍՀՄ-ի կազմից դուրս եկավ արդեն առանց այդ պահին արդեն Բաքվի վերահսկողությունից դուրս Արցախի եւ որ Ղարաբաղյան կոնֆլիկտն սկսվել էր մինչ այդ 1988թ.՝ Սումգայիթի եւ Բաքվի ջարդերով: Իսկ Ալիեւի «ռազմական ուժով Ղարաբաղը վերադարձնելու» պլանն ի սկզբանե անհաջողության էր մատված»: Ռուսները, ինչպես ակնհայտ երեւում է այսօրվա նրանց պահվածքից ու որդեգրած քաղաքական եւ նույնիսկ տնտեսական քաղաքականությունից, դեռ շատ երկար են մնալու Արցախում, որեւէ մտադրություն էլ չունեն առհասարակ այնտեղից հեռանալու եւ որեւէ մեկին այն զիջելու: Միանգամայն ենթադրելի է, որ այսօրվա մանր-մունր նվերօգնություններին շուտով կհաջորդեն ավելի լուրջ տնտեսական քայլեր եւ նույնիսկ ֆինանսական լուրջ ներդրումներ:

Մյուսը դեռեւս նախագծի մակարդակով այսպես կոչված Արեւմտյան կամ Եվրոպական մոտեցումն է, համաձայն որի Արցախը պետք է հանձնվի Եվրոպայի հոգածությանը եւ այնտեղ տեղակայվի եվրոպական որեւէ երկրի կամ երկրների զինուժ: Ավելի հաճախ շրջանառվում են Ֆինլանդիայի, Նորվեգիայի եւ Շվեդիայի անունները (Հիշո՞ւմ եք, առաջին աշխարհամարտից առաջ էլ գրեթե նույնն էր նախատեսվում արեւմտահայ վեց նահանգներում եվրոպացի կառավարիչներ նշանակելու տեսքով, որոնք, ի դեպ, նույնիսկ ճամփա ելան, սակայն սկսված պատերազմի պատճառով տեղ չհասան): Ասված իմ, արդեն քանի ու քանի անգամ համոզվում ես, որ էս անտեր պատմությունը կրկնվելու հակում ունի:

Հենց այս երկու նախագծերի մասին են վկայում Սոչի-Մոսկվաներում ու Բրյուսելներում տեղի ունեցող հանդիպում-քննարկումները, որոնք իմ կարծիքով, դեռ երկար ու ավելի հաճախակի են լինելու: Հերթական անգամ երազներով ապրել-ոգեւորվելուց բացի այնքան լավ կլիներ, որ երկիրս չպարտված ղեկավար ու դիվանագիտության դարբնոցում թրծված, տարիների փորձ ունեցողները ներկայացնեին, որոնք կարողանային իդեաֆիքսերին գերի չդառնալ: Այլ շրջահայաց, բազմակողմանի մոտեցումներով եւ հայրենիքի շահն ամեն ինչից բարձր դասելով մասնակցեին այդ գործընթացներին ու չմոլորվեին միջազգային խարդավանքների խորխորատներում:

Միաժամանակ պիտի գիտակցվի, որ անհրաժեշտ է բռունցք ցույց տալ եւ հետո անմիջապես բանակցել թշնամու հետ: Մինչեւ ուժ ցույց չտաս՝ նա չի ընկրկի: Ամենառաջնակարգը սա է: Ալիեւն էլ այդ դեպքում շատ չի աքլորանա ու հոխորտա, որովհետեւ ըստ էության հասկանում է, որ ինքն ընդամենը խամաճիկ է մեծ խաղացողների ձեռքում: Այս ամենի հետնախորքի վրա հետաքրքրական կլիներ իմանալ, թե ինչ ռազմաքաղաքական քայլեր կկատարի ընդդիմությունը, եթե հասնի իշխանության: Թե չէ մեկը մյուսի սխալներն ապացուցելու եւ խելքով փայլելու ցանկություններն արդեն հոգնեցուցիչ են: Անհամեմատ ավելի լավ կլիներ, որ բոլորս կատարվածի համար մեր մեղքն ընդունեինք եւ նստեինք կլոր սեղանի շուրջ՝ արագորեն լուրջ ծրագիր մշակելու եւ սթափ գործելու համար: Մեր ժողովուրդն այլեւս համբերություն չունի:

Պատմաբանիս համար ակնհայտ է, որ մեզ մոտ դեռեւս դարերի խորքից եկող եւ հայ քաղաքական մտքի հիմքը կազմող կողմնորոշումները այդպես էլ իրենց չեն սպառում եւ մնում ենք խիստ թերահավատ, որ կսպառվեն: Սակայն պարզաբանենք, որ կողմնորոշումը ընդհանուր առմամբ ենթադրում է քաղաքական դաշնակցի որոնում, եւ միայն մեր քաղաքական ընկալումներում է ուրիշից փրկության նախատեսում եւ այն էլ այն դեպքում քեզ ձեռք կմեկնեն, երբ քեզանից ինչ-որ բան ներկայացնես: Կարծում եմ, որ սա է այն հիմնական պատճառը, որ հիմա մենք իրական դաշնակիցներ չունենք: Չունեինք նաեւ պատերազմի ընացքում, քանի որ անիմաստ փնտրտուքներում եւ անորոշության լաբիրինթոսներում դեգերելուց մեր քաղաքական միտքը հիմնովին սպառված է: Հետո էլ, այս վերջին մեկ տարին եւս ընթացավ ներքաղաքական պայքարով, դրան հաջորդած ընտրություններով եւ դեռեւս պատերազմական իրավիճակից դուրս չեկած՝ պետությանը ոչ հարիր տնտեսական կամ ներդրումային ծրագրերով տարվելով: Անտեսվեց նաեւ բանակի վերակազմության գործընթացը, որը պետք է սկսվեր հենց պատերազմից անմիջապես հետո, հաջորդ իսկ օրվանից եւ ոչ թե ցեղասպանության ձգտող թուրքի դեմքում չհիմնավորված խաղաղության փնտրտուքով: Այո, բանակի հզորացմամբ, որպեսզի շարունակաբար զիջումների գնալու փոխարեն, նոր էսկալացիա սկսելու դեպքում, մեր արդեն դիմադրողականության որոշակի աճով Ադրբեջանին զսպել կարողանանք: Այնինչ, արդեն դարավոր սովորության համաձայն, այսօր եւս ռուսներից ենք դժգոհում եւ այդպես էլ չհոգնելով հին դրամաների կրկնությունից՝ վաղը նույն կերպ Արեւմուտքից եւ մյուսներից էլ կդժգոհենք:

Համոզված եմ, որ ուժեղանալու հիմքը բոլոր ժամանակներում եղել եւ մնում է խելացի կազմակերպված եւ ճիշտ ճանապարհի վրա դրված կրթությունը: Այս առիթով հիշեցի Հարավային Աֆրիկայում գտնվող համալսարաններից մեկի մոտ կախված մի ցուցանակի մասին, որի վրա գրված է. «Որեւէ ազգի ոչնչացնելու համար հարկավոր չեն ատոմային ռումբեր կամ հեռահար հրթիռներ: Անհրաժեշտ է միայն նվազեցնել կրթության որակը եւ թույլ տալ ուսանողներին խաբել քննությունների ժամանակ: Հիվանդները մահանում են նման բժիշկների ձեռքով: Նման ինժեներների ձեռքով կառուցված շենքերը քանդվում են: Փողը կորչում է նման տնտեսագետների ձեռքում: Արդարադատությունը անհետանում է նման փաստաբանների եւ դատավորների ձեռքերով: Կրթության փլուզումը ազգի փլուզումն է»: Համաձայնեք, որ իսկապես հանճարեղ է ասված: Իսկ մենք փոխանակ այս դժվարին պահին գոնե սթափվենք ու լուրջ ներդրումներ ուղղենք դեպի գիտության ու կրթության դաշտ, զբաղված ենք չգիտեմ ինչերով: Ավելին, բանակը վարկաբեկելուց ու պարտության հասցնելուց հետո, հիմա էլ ուսուցիչներին ատեստավորել-տեսակավորելով՝ մեր կրթության սուրբ-սրբոց դպրոցն ենք աղավաղում: Լավ, մինչեւ ո՞ւր, մինչեւ ե՞րբ...

Իսկապես դժվար է ըմբռնել, որ երբ ամեն օր պառակտում ես սերմանում, քարոզածդ խաղաղությանը հնարավոր չէ հավատալ: Ժամանակն է վերջապես, որ այդ ամենում շնչակտուր իրար մեղադրելու փոխարեն ըմբռնենք. ստեղծված այս դժվարագույն վիճակի համար մեղավոր ենք բոլորս: Իսկ ամենամեծ մեղքը հանրության գիտակից մասինն է: Նրանք շատ լավ են հասկանում, թե մեզ հետ ինչ է կատարվում, թե ուր են տանում այս գործընթացները, բայց համակերպվում են, հույսներն ինչ-որ հրաշքի վրա դնում: Բայց չէ՞ որ իրապես շատ վտանգավոր իրավիճակ է ստեղծվել, որ բորենիանման թշնամին կրկին արյան հոտ է առել եւ հասկանում է՝ ասպիսի շանս նախկինում չի ունեցել, կձգտի ավելիին ու ավելիին եւ չի էլ հագենա: Մենք էլ, եթե շարունակենք այն հեքիաթներով ինքներս մեզ խաբել, թե էլի ու էլի զիջելով խաղաղություն կունենանք, ապա դա երբեք չի՛ լինի: Մեկ անգամ տվողը էլի կտա, իսկ վերցնողի ախորժակն ամեն անգամ ավելի կմեծանա: Դա թուրքի տրամաբանությունն է, որն իրականությունից այնքան էլ հեռու չէ: Այսօր զիջեցիր ինչ-որ բան, վաղը տասնապատիկն ես տալու ու այդպես շարունակ: Ահա այս շրջապտույտում ենք ու եթե չսթափվենք ու էլի ինչ-որ բան չզիջենք՝ զիջելու բան էլ չենք ունենա այլեւս:

Հստակ է ու պարզ, մեր թշնամուն էլ նոր չենք ճանաչում. նա ոչ մի դեպքում եւ ոչ մի կետում կանգ չի առնելու: Նրան կանգնեցնելու միակ ճանապարհը ազգովին համախմբվելն ու բռունցք ցույց տալն է, իսկ դա մեր բանակը միայն կարող է անել: Ուստի հարկավոր է ձերբազատվել օտարների կողմից մեզ սերմանված թույլ ու անզոր լինելու գաղափարից, որը, վստահ կարող եմ ասել, աղետաբեր ճանապարհ է եւ կործանում կտանի:

Մի բան էլ կա. Արցախյան առաջին պատերազմում, երբ հիմնականում մենք մեր գլխի տերն էինք ու վերեւից հրամանները քիչ էին, հաղթանակներ էինք կռում իրար հետեւից: Իսկ այսօր վերեւները մի տեսակ շատ են խառնվում ու փչացնում են ամեն ինչ: Բարձրաստիճան ո՛ր սպայի մասին ի՛նչ ասես չլսեցինք, ինչքան ասես քրեական գործեր են հարուցվել: Ասել է թե մեզ ոչ այնքան հիմնականում պարկետային ակունքներով ու նահանջի հրամաններ արձակող գեներալներ են պետք, այլ հայրենասեր խենթ ու խելառներ, որոնք ռազմական տեսաբանությունից թեեւ շատ չեն հասկանում, բայց յուրաքանչյուր թշնամու լավ դաս տալ գիտեն: Ինչ արած, սա է մեր տեսակը...

Հասկանանք նաեւ, որ մեծ տերություններն էլ մի տեսակ ձեռ քաշեցին մեզանից, որովհետեւ անբարեհույս միջազգային սուբյեկտի ու ավելորդ գլխացավանք պատճառողի համարում ունենք: Իսկապես, եթե օտարի աչքով մեզ նայենք, ապա ինքներս էլ կմտածենք, որ եթե մի ժողովուրդ կամք չի դրսեւորում իր սահմաններն ու ինքնասիրությունը պաշտպանելու եւ անընդհատ ինչ-որ բանից վախենալով զիջումներ է կատարում ու խաղաղություն քարոզում, նրան ոչ ոք չի պաշտպանի: Ավելին, չեմ վարանում եւ մեծ ցավով պիտի ասեմ, որ որքան էլ արհեստածին է, հնարված, սակայն այսօր Ադրբեջան պետությունը միջազգային ասպարեզում ավելի բարվոք գործընկեր է համարվում եւ դրանից է նաեւ անթաքույց թեւավորվում:

Մի անչափ կարեւոր հանգամանք էլ կա. Երբ ամեն օր վերեւներից խաղաղության, իսկ այդ նույն ժամանակ երկրի ներսում ատելության ու թշնամանքի քարոզ է արվում, սպասված անդորրը չի՛ լինելու: Պարզից էլ պարզ է, եթե մարդու հոգում փոթորիկ է, ապա որքան էլ ապրելու լավ պայմաններ ապահովես նրա համար, նա երբեք իրեն երջանիկ չի զգա: Այնպես որ, հարկավոր է նախ հոգու, ներքին ալեկոծումները հանդարտեցնել, որպեսզի իրապես խաղաղվելը հնարավոր դառնա: Իսկ ես դրան հավատում եմ: Այո, մի զարմացեք, հենց այսօր, հենց այս բարդ ու դժվարին պահին ես նշմարում եմ լույսի շողը: Այն շողը, որ ամենամոտ ապագայում անպայման լուսավորելու եւ ցրելու է հայոց երկնակամարում կուտակված գորշ ամպերն ու մերօրյա խավարը...

Ես հավատում եմ հայոց պայծառ ապագային:

**20-30.11.2021**

## Հարգելի խմբագրություն

Կարդացի «**Ազգ**» թերթում տպագրված գրախոսականը անվանի գիտնական Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆԻ «Արցախի էներգետիկան» մենագրության վերաբերյալ: Հրաշալի է: Կատարված է մեծ ծավալի աշխատանք: Սակայն կարծում եմ, որ Ստեփան Պապիկյանի անձնական արխիվում հավանաբար կուտակվել են բազմաթիվ արխիվային նյութեր ու լուսանկարներ, որոնցով կարելի է գրել վավերագրական ֆիլմի սցենար:

Արցախի էներգետիկայի վերաբերյալ վավերագրական ֆիլմի ստեղծումը տարբեր լեզուներով հնարավորություն կտա Արցախը ներկայացնել միջազգային մակարդակով: Անհրաժեշտ է մտածել այս մասին:Գուցե կգտնվեն գործարար մարդիկ, ովքեր կնպաստեն գաղափարը կյանքի կոչելու համար: Արցախի հարցի արդարացի լուծման համար նման վավերագրական տեսանյութերը կարող են օգտակար լինել:

**ԱՐՈՒՍՅԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ, Ստեփանակերտ**

# Ծնունդների ու մահերի շուրջ

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Ամենայն անկեղծությամբ նշում եմ, որ սույն թեման որոշակիից մինչեւ զգալի դժվարությամբ է կազմավորվել կյանքի բազում տասնյակներ ապրած ակտիվ լրագրությամբ զբաղվող քաղաքացուս մոտ: Լուսաբանելու ի՞նչ կա այստեղ, քանզի ծնունդն ու մահը հաջորդում են միմյանց, անակնկալներով լցնում մարդ արարածի առօրյան ու միջավայրը: Բայց... արի ու տես, որ ընթացող կորոնավիրուսային այս վարակը եկավ հիմնավորելու, որ մարդկային հարաբերություններում այսպես կոչված փակ թեմաներ չկան, անգամ մահ կոչվող երեւույթի պարագայում: Ասվածի հաստատումն է առողջապահության համաշխարհային կազմակերպության ամենօրյա հաղորդագրությունը Երկիր մոլորակի յուրա-



քանչյուր անկյունում արձանագրվող այս յուրօրինակ արհավիրքի ընթացքի շուրջ, որի ավարտը որեւէ ձեւով չի նշմարվում: Եվ հարցը՝ թե ինչպիսին է եղել խնդիրը մինչեւ սույն շրջանը, ինչում է իմքնաբերաբար: Հանրության որոշակի հատվածի հետաքրքրությունները մասամբ իսկ բավարարելու նպատակով հարկ եղավ որոշ տեղեկատվություն ուսումնասիրել, անգամ մահագիտության շուրջ հրապարակումներ ընթերցել, որոնց մանրամասնումը հանրային առումով ցանկալի չէ: Ի վերջո կանգ առանք ԱՄՆ-ում արդեն 150 տարի տպագրվող «Համաշխարհային փաստեր» ամենամյա տեղեկատուի ընտրության վրա, որտեղ ներկայացվող թվերն ու փաստերը տվյալ երկրների վիճակագրական ծառայությունների ամփոփագրերն են: Սկսենք աշխարհի 200-ից ավելի պետությունների շարքում ամենաշատ բնակչություն ունեցող Չինաստանի մարդաբանական թվերի հրապարակումից:

21-րդ դարասկզբին Չինաստանի բնակչությունը կազմում էր 1,273 մլն մարդ: Կանանց միջին տարիքը 70 էր, տղամարդկանցը՝ մոտ 74: Գրաճանաչ էր երկրի բնակչության 82 տոկոսը, յուրաքանչյուրի համար ստեղծվող համախառն ներքին արդյունքը՝ 3800 դոլար: 1000 բնակչի հաշվով ծնունդները 16-ն էր, մահերը՝ մոտ 7-ը: Պարզ թվաբանական գործողության արդյունքում ունենում ենք տարեկան մոտ 20 մլն ծնունդ ու 9 մլն մահ, բնական աճը՝ 11 մլն: Թե ինչ պատկեր էր մինչեւ նախակորոնավիրուսային շրջանը, խնդրեմ ծանոթացեք: Դարի 2-րդ տասնամյակի ավարտին Չինաստանի բնակչությունը 1.4 մլրդ էր, որոնք արդեն 4-ական տարի երկար էին ապրում՝ կանայք 74 տարի, տղամարդիկ՝ 78: Էապես փոխվել էին չինացիների կյանքի պայմանները, որտեղ գրաճանաչությունը համընդհանուր էր, 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ն քառապատկվել էր, հասել 17 հազար դոլարի: Պետության սահմանած ծնելիության որոշ սահմանափակումների արդյունքում 1000 բնակչի հաշվով ծնունդները 11,6 էր, մահերը՝ 8,2: Պարզ թվաբանական գործողությունների արդյունքում յուրաքանչյուր տարվա համար ստացվում է 16.5 մլն ծնունդ ու 11.5 մլն մահ, բնական աճը՝ 5 մլն չինացի: Եթե Չինաստանի տնտեսական հրաշքի մասին ոմանք սիրողական մոտեցումներ ունեն, գուցե այն զուգահեռեն նշված թվերի հետ, փորձեք յուրօրինակ բացահայտումներ անել:

Ինչ վիճակ է տարածաշրջանի երկրորդ գերտերություն Հնդկաստանում, ուր տնտեսական հրաշքի վերաբերյալ ապացույցներ առայժմ չկան: Դարասկզբին բնակչությունը 1 մլրդ էր, գրաճանաչ էր բնակչության 52 տոկոսը, 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ն 1800 դոլար: Ցածր էր նաեւ կանանց ու տղամարդկանց միջին տարիքը՝ համապատասխանաբար 62 եւ 63.5 տարիներ: 1000 բնակչի հաշվով ծնունդները 24.2 էր, մահերը 8.7, տարեկան միջին աճը 15 մլն: Մոտ 20 տարիների այս աճի հաշվին Հնդկաստանի բնակչությունը հասնում է 1,3 մլրդ-ի, էապես ավելանում է կանանց ու տղամարդկանց միջին տարիքը՝ 68,4 եւ 71,2 տարի: Գրաճանաչությունը հասնում է 92 տոկոսի, նվազում են թե՛ ծնունդների, թե՛ մահվան ցուցանիշները՝ 18,2 եւ 7,3 1000 բնակչի հաշվով: Այս ցուցանիշների պահպանման պարագայում Հնդկաստանը մոտակա տարիներին բնակչության թվաքանակով կգերազանցի Չինաստանին: Այստեղ մտահոգ չեն, որ երկրի միջին քառակուսի կիլոմետրի վրա 450 մարդ է բնակվում, երբ Չինաստանում ցուցանիշը 150 մարդ է, ուր մինչ այսօր էլ ծնունդների սահմանափակման քաղաքականություն է տարվում:

Եվրոպայի մասին խոսելիս հաճախ է օգտագործվում ծեր արտահայտությունը, որը թերեւս երկակի իմաստ ունի՝ պատմական ու կենսաբանական առումներով: Վերջինիս պատկերը ներկայացնելու նպատակով ընտրեցինք երկու երկիր՝ Ավստրիան ու Շվեյցարիան: Զգում եմ ոմանց արձագանքը՝ ա՞յ թե երկրներ եք ընտրել: Հեղինակիս կողմից նշեմ, որ այդ պետություններն եմ ընտրել, քանզի ՀՀ-ի պես անծովային հարուստ ընդերք չունեն, նաեւ՝ դեպի բաց ջրեր նավահանգիստներ, Շվեյցարիայի պարագայում էլ խիտ բնակչություն: Բայց արի ու տես, որ դարասկզբի համեմատ երկու տասնամյակ անց թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց կյանքի տեւողությունը մեծացել է: Երկու երկրներում կանանց միջին տարիքը 80 է, տղամարդկանցը 85, ՀՀ-ում՝ 72 եւ 79: Տարբեր միջոցառումներում ու ելույթների ընթացքում հաճախ են ընդհանրական կարծիքներ հնչեցվում, որ հանրության ծերացումը կապված է ծնելիության ցածր մակարդակի հետ: Վիճակագրությունը հաստատում է, որ երկու երկրներում էլ 1000 բնակչի հաշվով ծնունդները 10-ն են, ՀՀ-ում՝ 11,5: Շվեյցարիայում պակաս են մահերը՝ 8,5. ՀՀ-ում՝ 9.5: Ավստրիայում 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ն 59 հազար դոլար է, Շվեյցարիայում 71 հազար, ՀՀ-ում 4500 դոլար: Թե ինչո՞ւ է անջրպետն այսքան զգալի, ՀՀ տնտեսվարական ու տնտեսագիտական մտքի երեւելիների բացատրելիքն է, որն առայժմ արտահայտվում է անիմաստ ու անհասկանալի արդարացումների տեսքով. սակավահող երկիր ենք, ջրերը անբարյացակամ հարեւանների կողմն են հոսում, գյուղոլորտը ռիսկային է ու նման բաներ, երբ հարկ է մերն ուրիշ է-ի փոխարեն նաեւ համաշխարհային գործընթացներն ուսումնասիրել...

Թերեւս այս պարագայում ծնելիության ու մահվան հարցերն էլ այն անհանգստության տիրույթում չեն հայտնվի, որում են մերօրյա Հայաստանում: Դրանք հանրային կյանքի բաղկացուցիչներ են, որտեղ գնահատականներ հնչեցնելու առումով անզոր է անգամ նորին մեծություն գիտական միտքը, ուր մնաց հայի ու հայկականության մեզ վերագրվող գործոնը:

Նկատենք, որ կորոնավիրուսային արհավիրքն անցած երկու տարում 5 մլն մահ է պատճառել, հիմնականում ավագ սերնդի եւ ուղեկցող հիվանդություններ ունեցող, իսկ մինչ այդ Երկիր մոլորակի մահերը յուրաքանչյուր տարի 50-60 մլն էին:

Հանգստություն հայաստանյան հանրությանը:

**29.11.2021թ.**

# «Մինչ բոլորը խոսում են ապաշրջափակման մասին, Ադրբեջանը, Թուրքիայի օգնությամբ, «իզոլացիայի» նոր սցենարներ է մշակում Հայաստանի համար»

***Սոչիում տեղի ունեցած Հայաստանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի առաջնորդների հանդիպումից թե՛ առաջ, թե՛ հետո պաշտոնական Բաքուն պնդում է, թե «Զանգեզուրի միջանցքը» վաղ թե ուշ իրականություն է դառնալու: Թե՛ Փաշինյանը, թե՛ Ալիեւը եռակողմ հանդիպումն, ընդհանուր առմամբ, դրական են համարում: Հայկական կողմը դա բացատրում է դեմարկացիա ու դելիմիտացիա սկսելու գործընթացի մեկնարկով, ադրբեջանականը՝ «Զանգեզուրի միջանցքին» հասնելու ճանապարհային քարտեզի ձեռքբերմամբ: ՀՀ տարածքով դեպի Նախիջեւան գնացող միջանցք ձեռք բերելու մասով կտրուկ է նաեւ Իրանի դիրքորոշումը: Թեմայի վերաբերյալ «Ազգ»ը զրուցել է ադրբեջանագետ*** **Տաթեւիկ Հայրապետյանի** ***հետ:***




**- Ուսումնասիրելով ադրբեջանական լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերում, տարբեր հարթակների մեկնաբանության դաշտերում տեղ գտնող «ռեպլիկները»՝ ի՞նչ եք արձանագրել, ադրբեջանցիներն ի՞նչ կարծիքի են «միջանցքի», դա ուժով վերցնելու՝ մեզ համար անցանկալի սցենարի հետ:**

- Ադրբեջանական կողմը հանդիպումից մեկ ժամ անց արդեն արտաքին գործերի նախարարության մակարդակով ողջունեց եռակողմ բանակցությունների արդյունքները՝ ներկայացնելով, որ դրանք ամբողջությամբ համապատասխանում են Ադրբեջանի շահերին: Բնական է, որ եռակողմ հայտարարության տեքստը չի արտացոլում երեք ժամ տեւած քննարկումների ամբողջական պատկերը: Սոչիի հանդիպումից անմիջապես հետո մեկնարկեցին բանակցություններ Աշխաբադում, ինչի շրջանակներում նաեւ տեղի ունեցան Ադրբեջանի եւ Թուրքիայի ԱԳՆ ղեկավարների, ինչպես նաեւ Ադրբեջանի եւ Իրանի նախագահների երկկողմ հանդիպումները: Ադրբեջանական եւ թուրքական կողմերը ցանկանում են ցույց տալ, որ կա հստակ պայմանավորվածություն «միջանցքի» հարցում, ավելին՝ տեղեկատվական սադրանքներով փորձում են տպավորություն ստեղծել, թե իբր իրանական կողմը եւս համաձայն է դրան: Մինչդեռ պաշտոնական Թեհրանը շարունակում է պնդել, որ թույլ չի տալու աշխարհաքաղաքական սահմանների փոփոխություն Հարավային Կովկասում (*): Այն, որ նրանք փորձելու են վերցնել դա ուժային տարբերակով, ինձ համար ակնհայտ է՝ առնվազն դատելով հռետորաբանությունից եւ թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունների ընտրած պայմանական թիրախներից: Ցավում եմ, որ հայկական կողմը շարունակ պնդում է եւ համարում, որ դեմարկացիան ու դելիմիտացիան բերելու են կայունություն կամ խաղաղություն՝ այդպես էլ չհասկանալով, որ ուղղակի թե անուղղակի այդ գործընթացը կապված է Արցախի հարցի հետ: Դա է պատճառը, որ Ադրբեջանը շահագրգռված է սկսել այդ գործընթացը:

**- Մինչեւ հայաստանյան իշխանական արբանյակները ոչ ուղիղ, բայց տարբեր խողովակներով փափուկ բարձ են դնում բոլորիս գլխի տակ, թե Սոչիում Փաշինյանը փակել է «միջանցքի» հարցը, թյուրքալեզու պետությունները Անկարայում նոյեմբերի 12-ին գագաթաժողով են անում ու կարեւորում «Զանգեզուրի միջանցքի» դերը: Ավելին՝ ընդգծում են, որ այն ձեռք բերելու հարցում բոլորը պետք է աջակցեն Ադրբեջանին:**

- Բազմաթիվ առիթներ ունեցել եմ ասելու, որ Ադրբեջանն ու Թուրքիան հստակ գիծ են որդեգրել՝ հարցերը լուծելու են միասնաբար՝ հիմքում դնելով էթնիկ՝ թյուրքական գործոնը: Արցախում եւ Արցախի շուրջ ստատուս քվոյի փոփոխությունից հետո Բաքուն եւ Անկարան անցել են այլ խնդիրների լուծմանը: Որքան բոբիկ պետք է լինել պատմությունից կամ միամիտ աշխարհաքաղաքական հարցերում, որ չտեսնել՝ Արցախից հետո Ադրբեջանի եւ Թուրքիայի համար հաջորդ թիրախը լինելու է Սյունիքը: Այս հարցում նաեւ տեղեկատվական ճիշտ ընտրված քաղաքականությամբ փորձում են ստեղծել տպավորություն, որ կա բացարձակ կոնսենսուս: Ես այդպես չեմ կարծում, բայց հստակ երեւում է, որ Բաքվի եւ Անկարայի կողմից տարվում է շատ համառ եւ նուրբ դիվանագիտական աշխատանք ե՛ւ Մոսկվայի, ե՛ւ Թեհրանի հետ: Ցավոք, այս հարցում մենք ուշանում ենք եւ թերանում:

**- Թե՛ Ադրբեջանը, թե՛ Թուրքիան ակտիվ հանդիպումներ են ունենում տարածաշրջանում ոչ պակաս դերակատարում ունեցող ու միջանցքի առկայությունը կտրականապես մերժող Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավար կազմի հետ: Տպավորություն է, թե ինչ-որ բան են ուզում համոզել Իրանին:**

- Միանշանակ, ինչպես արդեն նշեցի՝ դիվանագիտական հսկայական աշխատանք է տարվում: Իրան-Ադրբեջան վերջին լարվածությունը զգալիորեն մեղմվել է այս պահին, եւ դա նաեւ այդ աշխատանքի արդյունք է: Եթե միայն հետեւեք վերջին մեկ ամսվա կտրվածքով որքան թուրք եւ ադրբեջանցի պաշտոնյա է մեկնել Իրան՝ տարբեր մակարդակներով հանդիպումներ ունենալով, կտեսնեք, թե ինչպես են փորձում իրավիճակը փոխել հօգուտ իրենց:

**- Տեսակետ կա, որ Ադրբեջանը, Թուրքիան կամ տարածաշրջանում դերակատարում ունեցող պրոադրբեջանական քաղաքականության ջատագով այլ պետություն Իրանին կարող են համոզել «ծանր չտանել» Սյունիքում ադրբեջանական միջանցքի առկայությունը՝ փոխարենը պաշտոնական Թեհրանին արտոնություն կամ տարածք տրամադրելով, օրինակ, Սիրիայում:**

- Խնդիրը միայն այսպես կոչված «միջանցքը» չէ, մեկ այլ քննարկման եւ բանակցությունների առարկա է, թե ո՞ր ճանապարհով կամ ավելի ստույգ՝ Հայաստանո՞վ, թե՞ Ադրբեջանով է Իրանը փորձելու դուրս գալ Սեւ ծով: Ադրբեջանական վերջին էսկալացիաների աշխարհագրությունը ցույց է տալիս, որ իրենք փորձում են վերահսկողության տակ առնել Հյուսիս-Հարավ ճանապարհը՝ դրանով խոչընդոտելով, որ ապագայում Հայաստանով Իրանին ելք տրամադրվի դեպի Սեւ ծով: Ցավոք, մինչ բոլորը խոսում են ապաշրջափակման եւ դրա տնտեսական հնարավորությունների մասին, Ադրբեջանը, Թուրքիայի օգնությամբ, շրջափակման եւ իզոլացիայի նոր սցենարներ է մշակում Հայաստանի համար՝ այդ հարցում գնալով ե՛ւ դիվանագիտական, ե՛ւ ուժային ճանապարհներով: Այդուհանդերձ, երկարաժամկետ առումով Իրանի համար եւս լուրջ ռիսկեր կան թուրք-ադրբեջանական ուժեղացող տանդեմին դիմակայելու առումով:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

**) Այս մասին ավելի մանրամասն՝ իրանագետ Գր. Առաքելյանի հոդվածում, էջ 163:*

# Ուղղաթիռի վթարի առթիվ Էրդողանը ցավակցեց Ալիեւին



Նոյեմբերի 30-ին Ադրբեջանի Խըզըի շրջանի «Գարահեյբաթ» ավիացիոն զինափորձարանում ուսումնական թռիչքներ կատարելիս վթարի էր ենթարկվել Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության ռազմական ուղղաթիռ: Վթարի հետեւանքով մահացել էր 14 սպա, 2-ը վիրավորվել, այդ թվում մեկ գնդապետ, փոխգնդապետ, 5 մայոր, բուժծառայության կապիտան, 3 կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, տեխնիկական աշխատող:

Քանի որ հայաստանյան լրատվամիջոցներն արդեն անդրադարձել են միջադեպին, ուստի կրկնությունից խուսափելու համար նշենք, որ վթարի առթիվ Թուրքիայի նախագահ Էրդողանը, պաշտպանության նախարար, գեներալ Հուլուսի Աքարը եւ արտգործնախարար Մեւլութ Չավուշօղլուն, դիմելով ադրբեջանցի գործընկերներին, հայտնել են իրենց ցավակցությունը:

Գալով թուրքական թերթերին, ապա դրանցից «Դունյան» վթարի օրը հրապարակեց մահացների լուսանկարները: Ինչ վերաբերում է ընդդիմադիրներին, ապա նրանց, ըստ երեւույթին, գլխավորապես հետաքրքրում էր տնտեսա-ֆինանսական ճգնաժամի պատճառով հուսահատության մատնված ժողովրդական զանգվածների անելանելի վիճակը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Թե չէ քայլում եք, քայլում եք, քայլում...

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը քաղաքական տարբեր ուժեր պահանջել սկսել են դեռեւս նրա պաշտոնավարումից մեկ տարի անց: Առաջինը 2018-ի քաղաքական վերադասավորումներից հետո կարճ ժամանակ Փաշինյանի կաբինետի մաս կազմած Դաշնակցությունն էր, որ դժգոհում էր Փաշինյանի տնտեսական ու սոցիալական քաղաքականությունից: ՀՅԴ-ի` Ազատության հրապարակում նախաձեռնած ու անցկացրած հանրահավաքի տրամաբանական շարունակությունը դաշնակցական երիտասարդների նախաձեռնած «Ահազանգ» շարժումն էր: Նոր սերնդի դաշնակցականները եկամտահարկի համահարթեցման, բուհերում հայագիտական առարկաների դասաժամերի կրճատման մասին էին ահազանգ հնչեցնում:

Փաշինյանի հրաժարականի պահանջով մարդիկ փողոց դուրս եկան մեկ էլ 44-օրյա պատերազմից ` նոյեմբերի 9-ի չարաբաստիկ հայտարարությունից հետո: 17 ուժերից կազմված «Հայրենիքի փրկության» շարժումը սակայն ոչ միայն վարչապետի հրաժարականին, այլ նաեւ խորհրդարանական արտահերթ ընտրություններին հասնել չկարողացավ: Խորհրդարանական արտահերթ ընտրությունների մասին ԱԺ ընդդիմության` «Լուսավոր Հայաստանի» եւ «Բարգավաճ Հայաստանի» առաջնորդների ու Նիկոլ Փաշինյանի բանակցություններից հետո հայտարարվեց:

2021-ի հունիսի 20-ի ընտրություններից հետո «Հայաստան» խմբակցությունն, ի դեմս ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, նորից պահանջում է Փաշինյանի հրաժարականը: Նույն պահանջով նաեւ Կարին Տոնոյանի գլխավորած «5165» շարժումն ու ինքնաբուխ կերպով ստեղծված «Ազատագրական շարժումն» են հանդես գալիս:

2018-ին Նիկոլ Փաշինյանի կիրառած նույն մեթոդներով ու լոզունգներով` ընդդիմադիրները փորձում են հանրային դժգոհության ալիք բարձրացնել: Առավոտյան ու երեկոյան ժամերին մի քանի րոպեով ճանապարհ են փակում, մետրոյում իրազեկման ակցիաներ իրականացնում, թռուցքիներ բաժանում ու, Փաշինյանի ասած, «քայլում են, քայլում են, քայլում են»:

Տպավորություն է, թե քաղաքական ուժերից ամեն մեկը քաղաքամայր Երեւանում զբոսանք անցկացնելու սեփական «տուրն» է մշակել ու այն պարտադրում է քաղաքացիներին: Ընդդիմության` խզված ձայնով, չսափրված, անձրեւաջրերից կեղտոտված կոշիկներով ներկայացուցիչներն ասես Փաշինյանին լավագույնս կրկնօրինակելու մրցույթի են մասնակցում, ինչի հաղթողը միայն կկարողանա վաստակել վարչապետի պաշտոնի հաղթական դափնին: Հանրության հայտնի տեխնոլոգիաները սակայն, դժվար թե, կարողանաս երկրորդ անգամ բանեցնել: Մարդիկ եթե անգամ աչքերը փակ քայլերթ իրականացնեն ու «Նիկոլ հեռացիր» վանկարկեն միաբերան, համընկնող հանգերով, ապա այդ ամենից Փաշինյանը ո՛չ հուզվելու, ո՛չ էլ, առավել եւս, հրաժարական է տալու:

44-օրյա պատերազմից հետո, կարելի է ասել, ամեն 2-րդ քաղաքական ուժը, «ձեռի հետ, ոտի վրա», պահանջում է Փաշինյանի հրաժարականը: Ցավոք, դրան հասնելու ճանապարհային քարտեզը չունեն հաճախ, իսկ քաղաքացիներին իրենց շուրջը համախմբել չկարողանալը «մարդիկ թմբիրից դուրս չեն գալիս» արտահայտությամբ են արդարացնում: Այնինչ պետք է գիտակցել, որ բոլոր գործողություններից զատ նախեւառաջ քայլերի հստակ հաջորդականություն, ապա նոր քայլել է պետք:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# «Թռչել երազող տղան»

***«Եթե մուլտերում կարող էին հերոսները անձրեւանոցով թռչել, ես էլ կարող էի, չէ՞». ահա, այսպես էր իր մանկական քայլը բացատրում փոքր տարիքում անձրեւանոցով թչելու փորձ կատարած անմահ հերոսը` Վահեն, որը Հոկտեմբերի 29-ին կդառնար 20 տարեկան:***



Վահեն Ապարանից էր` ծնվել, մեծացել եւ հասակ էր առել Ապարանից ոչ հեռու Վարդենիս գյուղում, հերոսի ընտանիքում: Հայրը` Ներսես Աղաբաբյանը մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին, որտեղ էլ նրան կնքել են Ռեմբո մականվամբ, Արցախյան երկրորդ պատերազմին եւս մեկնել է ռազմի դաշտ` որդուն միայնակ չթողնելու համար, վերջինս էլ իր կյանքն է տվել հանուն հայրենիքի:

Գյուղում իր հասակակիցներից ամենաբարձրահասակն ու թիկնեղն էր Վահեն, բայց եւ ամենաերազկոտն ու մաքրահոգի երիտասարդը, որը թերեւս հավատում էր հեքիաթային հրաշքներին ու մարդկային բարությանը: Փոքրուց սիրել է մուլտֆիլմեր, որոնցից սկավառակներից հավաքել է մի ողջ ալբոմ: Դպրոցում լավ է սովորել, եղել է պարտաճանաչ ու հարգալից իր ուսուցիչների նկատմամբ: Վահեի երազանքն էր` ծրագրավորող դառնալ. մինչեւ բանակ մեկնելը Պոլիտեխնիկական համալսարանում քննություն էր հանձնել եւ ընդունվել:

**«Ընկերներական շղթայում միշտ եղել է անկեղծ ու պարզ օղակը, առանց որի շղթան հիմա ամուր եւ լիարժեք չէ»,- ասում են ընկերները:**

Ընկերներից Վարսիկը հիշում ու բնութագրում է.

**«Վահեն երբեւէ ճանաչածս ազնվագույն մարդն էր: Մենք միասին ենք ստեղծել մեր մանկությունը: Վահեն մեր մանկությունն էր, իսկ այժմ մեզ առաջ տանող ճանապարհը: Գիտեմ, որ ճանապարհիս վերջում կգրկեմ նրան եւ շնորհակալություն կհայտնեմ...»:**

Բանակում օրինակելի եւ կարգապահ զինվոր էր մեր հերոսը: Մեկ տարին դեռ չէր լրացել, որ զորակոչվել էր եւ սկսվեց արցախյան 2-րդ պատերազմը: Հոկտեմբերի 5-ին իր ընկերների հետ միացել է Ջրականի մարտերին, որտեղ էլ վիրավորվել եւ հոկտեմբերի 13-ին բռնել հավերժության ճանապարհը:

Հերոսի վերջին խոսքերն են եղել.

**«Լավանամ, հասնեմ տղերքին...»**

Վահեն հայրենիքը կյանքից բարձր դասելով` նահատակվեց հանուն հայ ազգի, հանուն անկախ հայրենիքի` դասվելով անմահների շարքին:

Շնորհավոր երկնային 20 ամյակդ, հերոս...

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՈՀԱՐ
ՀՊՄՀ-ի Լրագրության բաժնի
4-րդ կուրսի ուսանողուհի

# Բլինկենը` Հայաստանի ու Ադրբեջանի կառավարություններին

Միացյալ Նահանգների պետքարտուղար Էնթոնի Բլինկենը դեկտեմբերի 2-ին Ստոկհոլմում, ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի հանդիպմանն ասել է.

«Միացյալ Նահանգները ողջունում է Հայաստանի եւ Ադրբեջանի կառավարությունների միջեւ ուղիղ երկխոսության վերականգնումը: Մենք հորդորում ենք նրանց առաջընթաց գրանցել մարդասիրական, այդ թվում` գերիների, ականազերծման, անհետ կորածների հարցերում, հետապնդելով մարդու իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի ենթադրյալ խախտումները` պատասխանատվության ենթարկելով մեղավորներին: Ես հուսով եմ, որ մենք բոլորս, այդ թվում Ռուսաստանը, կարող ենք աշխատել միասին, որպեսզի առաջընթացը շարունակական լինի:Մենք կոչ ենք անում կողմերին` լուծելու կարեւոր հարցերը, որոնք են սահմանների դելիմիտացիան ու դեմարկացիան, տնտեսական ու տրանսպորտային կապերի վերականգնումը,շարունակելով Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո աշխատանքը` հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության տեւական ու խաղաղ լուծման»:

Մ.Խ.

## Ցավակցություն

Թեհրանում 29.11.2021թ. վախճանվեց Հայաստանի ժողովրդական շարժում ՀԿ-ի նախագահ Վազգեն Պետրոսյանի սիրելի հայրիկը`

**Սերոբ Պետրոսյանը,**

որի կապակցությամբ ցավակցում ենք նրան ու բոլոր մյուս մերձավորներին:

***ՌՈՄԵՆ ԿՈԶՄՈՅԱՆ***
*եւ ընկերներ*

*«**Ազգ**»ի խմբագրությունը միացնում է իր ցավակցությունները:*

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան Լ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան 0010, Եզնիկ Կողբացի 20/3
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը`*
«Ազգ» թերթի

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960
20/3 Yeznik Koghbatsi st.,
Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը` 286.110.1041780, տրուած` 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 1.12.2021, գինը` 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: